



eLCA.com



eIFL.net

eIFL-IP

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ.

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Ձեռնարկ գրադարանների համար հեղինակային
իրավունքի և առնչվող խնդիրների մասին

eIFL-IP

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Ձեռնարկ գրադարանների համար հեղինակային
իրավունքի և առնչվող խնդիրների մասին

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ

Երևան 2012

Սույն ձեռնարկի հրատարակությունն իրականացվել է «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար (EIFL)» միջազգային հասարակական կազմակերպության ֆինանսական աջակցությամբ՝ «Առաջարկություն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ» ծրագրի շրջանակում:

eIFL-IP

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Ձեռնարկ գրադարանների համար հեղինակային իրավունքի և առնչվող խնդիրների մասին

Թարգմանիչ՝ Հասմիկ Գալստյան
eIFL-IP կոորդինատոր

Խմբագիր՝ Սոնյա Վարդանյան

Համակարգչային ձևավորումը և սրբագրումը՝ Լիլիթ Բաղդասարյանի

ISBN 978-9939-52-579-2

© Հասմիկ Գալստյան, 2009

Բոլոր իրավունքները պահպանվում են: Արգելվում է առևտրային նպատակով ցանկացած մասի վերատպությունը կամ այլ օգտագործումը առանց իրավաստիրոջ գրավոր թույլտվության:

eIFL-IP

ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՍՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ

Սույն ձեռնարկը գրադարանավարների և տեղեկատվական մասնագետների համար տեսական և գործնական ուղեցույց է՝ հասկանալու հեղինակային իրավունքը, լուծելու առնչվող խնդիրները գրադարաններում և հնարավորինս խուսափելու իրավախախտումներից:

Յուրաքանչյուր թեմա շարադրված է մանրամասնորեն, ընդգծված են գրադարաններին առնչվող հիմնական խնդիրներն ու գործառույթները, նշված են բազմաթիվ օգտակար հղումներ լրացուցիչ ընթերցանության համար: Ձեռնարկի առանձնահատուկ կարևորությունն այն է, որ համալրված է միջազգային համաձայնագրերին և կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին օգտակար տեղեկատվությամբ, ինչպես նաև «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի համապատասխան հղումներով:

Ձեռնարկն օգտակար կլինի նաև ընթերցասեր լայն հանրությանը, ովքեր հետաքրքրված են մտավոր սեփականության խնդիրներով:

Հասմիկ Գալստյան

Հայաստանի Ամերիկյան Համալսարան, Փափազյանի անվան գրադարան,
Սպասարկման և տեղեկատվության բաժնի վարիչ

Բովանդակություն

Ներածություն	7
Հեղինակային իրավունքի մասին և Պայմանագրի մասին օրենքների փոխհարաբերությունը. Էլեկտրոնային ռեսուրսներ և գրադարանային կոնսոլիդացում.....	9
Պաշտպանության տեխնիկական միջոցներ. «Եռակի փական».....	133
Հեղինակային իրավունք, պահպանության ժամկետը և հանրության սեփականությունը.....	177
Հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները.....	222
Ավանդադրում	29
Անհայտ հեղինակի ստեղծագործություններ («Որբ» ստեղծագործություններ).....	35
Գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարում	41
Փոխատվության իրավունք	47
Տվյալների բազա պատրաստողի իրավունքները - Եվրոպայի փորձը.....	51
Creative Commons. Բաց բովանդակությամբ լիցենզիաներ.....	56
Գիտական ստեղծագործությունների բաց մատչելիություն	60
Հեղինակային իրավունքն ու առևտրի համաձայնագրերը.....	68
Միջազգային քաղաքականության մշակում. ՄՍՀԿ Չարգացման ծրագիրը	73
Ազգային քաղաքականության մշակում. Հեղինակային իրավունքի վերաբերյալ արդար օրենքների խթանում.....	80

eIFL-IP

Գիտելիքի հասանելիության խթանում. Հեղինակային իրավունքը և գրադարանները

eIFL-IP (Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար-Մտավոր սեփականություն) **eIFL.net** ծրագրերից մեկն է: Այս ծրագրի նպատակն է աջակցել զարգացող և անցումային շրջանի երկրների գրադարաններին՝ պաշտպանելու իրենց շահերը հեղինակային իրավունքի հետ առնչվող խնդիրներ ունենալիս:

eIFL-IP-ն ստեղծում է հեղինակային իրավունքին քաջատեղյակ գրադարանավարների միասնական ցանց, eIFL.net-ի մեջ ընդգրկված գործունակ գրադարանային հանրություն 48 զարգացող երկրներում՝ կարողունակ պայքարելու հանուն ազգային և միջազգային հեղինակային իրավունքի մասին օրենքների մեջ փոփոխություններ կատարելուն:

Այս ծրագրի տեսլականն այն է, որ գրադարանավարները դառնան հեղինակային իրավունքի մասին օրենքների արդար և հավասարակշռված կիրառման ակտիվիստներ, ինչպես նաև համայնքի առաջնորդներ լինեն գիտելիքի մատչելիության ապահովման գործընթացում, հատկապես թվային դարաշրջանում:

eIFL.net-ի անդամ երկրներն են Ալբանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Բելոռուսիան, Բոսնիա Հերցեգովինան, Բոտսվանան, Բուլղարիան, Կամբոջան, Կամերոնը, Չինաստանը, Խորվաթիան, Եգիպտոսը, Էստոնիան, Վրաստանը, Գանան, Իրանը, Հորդանանը, Ղազախստանը, Կոսովոն, Ղրղզստանը, Լաոսը, Լատվիան, Լեսոտոն, Լիտվան, Մակեդոնիան, Մալավին, Մալին, Մոլդովան, Մոնտենեգրոն, Մոնղոլիան, Մոզամբիկը, Նիգերիան, Պաղեստինը (Արևմտյան Ափ և Գազայի Հատված), Լեհաստանը, Ռուսաստանը, Սենեգալը, Սերբիան, Սլովակիան, Սլովենիան, Հարավային Աֆրիկան, Մուդանը, Սվազիլենդը, Սիրիան, Տաջիկստանը, Ուգանդան, Ուկրաինան, Ուզբեկստանը, Չամբիան, Չիմբաբվեն:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.eifl.net կայքը:

Այլ մեկնաբանություններ

Եթե ձեռնարկի վերաբերյալ ունեք որևէ մեկնաբանություն կամ կարծիք, ուրախ կլինենք լսել այն: Եթե կան այլ թեմաներ կամ տեղեկություններ գրադարանների դիրքորոշման կամ գործունեության մասին՝ զարգացող կամ անցումային շրջանի երկրների զարգացման հեռանկարների վերաբերյալ, խնդրում ենք դիմել Թերեզա Հաքեթին teresa.hackett@eifl.net

Թարգմանություններ

Բոլոր ընթերցողներին քաջալերում ենք թարգմանել իրենց մայրենի լեզվով այս ձեռնարկն ամբողջությամբ, կամ ձեռնարկի որոշ գլուխներ և տարածել այն գրադարանային հանրության շրջանում: Ձեռնարկի առցանց անգլերեն տարբերակը և արաբերեն, հայերեն, լեհերեն և ռուսերեն թարգմանությունները մատչելի են հետևյալ կայքէջում: www.eifl.net

Լիցենզավորված է Creative Commons Attribution-NonCommercial ShareAlike 2.0 լիցենզիայով:

Ծանոթագրություն

Այս ձեռնարկի հայերեն տարբերակը մատչելի է նաև ստորև նշված կայքէջերի վրա.

1. ՀԷԳԿ (Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում)

<http://www.elca.am>

2. eIFL(Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար)

<http://www.eifl.net/eifl-handbook-copyright-and-related-issues>

Ներածություն

Մենք ապրում ենք գիտելիքահենք հասարակությունում: Գիտելիքն ուժ է տալիս մարդկանց իրենց ամենօրյա կյանքում և դյուրին դարձնում դեմոկրատական հասարակության լավ կառավարումն ու զարգացումը: Ճանաչելով իրենց օրինական քաղաքացիական իրավունքները, քաջատեղյակ լինելով իրենց առողջական վիճակի, ճանապարհորդությունների, եղանակի տեսության, ազատ ժամանցի կազմակերպման մասին, մարդիկ կարող են ավելի վստահ գործել, դեկավարել և որոշումներ իրականացնել: Այս հանգամանքը կնպաստի նորարարության, ստեղծագործական մտքի և մրցակցային տնտեսության զարգացմանը:

Գրադարանները մշակում են, համալրում և պահպանում տարբեր բնույթի տեղեկատվություն, գիտական, կրթական և մշակութային ռեսուրսներ՝ այսօր և ապագայում գրադարանի ընթերցողներին և հասարակության լայն շրջաններին դրանք հասանելի դարձնելու նպատակով:

Տեղեկատվական տեխնոլոգիաները գրադարաններին հնարավորություն են տվել բարելավել և զարգացնել իրենց ծառայությունները և սպասարկել հասարակությանը նոր ձևերով: Շտեմարանները, որ նախկինում մատչելի էին միայն գրադարաններ այցելելով, այժմ հասանելի են նաև էլեկտրոնային տարբերակով: Այս եղանակով գիտնականների և ուսանողների համար ապահովվում է մուտք դեպի համաշխարհային տեղեկատվական և հետազոտական շտեմարաններ: Թվայնացնելով իրենց հավաքածուները՝ գրադարաններն իրենց մշակութային գանձերը հասանելի են դարձնում ողջ աշխարհին:

Դժվար հաղթահարելի են գիտելիքի հասանելիության արգելքները հատկապես զարգացող և անցումային շրջանի երկրներում:

Ֆինանսական, տեխնոլոգիական և իրավական «պատնեշները» արգելք են գիտելիքահենք հասարակության ձևավորման համար:

Այս ձեռնարկը գործնական ուղեցույց է բոլոր այն թեմատիկ իրավական հարցերի վերաբերյալ, որոնք կարող են խոչընդոտել գրադարանների տեղեկատվական աշխատանքը արագ զարգացող թվային միջավայրում: Ձեռնարկում ներկայացված խնդիրները ցույց են տալիս, թե ինչ բարդ միջավայրում են աշխատում թվային գրադարանների գրադարանավարները: Գրադարանավարները պետք է որոշ գիտելիքներ ունենան իրենց հետ առնչվող հիմնական ոլորտների վերաբերյալ, որպեսզի գրադարանային հանրությունը կարողանա պաշտպանել իր դիրքերը և շարունակի իրականացնել իր առաքելությունը թվային դարաշրջանում: Ձեռնարկի յուրաքանչյուր թեմա նկարագրված է մանրամասնորեն, ընդգծված են գրադարանների հետ առնչվող հիմնական խնդիրներն ու գործառույթները և տրված են օգտակար ինտերնետային կայքերի հղումներ գրադարանի գործառույթների մասին՝ լրացուցիչ ընթերցանության համար:

eIFL.net-ը երախտապարտ է օգտակար խորհուրդների համար հետևյալ մարդկանց. Հարալդ վոն Հելմկրոն (Harald von Hielmcrone) Դանիա, Դիք Կաուոյա (Dick Kawooya), eIFL.-IP Ուգանդա, Յան Կովասիկ (Jan Kovacic) Սլովակիա և Մելիսսա Հեյջման (Melissa Hagemann) ԱՄՆ «Գիտական աշխատությունների բաց մատչելիություն» բաժինը խմբագրելու համար: Խմբագրական այլ թերությունների, բացթողումների կամ սխալների համար պատասխանատվությունն իր վրա է վերցնում eIFL.net-ը:

Հուսով ենք, ձեռնարկն օգտակար կլինի ձեզ համար: Եթե այո, խնդրում ենք փոխանցել այն այլ անձանց, թարգմանել և դրա հիման վրա գրել նմանատիպ ձեռնարկներ:

Թերեզա Հաքեթ (Teresa Hackett)

Դեկտեմբեր, 2006

Լրացում

Տվյալ ձեռնարկը համալրվել է «Հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները», «Ավանդադրում» նոր բաժիններով: Լրացվել են «Անհայտ հեղինակի ստեղծագործություններ», «Գիտական ստեղծագործությունների բաց մատչելիություն» և «Միջազգային ռազմավարության մշակում. ՄՄՀԿ Զարգացման ծրագիրը» բաժինները: Շնորհակալություն ենք հայտնում Բարբարա Ստրատոնին, Իրինա Կուչմային (Ուկրաինա), Մելիսսա Հեյջմանին (ԱՄՆ) «Բաց մատչելիություն» բաժինը խմբագրելու համար:

Հոկտեմբեր 2009

<p>Հովանավորված է «Տեղեկատվություն բոլորի համար» UNESCO –ի միջկառավարական ծրագրի կողմից</p>

Հեղինակային իրավունքի և Պայմանագրի մասին օրենքների փոխհարաբերությունը. Էլեկտրոնային ռեսուրսներ և գրադարանային կոնստրուկցիոն

Հեղինակային իրավունքի մասին Օրենքը և Պայմանագրի մասին Օրենքը

Օրենքը իրավաբանորեն հարկադրելի հասարակական կանոնների, նորմերի ամբողջություն է, որով ղեկավարվում է հասարակությունը: Երբ օրենքներ են ընդունվում, դրանք սովորաբար քննարկվում են օրենսդիր մարմինների կողմից, որը և շահագրգիռ կողմերին իրենց տեսակետներն արտահայտելու հնարավորություն է ընձեռում: Հեղինակային իրավունքի մասին օրենքը պետք է արտացոլի իրավատերերի և հեղինակային իրավունքով պահպանված նյութերն օգտագործողների, այն է՝ անհատների և գրադարանների միջև հավասարակշռությունը: Որպես այդպիսին, օրենքները կարող են պարունակել հատուկ դրույթներ, որոնք թույլ կտան գրադարաններին իրականացնել նյութերի պահպանման աշխատանքներ կամ ապահովել գրադարանի հավաքածուների բարեխիղճ օգտագործումը: Տպագիր նյութերի, ինչպիսիք են գրքերի, ամսագրերի, պամֆլետների և այլ նյութերի օգտագործումը, սովորաբար կարգավորվում է հեղինակային իրավունքի մասին օրենքով: Այսինքն գրադարանը գիրք գնելիս արդեն գիտի, որ այդ նյութն օգտագործելիս կիրառվում են հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքի համապատասխան դրույթները: Պայմանագիրը, մյուս կողմից, մասնավոր օրինական պարտադրող համաձայնագիր է երկու կողմերի միջև, որոնք կարող են ազատ բանակցել պայմանագրի ժամկետի և պայմանների շուրջ: Լիցենզիան, որը հիմնականում կարգավորվում է պայմանագրի մասին օրենքով, պաշտոնական լիազորություն է տալիս անել այն, ինչը հնարավոր չէ անել առանց լիցենզիայի: Լիցենզիաները լայն օգտագործում գտան այնպիսի էլեկտրոնային նյութերի հասանելիությունն ու օգտագործումը վերահսկելու նպատակով, ինչպիսիք են՝ համակարգչային ծրագրերը, համակարգչային խաղերը, առցանց ֆիլմերը, երաժշտությունն ու տվյալների բազաները: Սա նշանակում է, որ էլեկտրոնային նյութերի մեծ մասը գրադարանների կողմից ձեռք է բերվում լիցենզիաների հիման վրա:

Կան տարբեր տեսակի լիցենզիաներ: **«Shrink-wrap»** տեսակի լիցենզիան սովորաբար օգտագործվում է պատրաստի ապրանքներ, օր. համակարգչային ծրագրեր, լազերային կամ թվային սկավառակի վրա գրված խաղեր ձեռք բերելու ժամանակ: **«Click-wrap»** տեսակի լիցենզիան նույնպես նախատեսված է օգտագործողի համար, բայց վեբկայքից ներբեռնված նյութերի օգտագործման ժամանակ է այն կիրառվում, երբ լիցենզիայի պայմաններն ընդունվում են օգտագործողի կողմից՝ պարզապես կատարելով «click to accept» (ընդունել պայմանները) գործողությունը: Վերը նշված երկու տեսակի լիցենզիաներն էլ ոչ-բանակցելի են, այսինքն՝ օգտագործողը տվյալ նյութը հասանելի դարձնելու համար պետք է ընդունի իրավատիրոջ կողմից առաջարկված պայմանները: (Իր հերթին, հնարավոր են օգտագործողի իրավունքները պաշտպանելու վերաբերյալ օրենքով հաստատված համապատասխան դրույթներ այն դեպքում, երբ օգտագործողը համաձայնվել է լիցենզիայի անարդար պայմաններին):

Գրադարանը իր մեծածավալ տպագիր հավաքածուներում կարող է ունենալ նաև էլեկտրոնային արտադրանք. գրադարանի էլեկտրոնային ռեսուրսների մեծ մասը տվյալների բազաների հավաքածուներ են, ամսագրեր, գրքեր, թերթեր և այլ նյութեր, որոնք հիմնականում գնվել են իրավատերերից (շատ հաճախ դրանք հրատարակիչներն են) լիցենզիային պայմանագրերի հիման վրա: Իրավատերերը սովորաբար ուղարկում են իրենց ստանդարտ լիցենզիաները գրադարանավարին: Ի տարբերություն արդեն գրադարանում առկա նյութերի, կարևոր է նշել, որ լիցենզիան հրատարակչի **«իրավերն է»**՝ բանակցելու տվյալ ստեղծագործության օգտագործման պայմանների շուրջ:

Գրադարանավարը պետք է ուշադրությամբ ծանոթանա լիցենզիայի բովանդակությանը, կատարի իրեն անհրաժեշտ փոփոխությունները և նոր տարբերակը ետ վերադարձնի հրատարակչին: Այլ կերպ ասած՝ գրադարանավարը պետք է լիցենզիայի շուրջ բանակցություններ վարի հրատարակչի հետ: Սա դյուրին գործընթաց չէ, բայց անհրաժեշտ քայլ է, որովհետև անտեսելով կամ չհասկանալով լիցենզիայի պայմանները՝ գրադարանը չի ազատվում հետագա պատասխանատվությունից:

Պրակտիկան

Էլեկտրոնային նյութերն օգտագործելու համար կնքված լիցենզիաները նոր խնդիրներ են առաջացնում գրադարանների համար.

1. Պայմանագրի մասին օրենքը գերակայող է հեղինակային իրավունքի մասին օրենքի նկատմամբ և գրադարանը՝ համաձայնվելով լիցենզիայի պայմաններին, այլևս փոփոխություններ չի կարող կատարել՝ անկախ նրանից, թե հեղինակային իրավունքի մասին օրենքում ինչ է ասվում:
2. Լիցենզային պայմանագիր կնքող կողմերը, այս դեպքում՝ գրադարանը և հրատարակիչը, ազատ կարող են բանակցել լիցենզիայի պայմանների շուրջ: Սա նշանակում է, որ գրադարանը կարող է բանակցել ի օգուտ առավել ազատ օգտագործման, քան թույլատրված է հեղինակային իրավունքի մասին օրենքով, կամ, ընդհակառակը, հրաժարվել հեղինակային իրավունքի մասին օրենքում ամրագրված իրենց օրինական իրավունքներից:
3. «Պայմանագրի ազատության» սկզբունքը, այնուամենայնիվ, գրադարաններին լուրջ փաստի առաջ է կանգնեցնում: Նախ, բանակցող կողմերը անհավասար դիրքում են հայտնվում, որովհետև հրատարակիչը ունի բացառիկ իրավունքներ ստեղծագործության նկատմամբ: Հրատարակիչները, հատկապես արտերկրացիները, կարող են վարձել իրավաբաններ՝ գրագետ լիցենզիաներ կազմելու համար, որոնք հաճախ գրվում են օտար լեզվով և մասնագիտական տերմիններով: Սովորաբար լիցենզիան կազմվում է այն երկրի օրենքների հիման վրա, որտեղ բնակվում է հրատարակիչը, այլ ոչ թե այն երկրի, որտեղ տեղակայված են գրադարանները:
4. Տպագիր նյութերը մատչելի են գրադարանի և գրադարանից օգտվողների համար առանց սահմանափակումների: Չկան իրավատիրոջ կողմից սահմանափակումներ գրադարանում տպագիր նյութերը պահելու ժամանակահատվածի կամ գիրքն ընթերցելու վայրի վերաբերյալ: Եթե գրադարանը դադարեցնում է ամսագրի հետագա համարների բաժանորդագրությունը, ապա կարող է նախորդ համարները պահպանել հետագա սպասարկման համար: Ի տարբերություն տպագիր նյութերի, լիցենզիան ապահովում է էլեկտրոնային նյութերի մատչելիությունը լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածի և պայմանների համաձայն: Սա նշանակում է, որ գրադարանը պետք է բանակցություններ վարի տվյալ նյութի օգտագործման բոլոր ձևերի համար:

Ըստ գրադարաններից ստացված արձագանքների, վերջիններս կողմնակից են համագործակցության՝ գրադարանային կոնսորցիումներ ստեղծելու, իրենց համար առավել շահավետ բանակցություններ վարելու, գիտական ռեսուրսներն ու կատարված ծախսերը կիսելու նպատակով: Էլեկտրոնային նյութերի օգտագործման պայմանների ու գնի վերաբերյալ բանակցությունների հետ միասին շատ երկրներում գրադարանային կոնսորցիումները իրականացնում են այնպիսի ծրագրեր և մատուցում ծառայություններ, ինչպիսիք են՝ ուսուցողական դասընթացները, էլեկտրոնային պորտալներն ու ժամանակակից թվային գրադարանների կառավարումը: 1990-ական թվականներին ինտերնետի միջոցով թվային նյութերի մատչելիության աճող քանակը նպաստեց «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» միջազգային կոնսորցիումի (eIFL.net) ստեղծմանը, որպեսզի նրա միջոցով շահավետ լիցենզիաներ կնքվեն հրատարակիչների հետ, ինչպես նաև զարգացող և անցումային շրջանի երկրներում ստեղծվեն ու

գարգանան գրադարանային կոնսորցիումներ: Կոնսորցիումը կարող է լինել ազգային, օր., Ազգային էլեկտրոնային տեղեկատվական կոնսորցիում Ռուսաստանում (NEICON), շրջանային, օր. NELINET, Միացյալ Նահանգների ցանց, կամ կոնսորցիումները կարող են միավորել նմանատիպ գրադարաններ, ինչպիսիք են ակադեմիականները, օր. Հարավ Աֆրիկյան գրադարանային կոնսորցիումների կոալիցիա (COSALC):

Այս նախաձեռնության նվաճումներից մեկը օրինակելի լիցենզիաների ստեղծումն էր, որոնք պարունակում են գրադարանային կոնսորցիումի համար ընդունելի պայմանագրային կետեր: Որոշ օրինակելի լիցենզիաներ կազմվել են հրատարակիչների և գրադարանավարների հետ համատեղ՝ հեշտացնելով բանակցության գործընթացը:

Կան տարբեր հաստատությունների համար մշակված օրինակելի լիցենզիաներ, օր. բուհեր, ակադեմիական կոնսորցիումներ, հանրային կամ մասնագիտական գրադարաններ: Այս լիցենզիաների մեծ մասը մատչելի է առցանց ռեժիմով և խորհուրդ է տրվում ցանկացած բանակցություն սկսել հենց այս տեսակի լիցենզիաներով:

Գրադարանների առնչվող խնդիրները

Գրադարանավարի պարտականությունն է համոզված լինել, որ լիցենզային պայմանագիրը պարունակում է գրադարանի պահանջները բավարարող բոլոր կետերը, ներառում է բոլոր օգտվողներին, լինի նա կոնսորցիումի անդամ, թե կոնսորցիումի միջոցով տվյալ ռեսուրսներից օգտվող անձ: Գրադարանը պետք է հասկանա նաև իր պարտականությունները, որոնք, իհարկե, հնարավոր կլինի կատարել լիցենզիայով ամրագրված պայմանների համաձայն:

- Գրադարանը պետք է համոզված լինի, որ իր ընթերցողների համար նյութերի առավելագույն մատչելիություն է ապահովում, և միննույն ժամանակ արդարացնում է իր հովանավորների կողմից կատարված ծախսերը:
- Գրադարանը պետք է համոզված լինի, որ իր կողմից ստորագրված լիցենզիայի բոլոր կետերը հասկանալի են իրեն և ինքն էլ պարտավորվում է կատարել բոլոր կետերը: Անհասկանալի հարցերի դեպքում անպայման դիմել մասնագետին:
- Գրադարանը նպատակահարմար պետք է համարի անդամակցել կոնսորցիումին, կամ ստեղծել կոնսորցիում ինչպես հաջող բանակցություններ վարելու, այնպես էլ սեմինարների, էլեկտրոնային ռեսուրսների կառավարման ու ֆինանսական միջոցների հայթայթման համար:

Այսպիսով, գրադարանը պետք է խուսափի այն լիցենզիայից, որը

- չի ղեկավարվում այն երկրի օրենքներով և դատական համակարգով, որտեղ գտնվում է գրադարանը,
- չի ընդունում տվյալ նյութն օգտագործելու համար հեղինակային իրավունքի մասին օրենքով նախատեսված իրավունքները,
- չի ապահովում լիցենզիայի հիման վրա վճարված նյութերի մշտական հասանելիություն,
- չի ընդգրկում մտավոր սեփականության իրավունքների և վնասի հատուցման երաշխիք,
- գրադարանին է պարտադրում պատասխանատու լինել օրինական օգտագործողի կողմից յուրաքանչյուր խախտման համար,
- ընդգրկում է լիցենզիան չդադարեցնելու մասին պայման,
- ընդգրկում է չբացահայտելու, այսինքն՝ լիցենզիայի բովանդակության գաղտնիության ապահովման մասին պայման,
- ընդգրկում է հրատարակչի պարտականությունների վերաբերյալ խելամիտ և լավագույն ջանքերի մասին դրույթներ,

- պարունակում է կասկածելի, ոչ հստակ ժամանակահատվածներ,
- չի ներառում լիցենզիայի համար վճարը, որը պարտադիր պայման է:

Օգտագործված գրականություն: “Licensing digital resources: How to avoid legal pitfalls» «Թվային ռեսուրսների լիցենզավորումը. Ինչպես խուսափել իրավական ծուղակներից»

<http://www.eblida.org/ecup/docs/licensing.htm>

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

EBLIDA Position on User Rights in Electronic Documents (1998)

<http://www.eblida.org/ecup/docs/policy21.htm>

ICOLC Statement of Current Perspective and Preferred Practices for the Selection and Purchase of Electronic Information (1998)

<http://www.library.yale.edu/consortia/statement.html>

IFLA Licensing Principles (2001)

<http://www.ifla.org/V/ebpb/copy.htm>

Օրինակելի լիցենզիաներ և ռեսուրսներ

eIFL.net model licenses

http://www.eifl.net/services/services_model.html

eIFL.net resources for consortium building

http://www.eifl.net/resources/resources_consortortium.html

Liblicense Standard Licensing Agreement

<http://www.library.yale.edu/~license/modic.shtml>

UK JISC model license

<http://www.jisc-collections.ac.uk>

Model standard licenses for use by publishers, librarians and subscription agents

<http://www.licensingmodels.com/>

Ծանոթագրություն:

- **Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»** ընդունվել է 2006 թ. հունիսին
<http://www.aipa.am>
<http://www.parliament.am>
- **2003թ. Հիմնարար գիտական գրադարանի (ՀԳԳ)** նախաձեռնությամբ հիմնվել է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումը (ՀԷԳԿ): ՀԷԳԿ-ին անդամակցող բազմաթիվ գրադարանների և ինստիտուտների համար հասանելի են հարուստ էլեկտրոնային շտեմարանները, որոնք պարունակում են խմբագրված գիտական ստեղծագործություններ արտասահմանյան գիտական ամսագրերից: ՀԷԳԿ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <http://www.elca.am> կայքը:
- **ՀԷԳԿ-ն անդամակցում է eIFL-ին 2001թ.**

**Պաշտպանության տեխնիկական միջոցներ.
«Եռակի փական»**

Ինչ է պաշտպանության տեխնիկական միջոցը

Պաշտպանության տեխնիկական միջոցը (ՊՏՄ) թվային բովանդակության մատչելիությունն ու օգտագործումը տեխնիկական միջոցներով, այսինքն՝ սարքերով կամ համակարգչային ծրագրերով կամ երկուսի կիրառմամբ վերահսկող մեխանիզմ է:

ՊՏՄ-ի օգտագործման նպատակը հիմնականում պատճենման արգելումն է: ՊՏՄ-ները կարող են գործել տարբեր դեպքերում, օր. DVD նվագարկիչի վրա. արտերկրից գնված DVD-ն չի աշխատի, որովհետև այն ունի այլ երկրի կոդ, կամ հնարավոր չի լինի օրինական ճանապարհով գնված երաժշտությունը տեղափոխել այլ կրիչի՝ օր. MP3-ի վրա: Պաշտպանության թվային միջոցը (DRM) հաճախ օգտագործվում է ՊՏՄ-ի հետ համատեղ, փոխկապակցված, այս երկու միջոցների տարբերությունը միայն սահմանման մեջ է: DRM- նշանակում է «Պաշտպանության թվային միջոց»¹:

Գրադարանավարները և այլ օգտվողներ ուշադրություն դարձրեցին ՊՏՄ-ի վրա, երբ վերջինս իր հատուկ իրավական պաշտպանությունը գտավ 1996թ. ընդունված ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրում: Սա նշանակում է, որ միջազգային պայմանագիրն ընդգրկում է դրույթ, ըստ որի ՊՏՄ-ները, որոնք «կիրառվում են հեղինակների կողմից իրենց ստեղծագործությունների օգտագործումը վերահսկելու համար»², շրջանցելը, կամ կոտրելը համարվում է իրավախախտում: ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրին անդամակից բոլոր երկրների ազգային օրենքները ներառում են դրույթներ ընդդեմ ՊՏՄ-ների շրջանցումների: Առաջին երկրներից մեկը Միացյալ Նահանգներն էին, որ ընդգրկեցին այս դրույթը 1998թ. ընդունված «Թվային հազարամյակի հեղինակային իրավունքի մասին» օրենքի մեջ, որին հաջորդեց 2001թ. «Հեղինակային իրավունքի մասին» Եվրոպական դիրեկտիվը³: Շրջանցումը անօրինական արարք է՝ անկախ նպատակից: Միացյալ Նահանգներում շրջանցում իրականացնողները ենթարկվում են քաղաքացիական և քրեական պատասխանատվության:

Սա նշանակում է, որ իրավատերերը նոր միջոց են ձեռք բերում ուժեղացնելու իրենց հեղինակային իրավունքի պաշտպանությունը: Տեխնիկական միջոցների կիրառմամբ նրանք հնարավորություն են ստանում նոր կանոններ մշակել թվային միջավայրում իրենց հեղինակային ստեղծագործությունների օգտագործման համար, արդյունավետ կերպով շրջանցելով հեղինակային իրավունքի մասին օրենքը, մասնավորապես՝ ստեղծագործության ազատ օգտագործման և սահմանափակումների մասին դրույթները, որոնք գործում են ի օգուտ օգտագործողների: Համատեղ օգտագործելով նաև լիցենզիաները թվային նյութերի օգտագործումը վերահսկելու նպատակով, լիցենզիաներ, որոնք ավելի խիստ պայմաններ կարող են պարունակել, քան նախատեսված է հեղինակային իրավունքի մասին օրենքով, իրավատերերը ավելի հզոր դիրքում են հայտնվում թվային միջավայրում, այսպիսով օգտվողներին դնելով «եռակի փականի» առջև:

(տես նույնպես «Հեղինակային իրավունքի մասին օրենքի և Պայմանագրի մասին օրենքի փոխհարաբերությունը» գլուխը):

Սպառողների մեծ մտահոգությունն այն է, որ նույնիսկ եթե ՊՏՄ/ՊԹՄ այնքան էլ հզոր միջոցներ չեն առևտրային նպատակով պատճենումն արգելելու համար, ապա բավականին հզոր միջոցներ են սահմանափակելու սպառողների հնարավորությունները նյութն օրինական օգտագործելու համար, օր.՝ ձևաչափը և այլ պարամետրերը փոփոխելու համար: Սպառողը ստիպված կլինի յուրաքանչյուր գործողության համար վճարել: ՊՏՄ-ները արգելակում են հաշմանդամ մարդկանց կողմից օգտագործվող օժանդակող տեխնոլոգիաների աշխատանքը: Փոխհամա-

գործակցելիության բացակայությունը, օր՝ սպառողների կենտրոնացումը մեկ հարթակի վրա կարող է բերել հակամրցակցության, գնի դիսկրիմինացիայի և շուկայի սեզմենտացիայի:

Գաղտնիության և անվտանգության հետ կապված մտահոգություններ առաջացան այժմ արդեն վատ համբավ ունեցող հայտնի «Sony rootkit»-դեպքի կապակցությամբ, որը մեծ արձագանք գտավ 2005թ.^{iv}: Sony BMG Երաժշտական ընկերությունը վաճառքի հանեց երաժշտական CD-ներ, որոնք պատճենումն արգելող գաղտնի սխեմա էին պարունակում, և այդ CD-ները տեղադրելով գնորդների համակարգչի մեջ, վիրուսներ էին առաջանում հենց այդ սխեմայի պատճառով: Դեպքի հետ կապված աղմուկն այնքան մեծ էր, որ «Sony»-ին պարտադրեցին վաճառքից հանել բոլոր այդ «պատճենումից պաշտպանված» CD-ները, այն էլ Սուրբ Ծննդյան տոների նախօրյակին: Դա արվեց միլիոնավոր ցանցերի վարակվելուց հետո և Միացյալ Նահանգներում դատական գործեր հարուցվեցին այդ առիթով: Շատերը, ովքեր ունեին արագ ինտերնետային կապ և այդ խնդիրը վերացնելու հնարավորություն, արագ կարգավորեցին ամեն ինչ: Իսկ ով էր պատասխանատու շարքից դուրս եկած համակարգչի համար զարգացող երկրների դպրոցներում, որոնք չունեին ինտերնետային կապ և իրենց ծախսերով պետք է վերանորոգեին համակարգիչը:

Պրակտիկան

Օրենսդիր մարմինները տեղյակ են այս խնդիրների մասին և գտնում են, որ ինչ որ կերպ պետք է դրանք լուծել:

Միացյալ Նահանգների Հեղինակային իրավունքների գրանցման գրասենյակը կանոններ է մշակել՝ ի պատասխան տուժած կողմերի առաջարկների: Համաձայն 2006թ. դեկտեմբերին ընդունված վերջին կանոնի, այն անձիք, ովքեր հեղինակային իրավունքի խախտում չեն արել, հետագա 3 տարիների ընթացքում հետևյալ 6 տիպի ստեղծագործություններն օգտագործելիս, ազատվում են օրենքով հաստատված որոշ սահմանափակումներից: Այն կարող է ընդգրկել տեսա-լսողական նյութերի օգտագործումը բուհերի գրադարաններում կամ մեդիա բաժնում, և Ինտերնետ Արխիվում օրինական ճանապարհով ծրագրակազմերի, համակարգչային ծրագրերի, վիդեո խաղերի պահպանումը հնացած ֆորմատներով^v:

Եվրոպական օրենսդիր մարմիններն այլ մոտեցում ցուցաբերեցին այս հարցին: Համաձայն հեղինակային իրավունքի մասին դիրեկտիվի, անդամ երկրները պետք է միջամտեն ՊՏՄ-ներով պաշտպանված նյութերի ազատ օգտագործման հնարավորությունները մեծացնելու համար, (օր. Բացառություն գրադարանի համար^{vi}), և անձնական նպատակներով օգտագործման համար վերարտադրություն^{vii}: Այնուամենայնիվ, պաշտպանության այս միջոցները չեն վերաբերում «click-wrap» տեսակի պայմանագրերի առարկա ստեղծագործություններին, երբ նյութից օգտվողը «OK» սեղմելով, համաձայնվում է պայմանագրի պայմաններին՝ իրավատիրոջ հետ առանց բանակցելու հնարավորություն ունենալու, և իրավատիրոջ հայեցողությանն է մնում առցանց նյութից օգտվելիս որևէ խախտում անելու համար օգտագործողին պատասխանատվության ենթարկելը: Այլ կերպ ասած, դիրեկտիվը խրախուսում է իրավատերերին և օգտվողներին հասնել կամավոր համաձայնության, միակ խաղաղ լուծումը, երբ, բնականաբար, շահում է ուժեղ կողմը:

Ամերիկյան օրենքի վրա հիմնված էլեկտրոնային միջավայրում քաղաքացիական իրավունքները պաշտպանող կազմակերպությունը Electronic Frontier Foundation (EFF) փաստաթղթերով հիմնավորում է, թե ինչպես ՊՏՄ-ների հակաօրինական կիրառումներն ավելի շատ խափանում են օրինական գործողությունները, քան արգելք հանդիսանում հեղինակային իրավունքի խախտման համար: Այն ցույց է տալիս, թե ինչպես այդ միջոցները ավելի շատ գործում են ընդդեմ սպառողների, գիտնականների, օրինական մրցակիցների, քան իրավախախտների դեմ^{viii}:

Գրադարաններին առնչվող խնդիրները

Տեղեկատվական հասարակության հաջողությունը պայմանավորված է թվային բովանդակության մատչելիության ծավալով: ՊՏՄ/ՊԹՄ-ների տրված իրավական պաշտպանությունը հակասություն է առաջացնում հեղինակային իրավունքի սահմանափակումների հետ: 2006թ. Մեծ Բրիտանիայի All Parliamentary Internet Group-ի նստաժողովի ժամանակ Բրիտանիայի գրադարանը նախագգուշացրեց, որ ՊՏՄ-ները կարող են «հիմնովին խախտել տարիներ շարունակ գրադարաններին թույլատրվող ստեղծագործության բարեխիղճ օգտագործման իրավունքը և նույնիսկ արգելք հանդիսանալ այդ ստեղծագործությունների մատչելիության համար»^{ix}:

Գրադարաններն ունեն այս խնդրի հետ կապված մի շարք մտահոգություններ

- Գրադարանները չպետք է զրկված լինեն հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքով իրենց հասանելիք իրավունքներից: ՊՏՄ չեն կարող տարբերակել օրինական և անօրինական օգտվողներին: Պատճենումն արգելող նույն մեխանիզմը, որն արգելում է անձին հեղինակային իրավունքով պաշտպանված ստեղծագործության անօրինական պատճենումը, կարող է արգելել նաև ըստ հեղինակային իրավունքի սահմանափակումների և ազատ օգտագործման դրույթների օրինական պատճենումը ուսանողի կամ վատ տեսողություն ունեցող անձի կողմից:
- Երկարատև պահպանումն ու արխիվացումը, որոնք էական նշանակություն ունեն համաշխարհային մշակութային արժեքների պահպանման գործում, չպետք է վտանգի ենթարկվեն ՊՏՄ/ՊԹՄ-ներով: ՊԹՄ-ների գործողության ժամկետը մոտավորապես 3-5 տարի է: Ժամկետն անց, արդեն չգործող ՊԹՄ-ները կարող են ավելի շուտ աղավաղել ապագա սերունդների համար պահպանված գրառումները, քան գրադարանն իրավունք կստանա շրջանցել այդ միջոցները տվյալ նյութը բարեխիղճորեն օգտագործելու նպատակով:
- Հանրության սեփականությունը պետք է պաշտպանված լինի: ՊԹՄ-ները չեն դադարում գործելուց նույնիսկ հեղինակային իրավունքի ժամկետն անցնելուց հետո, այսպիսով, մշակութային արժեքները շարունակում են անհասանելի մնալ հանրության համար նույնիսկ այն ժամանակ, երբ տվյալ ստեղծագործությունն այլևս չի պահպանվում հեղինակային իրավունքով:

Գրադարանները վճռականորեն դեմ են ՊՏՄ/ՊԹՄ-ների շրջանցման դեմ դրույթներին, որոնք իրավատերերին հնարավորություն են տալիս անտեսել հեղինակային իրավունքի մասին օրենքի սահմանափակումների և ազատ օգտագործման վերաբերյալ դրույթները: Գրադարաններին պետք է թույլատրել շրջանցելու ՊՏՄ/ՊԹՄ-ները ստեղծագործությունը բարեխիղճորեն և օրինական կերպով օգտագործելու նպատակով:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

American Library Association, Libraries and Copyright in the Digital Age

<http://www.ala.org/ala/washoff/WOissues/copyright/copyright/htm#LnC>

eIFL/IFLA Joint Statement WIPO SCCR/14, Draft Basic Proposal for the WIPO Treaty on the Protection of Broadcast Organizationa, May 2006

http://www.eifl.net/services/ipdocs/sccr_14_written.pdf

IFLA Committee On Copyright And Other Legal Matters (CLM)

Limitations And Exceptions...In The Digital Environment: An International Library Perspective

<http://www.ifla.org/III/clm/pl/ilp.htm>

Գրականություն

Digital Restriction Management <http://www.drm.info/>

Digital Rights Management: A failure in the developed world, a danger to the developing world, Cory Doctorow
http://www.eff.org/IP/DRM/drm_paper.php

Electronic Frontier Foundation, Unintended Consequences: Seven Years under the DMCA

April 2006 http://www.eff.org/IP/DMCA/unintended_consequences.php

WIPO International Seminar on Intellectual Property and Development, 2005

http://www.eifl.net/services/ipdocs/isipd_eifl.pdf

European Commission, Directive 2001/29/EC (Copyright Directive)

http://ec.europa.eu/internal_market/copyright/copyright-infso/copyright-infso_en.htm

US, Digital Millennium Copyright Act (1998)

<http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c105:H.R.2281>:

World Intellectual Property Organization Copyright Treaty (WCT) (1996)

<http://www.wipo.int/treaties/en/ip/wct>

Ծանոթագրություն

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»

Հոդված 67. Տեխնիկական միջոցների պաշտպանությունը

Հեղինակային իրավունք, պահպանության ժամկետը և հանրության սեփականությունը

Հեղինակային իրավունքը և հանրության սեփականությունը

Հեղինակային իրավունքը օրինական պահպանություն է ապահովում «մտավոր աշխատանքի արդյունք» ստեղծողների համար՝ տալով նրանց բացարձակ իրավունքներ վերահսկելու իրենց ստեղծագործությունների հրապարակումն ու օգտագործումն այլ անձանց կողմից: Ստեղծագործության հեղինակը իրավունք ունի վերահսկելու վերարտադրությունը (պատճենում), օրինակների տարածումը, հրապարակային կատարումը, հեռարձակումն ու ստեղծագործության թարգմանությունը: Հեղինակային իրավունքը տարածվում է գրական, դրամատիկական, երաժշտական կամ արվեստի ոլորտի ստեղծագործությունների վրա: Ստեղծագործությունը պահպանվում է հեղինակային իրավունքով, եթե այն յուրօրինակ է և ամրագրված նյութական որևէ կրիչի վրա՝ գրավոր կամ ձայնագրված տեսքով:

Ի հավելումն նշենք, որ մի շարք իրավունքներ՝ հայտնի որպես հարակից իրավունքներ, վերաբերում են ձայնագրություններին (այն անձի համար, ով նախաձեռնում է երաժշտական ձայնագրությունը), ֆիլմերին և տեսաֆիլմերին (ֆիլմ արտադրողը), հեռարձակումներին և մալուխով ստեղծագործության հաղորդումներին (հեռարձակող կազմակերպություններ), և որոշ երկրներում նաև հրատարակված ստեղծագործության տպագրական ձևավորումներին (հրատարակիչ):

Հեղինակային իրավունքը գույքային իրավունք է: Սա նշանակում է, որ հեղինակի գույքային իրավունքը կարող է զիջվել կամ լիցենզիայի միջոցով փոխանցվել երրորդ անձին, օր.՝ հեղինակը կարող է իր գրած գրքի հանդեպ ունեցած գույքային իրավունքը փոխանցել հրատարակչին՝ վարձատրություն ստանալու պայմանով: Հրատարակիչը, տիրապետելով գրքի նկատմամբ հեղինակային իրավունքը, վերահսկում է դրա օգտագործումը, այսինքն՝ տարածումը և թարգմանությունը: Հեղինակի գույքային իրավունքները հեղինակի մահից հետո կարող են փոխանցվել վերջինիս ժառանգներին:

Հեղինակային իրավունքի նպատակն է հնարավորություն տալ ստեղծագործողներին, ձեռներեցներին ֆինանսական եկամուտ ստանալ իրենց կամ ուրիշների կատարած աշխատանքների դիմաց: Սա նպաստում է հետագայում ստեղծագործելու և մշակութային միջավայրը հարստացնելու քաջալերմանը, որից փոխադարձաբար շահում է նաև հասարակությունը: Այս նպատակով է առաջացել հեղինակային իրավունքի մասին աշխարհում առաջին օրենքը, որը կոչվում էր «Ուսուցման քաջալերմանը նպաստող ակտ» (1710), հայտնի նաև որպես «Աննայի անգլիական օրենք»: Աննայի օրենքը պարունակում էր նաև մեկ ուրիշ կարևոր դրույթ, այն է՝ ստեղծագործողներին տրվող բացարձակ իրավունքները պետք է սահմանափակ ժամանակահատված ունենան (այս դեպքում 14 տարի՝ հրատարակման օրից հաշված): Դրանից հետո այդ ստեղծագործությունները դադարում են պահպանվել հեղինակային իրավունքով և դառնում են հանրության սեփականությունը: Հանրության սեփականությունը համարվում է մարդկության ընդհանուր մտավոր և մշակութային ժառանգության մի մասը և կարող է ոգեշնչման, ստեղծագործելու և նորանոր հայտնագործությունների աղբյուր հանդիսանալ: Հանրության սեփականություն համարվող նյութերի օգտագործումը սահմանափակված չէ. դրանք կարող են օգտագործվել առևտրային և ոչ առևտրային նպատակներով՝ առանց իրավատիրոջ թույլտվության: Օրինակ, հրատարակիչը կարող է էժան գներով հրատարակել հանրության սեփականություն համարվող գրքերը, երգի հեղինակը կարող է հայտնի բալլադի նմանակում (պարոդիա) գրել, վստահ լինելով, որ իրեն չեն մեղադրի հեղինակային իրավունքի խախտման համար, ուսուցիչը կարող է դասարանում աշակերտներին բաժանել հանրության սեփականություն համարվող պոեմի պատճենները, գրադարանը կարող է, օրինակ, թվայնացնել

հանրության սեփականություն համարվող լուսանկարները՝ իրենց գրադարանում պատմության թեմայով կազմակերպվելիք ցուցահանդեսի համար:

Հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետը

Հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետը «Աննայի օրենքի» ստեղծումից հետո մի քանի անգամ երկարաձգվել է: Ըստ միջազգային իրավական ստանդարտի, ինչպես ամրագրված է Բեռնի կոնվենցիայում (1886), որը սահմանում է հեղինակային իրավունքի պահպանության ազգային օրենքների հիմնական դրույթները, հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում և շարունակում են գործել նրա մահից հետո՝ 50 տարի: Այս ժամկետը կիրառվում է նաև վերջերս ընդունված Առևտրի համաշխարհային կազմակերպության Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրում (TRIPS, 1995) :

Կան բացառություններ ստեղծագործությունների որոշ կատեգորիաների համար: Ֆիլմի առաջին ամրագրման արտադրողի գույքային իրավունքները օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալուց հետո գործում են 50 տարի, իսկ եթե այդ ֆիլմը հանրությանը մատչելի չի դարձել, ապա այդ իրավունքները գործում են 50 տարի ֆիլմի ամրագրումից հետո: Այս ժամկետները գործում են նաև անանուն գործերի համար, կամ երբ հեղինակը կամ իրավատերը ֆիզիկական անձ չէ, այլ որևէ հաստատություն կամ հրատարակչություն: Լուսանկարների կամ կիրառական արվեստի ստեղծագործությունների համար գույքային իրավունքների գործողության ժամկետը 25 տարի է՝ ստեղծագործությունների ստեղծման օրից հաշված:

Այնուամենայնիվ, համաձայն Բեռնի կոնվենցիայի, անդամ-երկրներից յուրաքանչյուրը իրավասու է երկարաձգել հեղինակի գույքային իրավունքների գործողության ժամկետը, բայց ԱՀԿ (Առևտրի համաշխարհային կազմակերպություն) անդամ երկրները, որոնք նաև անդամ են TRIPS-ին, որպես հեղինակի գույքային իրավունքների գործողության նվազագույն ժամկետ, պարտավոր են պահպանել 50 տարին: Բազմաթիվ երկրներ ընդունում են Բեռնի կոնվենցիայով հաստատված այս ժամկետը, այսինքն՝ հեղինակի կյանքի տարիները և 50 տարի մահից հետո: Որոշ երկրներ երկարաձգել են այս ժամկետը, այն է՝ հեղինակի կյանքի տարիները և 70 տարի մահից հետո:

Պրակտիկան. գույքային իրավունքների պահպանության ժամկետի երկարաձգումը

Որպես գույքային իրավունքների գործողության ժամկետ՝ հեղինակի կյանքի տարիները և 50 տարի մահից հետո ընդունված դրույթը ըստ Բեռնի կոնվենցիայի և TRIPS-ի՝ երկու միջազգային բանակցելի պայմանագրերի, համարվում է արդարացի ժամկետ՝ հավասարաչափ պահպանելու հեղինակների ու իրավատերերի և հասարակության շահերը: Այն բացառիկ իրավունքներ է ապահովում շատ ստեղծագործողների համար՝ վայելելու իրենց հասանելիք եկամուտը կենդանության օրոք և հետագայում փոխանցել այդ իրավունքներն իրենց ժառանգներին, այսինքն՝ երեխաներին և թոռներին:

1990-ական թվականներին, անուամենայնիվ, պահպանության ժամկետը շատ երկրներում ավելացավ ևս 20 տարով, այսինքն՝ հեղինակի կյանքի տարիները և 70 տարի մահից հետո: Այս փոփոխությունն արագացվեց համաշխարհային 2 խոշոր առևտրական բլոկների կողմից, Եվրամիության և Միացյալ Նահանգների, որոնք երկուսն էլ այլ երկրների նկատմամբ գերիշխող դիրք են գրավում համաշխարհային տնտեսության բնագավառում: 1993թ. ԵՄ «ներդաշնակեցրեց» հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանության ժամկետը, որը նշանակում էր, որ ԵՄ անդամ երկրների մեծ մասը նույնպես պետք է ընդունեն այս փոփոխությունը, այն է՝ հեղինակի

կյանքի տարիները և 70 տարի մահից հետո: 1998թ. «Հեղինակային իրավունքի պահպանության ժամկետի երկարաձգման ակտը» Միացյալ Նահանգներում ընդունեց այս փոփոխությունը, որպեսզի իր երկրի օրենքն էլ համահունչ լինի շատ այլ երկրների համապատասխան օրենքներին, իսկ ծառայողական աշխատանքների (հարակից իրավունքներ) պահպանության ժամկետ ընդունեց 95 տարին: Քանի որ հեղինակային իրավունքը թափանցեց նաև առևտրի պայմանագրերի ոլորտ, և քանի որ առևտրի պայմանագրերը Եվրամիության և Միացյալ Նահանգների և երրորդ երկրների միջև ակնհայտորեն պահանջում էին երկարատև ժամկետներ, աշխարհի շատ այլ երկրների համար այս ժամկետը քվեարկության խնդիր դարձավ:

Շատ փորձագետների կարծիքով 70 տարին չափազանց երկար ժամկետ է: Դրանով խեղաթյուրվում է հեղինակային իրավունքի մասին օրենքի հիմնական նպատակը, այն է՝ հեղինակների խրախուսումը: Սա ավելի շատ արվում է հանուն մեծ բիզնեսի զարգացման: Իրականում Միացյալ Նահանգների Հեղինակային իրավունքի պահպանության ժամկետի երկարաձգման ակտը (1998) հայտնի դարձավ որպես «Միքի Մաուսի պահպանության ակտ» անունով, մինչդեռ ընդդիմադիրները Միացյալ Նահանգների Գերագույն դատարանում մարտահրավեր նետեցին այս ակտին՝ առաջ քաշելով «Ազատագրել Մկնիկին» ոչ պաշտոնական լոգունգը: Միկի Մաուսի, Դոնալդ Դաքի, և այլ Դիսնեյ Լենդի հերոսների հեղինակային իրավունքի պահպանության ժամկետն արդեն մոտենում էր ավարտին, և նրանք պետք է դառնային հանրության սեփականություն: The Walt Disney Company-ն զավեշտական կերպով ստեղծեց արդեն հանրության սեփականություն դարձած կերպարների ադապտացիաները, ինչպիսին է Ջյունանուշը, իրենց շահութաբեր բիզնեսը ևս երկու տասնամյակ շարունակելու համար: Արդյունքում շատ ստեղծագործություններ, որոնք պետք է հանրության սեփականություն դառնային, կրկին ձեռք բերեցին բացառիկ իրավունքներ մինչև 2019 թիվը:

Միացյալ Նահանգներում հեղինակային իրավունքի պահպանության ժամկետի երկարաձգումը հետադարձ ազդեցություն ունեցավ դեռևս հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների վրա: Եվրոպայում այն հետադարձ ազդեցություն ունեցավ ոչ միայն դեռևս հեղինակային իրավունքով պահպանվող, այլ նաև արդեն հանրության սեփականություն դառած ստեղծագործությունների վրա: Այլ կերպ ասած, հանրության սեփականություն դարձած որոշ ստեղծագործություններ դարձան նորից պահպանվող և անսպասելի շահույթներ ապահովեցին մահացած հեղինակների ժառանգների համար: Այս հանգամանքը մի քանի դատական պրոցեսների պատճառ դարձավ Եվրոպական երկրներում, որոնցից մեկն էլ վերաբերում էր երաժշտություն հրատարակողի իրավունքների և պետական թատրոնների կողմից ներկայացումը բեմադրելու իրավունքների պարզաբանմանը: Խոսքը կոնկրետ վերաբերվում էր Պուչինիի «La Boheme» օպերայի բեմականացման իրավունքին: Եվ ահա մեկ այլ հայտնի դեպք. Իռլանդիայի հեղինակային իրավունքի մասին օրենքի մեջ շտապ փոփոխություններ կատարվեցին, որպեսզի «Rejoice Dublin 2004» Bloomsday-ի հարյուրամյակին նվիրված փառատոնը չխափանվեր, երբ նշվում էր Ջեյմս Ջոյսի «Ողիսես» վեպի ստեղծման օրը: Ջեյմս Ջոյսի ստեղծագործությունները չէին պահպանվում հեղինակային իրավունքով սկսած 1991թ.-ից, այսինքն՝ նրա մահից 50 տարի հետո: Արդեն 3,5 տարի այդ ստեղծագործությունները հանրության սեփականություն էին:

1993թ. Եվրոպական օրենսդրության մեջ կատարված փոփոխության հետևանքով հեղինակային իրավունքի պահպանության ժամկետը թարմացվեց մինչև 2011 թվականը, և, ահա, հարց է առաջանում. ինչպես կարող է այս փաստը խրախուսել Ջեյմս Ջոյսին ստեղծելու նոր ստեղծագործություններ, եթե նա մահացել է 1941 թվականին:

Գրադարաններին առնչվող խնդիրները

Գրադարաններին միշտ էլ մտահոգել է հանրության սեփականության խաթարումը, հանրության սեփականության, որը ստեղծագործողների համար նորանոր գործեր ստեղծելու, իսկ գրադարանների համար՝ համաշխարհային արվեստի և մշակույթի արժեքները հասարակությանը մատչելի դարձնելու նպատակով թվայնացման ծրագրեր իրականացնելու հարուստ աղբյուր է հանդիսանում: Այսպիսով, հանրության սեփականությունը պետք է պահպանել ու պաշտպանել «զավթումներից»: Գրադարանավարները՝ որպես համաշխարհային արվեստի և մշակույթի արժեքների պահպանողներ, պետք է հանդես գան որպես հանրության շահերի ջատագովներ, հնարավորություն տան օգտվողներին՝ կրթվելու հանրության սեփականության հարուստ արժեքներով և իրենք էլ ակտիվորեն մասնակցեն օրենքում փոփոխություններ կատարելու գործին:

Զարգացող և անցումային շրջանի երկրների համար, որտեղ տեղեկատվության մատչելիությունը որոշիչ նշանակություն ունի հասարակության զարգացման համար, հեղինակային իրավունքի տևողության ժամկետի երկարաձգումը նշանակում է, որ հասարակությունը ևս 20 տարի զրկվում է այդ արժեքներից օգտվելուց, սրանով իսկ բացասական ազդեցություն թողնելով կրթության և նորարարության վրա: Նույնիսկ ավելին, զարգացած երկրներում այս ժամկետի երկարաձգումից շահում են իրավատերերը և նրանց ժառանգները, իսկ զարգացող երկրներն ավելի են տուժում, զրկվելով նորանոր արժեքներ ստեղծելու հնարավորություններից, և սա պատճառ է դառնում, որ տեղեկատվության հոսք կատարվի հյուսիսից հարավ:

«Հարուստ հանրության սեփականությունը և հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունների բարեխիղճ օգտագործումը նպաստում է ստեղծագործական մտքի ու նոր արժեքների ստեղծմանը: Հաճախ ենթադրվում է, թե տնտեսական աճը պայմանավորված է մտավոր սեփականության օրեցօր ուժեղացող իրավունքներով, և գուտ սոցիալական նկատառումներով պետք է օրենքում սահմանափակումներ նախատեսվեն: Իրականում սա սխալ տեսակետ է: Շատ արդյունաբերական ընկերությունների անհրաժեշտ է ապահովել հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հասանելիությունը հետազոտական աշխատանքների, զարգացման, կրթության, համակարգչային ծրագրերի ու սխեմաների փոխգործունեության նպատակների համար: Խելամիտ ծավալով օգտագործման պակասը կարող է վնասել տնտեսական աճին:»

IFLA Committee on Copyright and Other Legal Matters <http://www.ifla.org/III/clm/p1/ilp.htm>

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

Importance of the Public Domain, Special Libraries Association (SLA)

Information Outlook, Vol. 5, No. 7, July 2001

<http://www.sla.org/content/Shop/Information/infoonline/2001/jul01/copyright.cfm>

Joint statement by IFLA and Electronic Information for Libraries(eIFL.net) on the proposal by Chile for WIPO to undertake an appraisal of the public domain(2006)

http://www.wipo.net/services/ipdocs/pcda1_chile.pdf

Proposal by Chile to WIPO on the public domain (2006)

http://www.wipo.int/meetings/en/doc_details.jsp?doc_id=55592

Limitations and Exceptions to Copyright and Neighbouring Rights in the Digital Environment:

An International Library Perspective (2002) IFLA Committee on Copyright and other Legal

Matters <http://www.ifla.org/III/clm/p1/ilp.htm>

Գրականություն

Օրենսդրություն

Berne Convention for the protection of Literary and Artistic Works(1886)

<http://www.wipo.net/treaties/en/ip/berne/>

US Copyright Term Extension Act

<http://www.copyright.gov/legislation/s505.pdf>

European Council Directive 93/98/EEC harmonizing the term of protection of copyright certain related rights

European Commission Official Journal L 290, 24/11/1993 P.0009 -0013

http://ec.europa.eu/internal_market/copyright/term-protection/term-protection_en.htm

Հոդվածներ

Bloomsday: Copyright Estates and Cultural Festivals, (2005) 2:3 SCRIPT-ed 345 by M Rimmer

<http://www.law.ed.ac.uk/ahrb/script-ed/vol2-3/bloomsday.asp>

Calson Analytics profile: duration of copyright

<http://www.casion.com.au/durationprofile.htm>

The case against copyright creep. Sonny Bono: A warning from history by Chris Williams

http://www.theregister.co.uk/2006/11/29/jonathan_zittrain_interview

How do I find out whether the book is in the public domain?

<http://onlinebooks.library.upenn.edu/okbooks.html#whatpd>

The Mouse that Ate the Public Domain: Disney, the Copyright term Extension Act, And Eldred v.Ascroft by Chris Springman. Findlaw Tuesday, Mar.05, 2002

http://writ.news.findlaw.com/commentary/20020305_springman.html

List of countries' copyright length

http://en.wikipedia.org/wiki/List_of_countries%27_copyright_length

Note: sources listing the term of protection in different may not always be complete or accurate

Ծանոթագրություն.

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»

- **Հոդված 11. Հեղինակային իրավունքի բովանդակությունը**
- **Հոդված 12. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները**
- **Հոդված 13. Հեղինակի գույքային իրավունքները**
- **Հոդված 37. Գույքային իրավունքների գործողության ժամկետը**

Հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները

Ինչ են հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները

Հեղինակային իրավունքի մասին օրենքի սկզբնական նպատակն է քաջալերել ստեղծագործական գործունեությունն ու նորարարությունը: Օրենքն իրականացնում է այս նպատակը երկու եղանակով: Մի կողմից՝ ապահովելով իրավական պահպանություն հեղինակների և ստեղծագործողների համար այնպես, որ նրանք կարողանան շահագործել իրենց ստեղծագործությունները, օրինակ, վարձատրություն ստանան իրենց ստեղծագործության օգտագործման համար: Մյուս կողմից՝ այն ապահովում է տվյալ ստեղծագործությունների խելամիտ հասանելիություն հասարակության անդամների համար՝ քաջալերելու նորարարությունը, հետազոտությունը և հետագա ստեղծագործական գործընթացը: Այսպիսով, ի սկզբանե հեղինակային իրավունքի մասին օրենքի նպատակն է եղել հավասարակշռել ստեղծագործողների և օգտվողների շահերի պահպանությունը այնպես, որ օգտվողները կարողանան մուտք ունենալ տեղեկատվությանն ու գիտական պաշարներին:

Ստեղծագործողների իրավական պահպանությունը արտահայտվում է նրանց տրված բացառիկ իրավունքով՝ վերահսկելու իրենց ստեղծագործությունների վերարտադրումն ու օգտագործումը այլ անձանց կողմից, օրինակ՝ պատճենում, տարածումը, թարգմանությունը, հրատարակումը և հեռարձակումը: Սա մենաշնորհի հզոր իրավունք է: Հասարակության համար գիտելիքի խելամիտ հասանելիություն ապահովելու նպատակով հեղինակի բացառիկ իրավունքները սահմանափակվում են երկու հիմնական եղանակներով:

- Իրավունքը տրվում է սահմանափակ ժամանակահատվածով, հայտնի որպես գույքային իրավունքների պահպանության ժամկետ: Գրական ստեղծագործությունների համար որպես գույքային իրավունքների պահպանության միջազգային ստանդարտ ժամկետ ընդունված է հեղինակի կյանքի տարիները և 50 տարի մահից հետո (Տես նույնպես eIFL Ձեռնարկի «Հեղինակային իրավունք, պահպանության ժամկետ և հանրային սեփականություն» գլուխը):
- Տրված իրավունքները ենթակա են որոշակի բացառությունների ու սահմանափակումների՝ հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների մատչելիությունն ապահովելու նպատակով:

Բացառություններն ու սահմանափակումները կարելի է բնութագրել երեք լայն կատեգորիաներով: Առաջին կատեգորիան պահպանում է օգտագործող անհատի իրավունքները: Օրինակ՝ հրապարակային ելույթների, մեջբերումներ կատարելու, ընթացիկ նորությունները զեկուցելու, պարոդիայի, առանց շահույթ ստանալու նպատակով վերարտադրություններ կատարելու իրավունքները: Երկրորդ կատեգորիան արտացոլում է առևտրային շահերը, արդյունաբերական պրակտիկան և մրցակցությունը: Սա ընդգրկում է մավր հաղորդագրությունները և համակարգչային ծրագրերի փոխգործողության նպատակով ապաքանաքաղումը (դեկոմպիլյացիան): Երրորդ կատեգորիան վերաբերվում է լայն հասարակությանը և խրախուսում է գիտելիքի ու տեղեկատվության տարածումը: Այն ընդգրկում է դրույթներ գրադարանների, ուսուցողական ու հետազոտական նպատակներով դասավանդողների, հաշմանդամների, խորհրդարանական և դատական վարույթների վերաբերյալ:

Բացառություններն ու սահմանափակումները կարող են լինել հատուցելի և անհատույց: Հատուցելի բացառությունների դեպքում իրավատերը դրամական վարձատրություն է ստանում: Այլ կերպ ասած՝ օգտագործողը կարիք չունի օգտագործման համար թույլտվություն խնդրել իրավատիրոջից, վերջինս վճարվում է ստեղծագործության օգտագործման համար (սա որոշ չափով

նման է պարտադիր լիցենզիային): Անհատույց բացառությունների դեպքում իրավատերը չի վճարվում: Հատուցելի և անհատույց օգտագործումները մեկնաբանված են **Քեննեթ Քրյուսի «ՄՄՀԿ ուսումնասիրությունները հեղինակային իրավունքի սահմանափակումների ու բացառությունների վերաբերյալ գրադարանների և արխիվների համար» աշխատության մեջ, էջ 38:**

Ավելացնենք, որ որոշ երկրներ ունեն «բոլոր նպատակների համար» ընդհանուր դրույթ: Միացյալ Նահանգներում այս դրույթը հայտնի է «արդար օգտագործում» անվամբ: Միացյալ Նահանգների հեղինակային իրավունքի մասին օրենքում կոդավորված այս դրույթը բնութագրվում է չորս չափանիշներով և հաճախ է քննարկվել դատարաններում: Միացյալ Թագավորությունն ունի համապատասխան դրույթ, որը կոչվում է «արդար գործարք», որն ավելի նեղ ու յուրահատուկ մոտեցում է ցուցաբերում, տարածվելով միայն մասնավոր ուսուցման, քննադատության և նորությունների տեղեկացման վրա: Արդար գործարքի ճշգրիտ սահմանումն ու մեկնաբանումը վերջնականապես տրվում է դատարաններում: Հեղինակային իրավունքի մասին Բրիտանական օրենքը ժառանգած երկրները հավանաբար ունեն «արդար գործարք»-ի վերաբերյալ դրույթ:

Հեղինակային իրավունքի բացառությունները և միջազգային իրավական կառուցվածքը

Հեղինակային իրավունքի միջազգային կառուցվածքն ի սկզբանե ընդունել է հեղինակի իրավունքների սահմանափակումներ ու բացառություններ, որոնք համարվում են լավ գործող հեղինակային իրավունքի համակարգի էական մասը: Հետևաբար, Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության Բեռնի կոնվենցիան (1886) պարունակում է մի քանի բացառություններ և թույլատրում է կոնվենցիան ստորագրած երկրներին մշակել հետագա սահմանափակումներ ազգային օրենսդրության համապատասխան: Սա ընդգրկում է պարտադիր անհատույց բացառություն հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործություններից մեջբերումներ կատարելու համար, որը համապատասխանում է «արդար կիրառում»-ին (Հոդված 10(1)), և անդամ պետություններին թույլատրում է ընդունել անհատույց բացառություններ ու սահմանափակումներ օգտագործման որոշ ձևերի համար, ինչպես օրինակ՝ նորությունների տեղեկատվություն, երաժշտական ստեղծագործությունների ձայնագրություններ որոշակի սահմանափակ պայմաններով:

Բեռնի Կոնվենցիայի հավելվածը (1971) նույնպես պարունակում է հատուկ դրույթներ զարգացող երկրների համար և սահմանափակումներ է նախատեսում թարգմանության և վերարտադրության համար՝ համաձայն որոշակի խիստ պայմանների (Բարդ ընթացակարգերի և սահմանափակ ծավալի պատճառով Բեռնի հավելվածն այնքան էլ շահավետ չէր զարգացող երկրների համար):

Բեռնի կոնվենցիան հետագայում թույլ է տալիս ընդունել լրացուցիչ անհատույց բացառություններ վերարտադրության համար, եթե այն համապատասխանում է վիճահարույց եռաստիճան տեստին (Հոդված 9(2)), որն առաջ է քաշվել ու ամրագրվել TRIPS-ում (Հոդված 13): Եռաստիճան տեստի ծավալն ու կիրառությունը քննարկման առարկա է իրավագետների և օրենքը ստեղծողների կողմից: Ամեն դեպքում, եռաստիճան տեստը պարզապես նախագիծ է օրենսդրի համար և մեկ անգամ կիրառվելով, չպետք է ընդգրկվի ազգային օրենքի մեջ:

Բացառություններն ու սահմանափակումները թվային բովանդակության համար

1996թ. ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին և ՄՄՀԿ Կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագրերը (WIPO Copyright Treaty and the WIPO Performances and Phonograms Treaty) հայտնի՝ որպես «ինտերնետային պայմանագրեր», թարմացրին հեղինակային իրավունքի մասին

միջազգային օրենքը թվային միջավայրի համար: Երկու պայմանագրերն էլ պարունակում են թվային միջավայրի համար սահմանափակումների և բացառությունների վերաբերյալ կարևոր առաջարկություններ: Ներածություններն արտահայտում են իրավատերերի և հասարակության շահերի հավասարակշիռ պահպանության անհրաժեշտության գաղափարը՝ մասնավորապես կրթության, հետազոտության և գիտելիքի մատչելիության նպատակով:

Համաձայնեցված առաջարկությունը կրկին անգամ հաստատում է, որ պայմանագիր ստորագրած կողմերը կարող են իրենց ազգային օրենքներում սահմանափակումներն ու բացառությունները տարածել նաև թվային միջավայրի վրա և ստեղծել նոր սահմանափակումներ և բացառություններ, որոնք կիրառելի կլինեն թվային միջավայրում (Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր, Համաձայնեցված առաջարկություն Հոդված 10-ի վերաբերյալ, Կատարումների և հնչյունագրերի վերաբերյալ պայմանագրին անդամակցող երկրների կողմից համաձայնեցված առաջարկություն Հոդված 16-ի վերաբերյալ):

Պրակտիկան

Բեռնի կոնվենցիայի հոդված 10(1)-ից բացի (վերոնշյալ), սահմանափակումները և բացառությունները հայեցողական են և դրանց ընդունումը թողնված է տեղական կառավարությունների հայեցողությանը: Սա երկրներին ճկուն գործելակերպ է ապահովում՝ ստեղծելու կրթական, մշակութային և զարգացման ազգային պահանջները բավարարող մատչելիության ռեժիմ: Այնուամենայնիվ, իրականությունը ցույց է տալիս, որ այս ճկունությունը չի տեղափոխվում ազգային օրենք՝ ի օգուտ հասարակության և տանում է դեպի ազգային բացառությունների սահմանափակման, որը բավարար չէ համընդհանուր թվային միջավայրից օգտվելու համար: ՄՄՀԿ-ի կողմից հանձնարարված երկու ուսումնասիրությունները «Հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները գրադարանների և արխիվների համար» (Crews, 2008) և «Հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները թույլ տեսնողների համար» (Sullivan, 2007), հաստատում է այս միտքը մասնավորապես զարգացող երկրների համար: Consumers International-ի (2006) կողմից արված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խաղաղ օվկիանոսյան տարածաշրջանի հետազոտված զարգացող երկրներից ոչ մեկը չի օգտվել միջազգային պայմանագրերով իրենց թույլատրված ճկուն համակարգից:

Ավելացնենք, որ նոր պայմանագրերը տարիների ընթացքում ընդունել են նոր բացառիկ իրավունքներ, քննարկման նոր թեմաներ և շահագործման նոր եղանակներ: Բացառություններն ու սահմանափակումները չեն զարգացել նույն ծավալով, ինչպես հեղինակների և իրավատերերի իրավունքները, լրջորեն խախտելով հեղինակային իրավունքի մասին օրենքում պահպանության հավասարակշռությունը: Գրադարաններում էլեկտրոնային ստեղծագործությունների մասնավոր լիցենզավորումը հաճախ խարխլում է բացառություններն ու սահմանափակումները և պաշտպանության տեխնիկական միջոցների կիրառումը կարող է խափանել նրանց գործունեությունը (Տես նույնպես eIFL Ձեռնարկի «Հեղինակային իրավունքի մասին օրենքի և Պայմանագրի մասին օրենքի փոխհարաբերությունը» և «Պաշտպանության տեխնիկական միջոցներ» գլուխները):

Գրադարաններին առնչվող խնդիրները

Բացառություններն ու սահմանափակումները հեղինակային իրավունքով պահպանված բովանդակության հասանելիության հիմնաքարերն են: Առանց դրանց միայն իրավատերերը բացարձակ մենաշնորհ կունենային հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունների օգտագործման համար: Հեղինակային իրավունքով պահպանված ստեղծա-

գործունեությունները հնարավոր կլինե՞ր միայն վաճառել կամ վարձույթով տալ: Գրադարանները և գրադարաններից օգտվողները կարող էին միայն տեսնել կամ կարդալ այդ ստեղծագործությունները: Օգտագործման այլ ձևերի համար կարիք կլինե՞ր թույլտվություն ստանալ: Մա կխոչընդոտե՞ր գրադարանների գործունեությունը և տեղեկատվության ազատ հոսքը:

Հետևաբար, գրադարաններն անչափ կարևորում են բացառությունների ու սահմանափակումների վերաբերյալ դրույթները և պնդում, որ դրանք շարունակաբար կիրառվեն նաև թվային դարաշրջանում:

ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրի 10-րդ հոդվածին առնչվող փոխհամաձայնեցված առաջարկությունը մի փորձ էր լուծելու ապագային վերաբերող այս խնդիրները: Ավելի քան տասն տարի անց այս խնդիրները ավելի բարդ կլինի լուծել նման փաստաթղթերի միջոցով: Այդ պատճառով իսկ գրադարանները, օգտվողների այլ խմբեր և որոշ իրավաբանական հաստատություններ առաջ են քաշում բացառությունների ու սահմանափակումների նվազագույն ծավալ, որպես, օրինակ «Գիտելիքի մատչելիություն» միջազգային պայմանագրի մի մաս: ՄՄՀԿ-ի կողմից հանձնարարված ուսումնասիրությունը «Հեղինակային իրավունքի սահմանափակումներն ու բացառությունները գրադարանների և արխիվների համար» եզրակացնում է, որ գրադարանների շրջանում առկա է հրամայական խնդիր՝ առավելագույն աջակցություն օրենսդրական դաշտի կողմից և ավելի պարզ ու հասկանալի օրենքներ, որոնք կիրառելի կլինեն իրենց մատուցած ծառայությունների համար:

2004թ.-ից սկսած, eIFL.net (Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար), IFLA (Գրադարանային ասոցիացիաների միջազգային դաշինք) և ավելի ուշ US Library Copyright Alliance (LCA) բարձրացնում են այս խնդիրները ՄՄՀԿ-ում և աջակցում անդամ-երկրներ Չիլիի, Բրազիլիայի, Նիկարագուայի և Ուրուգվայի դիրքորոշումներին: 2008թ. նոյեմբերին ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մշտական հանձնաժողովը սկսեց քննարկել բացառություններ և սահմանափակումներ կույրերի, թույլ տեսողների և ընթերցելու պրոբլեմներ ունեցող այլ մարդկանց, ինչպես նաև գրադարանների և կրթության համար:

2009թ. մայիսին eIFL.net-ը, IFLA-ն և LCA-ն հրատարակեցին «Հեղինակային իրավունքի սահմանափակումներ և բացառություններ գրադարանների և արխիվների համար» համատեղ փաստաթուղթը, որը ներկայացնում է 21-րդ դարում գրադարանների համար պահանջվող նվազագույն հիմնական բացառությունները: Այս փաստաթուղթը հիմք է հանդիսանում միջազգային գրադարանային հանրության կողմից հետագա քննարկումների և գործողությունների համար: Ահա սկզբունքները.

- **Պահպանություն.** Գրադարանին պետք է թույլատրվի պահպանության նպատակով իրենց հավաքածուների հրատարակված և չհրատարակված ստեղծագործություններից պատճենումներ կատարել, ներառյալ՝ ստեղծագործությունները տարբեր ձևաչափերի փոխելը:
- **Ավանդադրում.** Ավանդադրման մասին օրենքներն ու համակարգերը պետք է ընդլայնվեն՝ ընդգրկելով նաև բոլոր ձևաչափերով հրատարակված ստեղծագործությունները, թույլատրելով նաև այդ ստեղծագործությունների պահպանությունը:
- **Միջգրադարանային փոխանակություն և էլեկտրոնային փաստաթղթերի սպասարկում.** Գրադարանները պետք է կարողանան առաքել փաստաթղթերը անմիջական կերպով կամ միջնորդ գրադարանի միջոցով՝ անկախ փաստաթղթի ձևաչափից և հաղորդակցման ձևից:
- **Կրթությունը և լսարանային պարապմունքները.** Գրադարանի կամ այլ ուսումնական հաստատության կողմից օրինական ճանապարհով ձեռք բերված ստեղծագործությունները պետք է մատչելի լինեն լսարանային պարապմունքների կամ հեռակա ուսուցման համար

այնպես, որ անհիմն կերպով չվնասի իրավաստիրոջ շահերը: Պետք է թույլատրվի գրադարանին կամ այլ ուսումնական հաստատությանը ստեղծագործությունների պատճենումներ կատարել լսարանային պարապմունքների համար:

- **Վերարտադրություն հետազոտական և անձնական նպատակներով.** Պետք է թույլատրելի լինի առանձին ստեղծագործությունների պատճենումը անհատ օգտագործողներին կամ նրանց կողմից հետազոտական, կրթական և այլ անձնական նպատակների համար:
- **Դրույթ հաշմանդամների համար.** Գրադարանին պետք է թույլատրվի փոխել ստեղծագործության ձևաչափը՝ այն հաշմանդամներին մատչելի դարձնելու նպատակով: Բացառությունները պետք է կիրառելի լինեն բոլոր ձևաչափերի համար՝ օգտվողների կարիքները հարմարեցնելով տեխնոլոգիական առաջընթացին: Խուսափելու համար էլեկտրոնային ստեղծագործությունների վերարտադրումից, որն ավելի թանկ արժե, պետք է թույլատրվեն փոխանակում իրականացնել արտերկրների հետ:
- **Գրադարանների համար կիրառելի ազատ օգտագործման ընդհանուր բացառություններ.** Ազատ օգտագործման ընդհանուր բացառությունը, համապատասխան արդար օգտագործման դրույթին, օգնում է ապահովել գրադարանային ծառայությունների արդյունավետ մատուցում:
- **Անհայտ հեղինակի ստեղծագործություններ.** Անհրաժեշտ է բացառություն՝ լուծելու անհայտ հեղինակի ստեղծագործությունների խնդիրը, երբ հնարավոր չէ իրավաստիրոջը բացահայտել կամ գտնել:
- **Գույքային իրավունքների գործողության ժամկետը.** Բեռնի կոնվենցիայի համաձայն՝ գույքային իրավունքների գործողության ժամկետը գրական երկերի համար չպետք է գերազանցի հեղինակի կյանքի տարիները և նրա մահից հետո՝ 50 տարին:
- **Պաշտպանության տեխնիկական միջոցներ, որոնք արգելակում են օրինական օգտագործումը.** Գրադարաններին և գրադարաններից օգտվողներին պետք է թույլատրվի շրջանցել պաշտպանության տեխնիկական միջոցները առանց հեղինակին վնաս պատճառելու ստեղծագործության օգտագործումն ապահովելու նպատակով: Շատ երկրների օրենքներում շրջանցման դեմ դրույթի ընդգրկումը գերազանցում է ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրի 11-րդ հոդվածի պահանջները, դրանով իսկ արդյունավետ կերպով սահմանափակելով հեղինակային իրավունքի մասին օրենքում առկա բացառությունները:
- **Պայմանագրերը և օրենքով հաստատված բացառությունները.** Պայմանագրերը չպետք է անտեսեն բացառություններն ու սահմանափակումները. Բացառությունների ապահովման նպատակներն ու ռազմավարությունը ազգային և միջազգային սկզբունքների կարևոր առաջարկություններ են և չպետք է փոփոխվեն պայմանագրով:
- **Պատասխանատվության սահմանափակում.** պետք է գրադարանների և գրադարանային ոլորտի աշխատողների պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթ լինի, ովքեր աշխատում են բարեխղճորեն, համոզված են կամ բավարար հիմքեր ունեն համոզված լինելու, որ գործում են հեղինակային իրավունքի մասին օրենքի համաձայն:

eIFL-IP Draft Law on Copyright Including Model Exceptions and Limitations for Libraries and Consumers. Recommendations by eIFL.net

http://www.eifl.net/cps/sections/docs/ip_docs/draft-law

IFLA Copyright and other Legal Matters Committee (CLM)

<http://www.ifla.org/en/clm>(look in Statements or Publications)

Statement of principles on copyright exceptions and limitations for libraries and archives. eIFL.net, IFLA, and the Library Copyright Alliance, May 2009

http://www.eifl.net/cps/sections/docs/ip_docs/statement-principles

World Book and Copyright Day, 23 April 2009. Statement by eIFL-net on the importance of users' rights for libraries, education and development

http://www.eifl.net/cps/sections/docs/ip_docs/world-book-copyright-day

Գրականություն

Օրենսդրություն և Առաջարկություններ

Berne Convention 1886 (amended 1971).

<http://www.wipo.int/treaties/en/ip/berne/>

WIPO Copyright Treaty (WCT) 1996.

<http://www.wipo.int/treaties/en/ip/wct/>

WIPO Performances and Phonograms Treaty (WPPT) 1996.

http://www.wipo.int/treaties/en/ip/wppt/trtdocs_wo034.html

WTO TRIPS Agreement.

http://www.wto.org/english/docs_e/legal_e/27-trips_04_e.htm#1

Proposal by Brazil, Ecuador and Paraguay, relating to limitations and exceptions: treaty proposed by the World Blind Union (WBU). WIPO SCCR/18/5 25 May 2009

http://www.wipo.int/meetings/en/doc_details.jsp?doc_id=122732

Ջեկոյցներ, հոդվածներ և ներկայացումներ

Consumers International. Copyright and Access to Knowledge: Policy

Recommendations on Flexibilities in Copyright Laws (2006)

<http://a2knetwork.org/copyright-and-a2k-book>

Crews, Kenneth. WIPO study on copyright limitations and exceptions for libraries and archives (2008)

http://www.wipo.int/meetings/en/doc_details.jsp?doc_id=109192

Declaration of the Three-Step Test. A Balanced Interpretation Of The “Three-Step Test” In Copyright Law, Max Planck Institute for Intellectual Property, Competition and Tax Law

http://www.ip.mpg.de/ww/en/pub/news/declaration_on_the_three_step_.cfm

Hackett, Teresa. "Exceptions and limitations" in copyright vital for South countries.

TWN Briefing Paper No. 54

http://www.twinside.org.sg/title2/briefing_papers/No54.pdf

Hinze, Gwen. Action needed to expand exceptions and limitations to copyright law.

TWN Briefing Paper No. 49

http://www.twinside.org.sg/title2/briefing_papers/No49.pdf

Hugenholtz, P. Bernt & Okediji, Ruth L. Conceiving an international instrument on limitations and exceptions to copyright (2008)

http://www.ivir.nl/publications/hugenholtz/limitations_exceptions_copyright.pdf

Okediji, Ruth L. The International Copyright System: Limitations, Exceptions and Public Interest Considerations for Developing Countries. UNCTAD - ICTSD Project on IPRs and Sustainable Development (2006)

www.unctad.org/en/docs/iteipc200610_en.pdf.

Sullivan, Judith. WIPO Study on Copyright Limitations and Exceptions for the Visually Impaired (2007)

http://www.wipo.int/meetings/en/doc_details.jsp?doc_id=75696

Users' rights: making copyright work for libraries. Proceedings from Copyright and other Legal Matters session at IFLA World Library and Information Congress, Quebec (2008)

<http://archive.ifla.org/IV/ifla74/Programme2008.htm#14August>

Revised October 2009

Օանթագրություն

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»

- Հոդված 22. Ստեղծագործության ազատ օգտագործումը
- Հոդված 23. Ստեղծագործության վերարտադրումը անձնական նպատակով
- Հոդված 24. Ստեղծագործության վերարտադրումն արտատպման եղանակով (ռեպրոգրաֆիական վերարտադրություն)
- Հոդված 25. Այցելության համար բաց վայրերում տեղադրված ստեղծագործության օգտագործումը
- Հոդված 26. Կարճատև օգտագործման համար ձայնագրության կամ տեսագրության պատրաստումը և ազատ օգտագործումը հեռարձակող կազմակերպության կողմից

Ավանդադրում

Ավանդադրումը օրինական պարտավորություն է, ըստ որի հրատարակիչները պետք է ավանդադրեն ազգային հաստատություններում իրենց հրատարակություններից մեկ (կամ մի քանի) օրինակ որոշակի սահմանված ժամանակահատվածում: Սովորաբար, նման հաստատություն է հանդիսանում գրադարանը, կոնկրետ՝ Ազգային գրադարանը:

Ըստ Բրիտանական գրադարանի, ազգային տպագիր արխիվը պարտադիր օրինակով համալրելու սկզբունքը բավականին լավ ձևավորվել է համարյա չորս դարերի ընթացքում: Ավանդադրումը սովորաբար չի տարածվում չհրատարակված, կամ արվեստի բնօրինակ ստեղծագործությունների վրա, մինչդեռ լայնորեն ընդգրկում է հրատարակված տեսալսողական և էլեկտրոնային ստեղծագործություններն ու վեբկայքերի ներբեռնումը:

Ավանդադրումը երաշխավորում է, որ մարդկային հիշողության արդյունքների, ստեղծագործական գործունեության և հայտնագործությունների վերաբերյալ հրատարակված գրառումները ձեռք են բերվում ժողովրդի կողմից, պահպանության և հետագայում ապագա սերունդներին այն հասանելի դարձնելու նպատակով: Հեղինակները և հրատարակիչները շահում են այս գործառնությից, որովհետև ավանդադրված ստեղծագործությունները դառնում են ազգային հավաքածուի մի մաս և ընդամիջոց պահպանվում են պետության հաշվին: Նման հավաքածուները արժեքավոր աղբյուր են հանդիսանում հենց իրենց, հրատարակիչների համար՝ հետագայում մուտք ունենալու տարիների ընթացքում իրենց կողմից ստեղծված ներդրման արդյունքներին, քանի որ ներկայումս ավանդադրված ստեղծագործությունների պահպանության և փնտրման համար ավանդապահ գրադարանի արհեստավարժ հոգածությամբ կիրառվում են ժամանակակից տեխնիկական միջոցներ ու մեխանիզմներ:

Համաձայն Գրադարանային ասոցիացիաների միջազգային դաշինքի ավանդադրման վերաբերյալ օրենսդրության ուղեցույցների (**IFLA Guidelines for Legal Deposit Legislation**) շատ երկրներ վստահում են այս օրինական գործոնին՝ որպեսզի ունենան լիարժեք և ամբողջական ազգային ավանդադրված հավաքածու: Ավանդադրման վերաբերյալ օրենքով սահմանված իրավագործությունների վերաբերյալ անշուշտ պետք է ընդունել առանձին Ակտ, կամ ընդգրկել այն հեղինակային իրավունքի, կամ գրադարանների վերաբերյալ օրենսդրության մեջ: Նիդեռլանդները այլ մոտեցում են ցուցաբերել տվյալ խնդրին. ազգային ավանդադրված հավաքածուն ստեղծվել է **Royal Library**-ի և հրատարակիչների միջև կամավոր ավանդադրման վերաբերյալ կնքված պայմանագրով:

Պրակտիկան

«Հրատարակիչը» այն անձն է, ով հրատարակում կամ տարածում է հրատարակությունները հանրության շրջանում: Հետևաբար, երկրի կամ տարածաշրջանի ներսում հրատարակված կամ տարածված ստեղծագործությունները բնականաբար ենթակա են ավանդադրման: Ավանդաբար ավանդադրումը տարածվում է տպագիր ստեղծագործությունների վրա՝ ընդգրկելով գրքեր թե պինդ և թե փափուկ կազմով (ներառյալ բոլոր հրատարակություններն ու վերանայված տարբերակները, բայց ոչ ուղղակի վերատպությունները), պարբերական հրատարակություններ, օր. ամսագրեր, թերթեր, տեղեկատու բյուլետեններ, տարեկան հաշվետվություններ, բոլոր թերթերի ամենօրյա և շաբաթական հրատարակություններ, առանձին երաժշտական ստեղծագործություններ, քարտեզներ, պլաններ, աղյուսակներ, կատալոգներ, բրոշյուրներ, պամֆլետներ: Սովորաբար տրամադրվում են բարձրորակ (ոչ վնասված) օրինակները: Ընդհանրապես բացառվում են այնպիսի ստեղծագործությունները, ինչպիսիք են՝ ներքին զեկույցները, տեղական տրանսպորտի չվացուցակները, գործնական

օրագրերը և օրացույցները, պլակատներն ու քննական թերթիկները, բայց ավանդապահ գրադարանը իրավասու է պահանջել այլ կոնկրետ ստեղծագործություններ ևս: Ավանդադրված ստեղծագործությունները սովորաբար մատչելի են գրադարանից օգտվողների համար միայն գրադարանի ընթերցասրահներում:

Ավանդադրված ստեղծագործությունները կարող են արտացոլված լինել նաև Ազգային մատենագրության մեջ և ավանդապահ գրադարանի ցանցային քարտարանում, որոնք հետազոտողների համար հանդիսանում են ստեղծագործություններ փնտրելու և տեղակայելու երկու հիմնական գործիքներ: Ազգային մատենագրությունը նույնպես օգտագործվում է գրադարանավարների և գրքի առևտրով զբաղվողների կողմից՝ գնելու նպատակով ընտրելու ստեղծագործություններ ոչ միայն իրենց երկրում, այլև ամբողջ աշխարհում:

Տեսալսողական և էլեկտրոնային ստեղծագործությունների ավանդադրումը

Բոլոր տեսակի ստեղծագործություններն արագ վերածվում են էլեկտրոնային ձևաչափերի թե առցանց, թե ցանցից դուրս: Տպագիր ստեղծագործությունները, ինչպես նաև ձայնագրությունները և ֆիլմերը թվայնացվում են: Էլեկտրոնային ստեղծագործությունները գերակշռում են ողջ աշխարհում՝ ընդգրկելով հատկապես գիտահետազոտական ստեղծագործությունների հրատարակումը: Ըստ Բրիտանական գրադարանի հաշվարկման «Մինչև 2020 թ. Միացյալ Թագավորության հետազոտական մենագրությունների 40%-ը մատչելի կլինի միայն էլեկտրոնային ձևաչափով, մինչդեռ մնացած 50%-ը կհրատարակվեն և տպագիր և թվային ձևաչափով: Նոր աշխատությունների սուկ 10%-ը տպագիր ձևաչափով մատչելի կլինի 2020 թվականին»: Հետևաբար, եթե 21-րդ դարի թվային մշակութային ժառանգությունը պետք է պահպանվի, ապա երկրները պետք է օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային ստեղծագործությունները նույնպես ընդգրկեն ավանդադրվող ստեղծագործությունների հավաքածուների մեջ:

Որոշ երկրներում էլեկտրոնային ձևաչափով ցանցից դուրս գտնվող ստեղծագործությունները, ինչպես օրինակ CD, DVD և համակարգչային սկավառակներ (օր.տեսալսողական ստեղծագործություններ, ինչպես օրինակ լսողական գրքեր, այլ հնչյունային ձայնագրություններ և CD-ի վրա ամրագրված ֆիլմեր ու համակարգչային ծրագրեր) ընդգրկված են ավանդադրման համակարգի մեջ, բայց սա անշուշտ համընդհանուր բնույթ չի կրում:

Քսան երկրներում թվային հրատարակությունների ավանդադրման և ընդհանրապես էլեկտրոնային ստեղծագործությունների ավանդադրման համաշխարհային առաջընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ Ավստրալիայի ազգային գրադարանի **PADI** կոչվող կայքէջում (**Preserving Access to Digital Information=Թվային տեղեկատվության մատչելիության պահպանություն**): Օրինակ,

- Երկրներ, որոնք ունեն ոչ առցանց էլեկտրոնային ստեղծագործությունների ավանդադրման օրենսդրություն. Ավստրիա (մշակում է օրենսդրություն առցանց ստեղծագործությունների համար), Ճապոնիա (առցանց ստեղծագործությունների կամավոր ավանդադրման մասին նախագծի մշակում), և Մինգապուր (առցանց ստեղծագործությունների կամավոր ավանդադրման համակարգի մշակում)։
- Երկրներ, որոնք ունեն և առցանց և ցանցից դուրս էլեկտրոնային ստեղծագործությունների ավանդադրման օրենսդրություն, կամ օրենսդրության նախագիծ (որոշ երկրներում օրենսդրությունը կարող է ընդունված լինել, բայց դեռ չկիրարկվել, մինչդեռ գործեն ավանդադրման կամավոր համակարգերը): Կանադա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իսլանդիա, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Հարավային Աֆրիկա, Շվեդիա

(ներբեռնելով շվեդական ինտերնետ կայքերը) և Միացյալ Թագավորություն:

Գրադարաններին առնչվող խնդիրներ

Գրադարանների համար ամենամեծ խնդիրը **թվային ստեղծագործությունների ավանդադրումն է**: 2001թ. UNESCO General Conference-ի կողմից թվային մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ ընդունված որոշումը քաջալերեց անդամ երկրներին ներկայացնել էլեկտրոնային ստեղծագործությունների օրինական ավանդադրման նախագիծը: Համարյա 10 տարի է անցել, բայց ավանդադրումը դեռ չի տարածվում տեղեկատվության էլեկտրոնային ձևաչափի վրա: Որոշ երկրներում դեռ չեն սկսել անդրադառնալ այս խնդրին, մինչդեռ մյուս, նույնիսկ լավ զարգացած տեղեկատվական ենթակառուցվածք ունեցող երկրներում դանդաղ առաջընթաց է նկատվում: Մինչդեռ արժեքավոր առցանց ստեղծագործությունները չեն ընդգրկվում ազգային հավաքածուների մեջ՝ անհասանելի դառնալով հետազոտողների համար: Հետևելով տպագիր ստեղծագործությունների կամավոր ավանդադրման ավանդույթին, Նիդեռլանդների Թագավորական գրադարանը բանակցել է առաջատար խոշոր հրատարակիչների հետ գիտական, տեխնիկական և բժշկական (STM) ստեղծագործությունների էլեկտրոնային հրատարակումների կամավոր ավանդադրման պայմանագրեր կնքելու վերաբերյալ:

Էլեկտրոնային ստեղծագործությունների ավանդադրումը կարևոր միջոց է էլեկտրոնային ամսագրերի, էլեկտրոնային գրքերի, ձայնագրությունների, ֆիլմերի **պահպանության** համար, կարծես հաստատելով այն պարզ ճշմարտությունը, որ «Որքան շատ օրինակներ՝ այնքան հավաքածուների ապահով պահպանում» “Lots of Copies Keep Stuff Safe” (known as LOCKSS). Հետևաբար, կարևոր է, որ պահպանության նպատակով պատճենման համար նախատեսված օրինական բացառությունները թույլատրեն գրադարաններին այնքան օրինակներ պատճենել տարբեր ձևաչափերով, որքան անհրաժեշտ է՝ հավաքածուների մշտական մատչելիությունն ապագայում ևս ապահովելու նպատակով:

Պաշտպանության տեխնիկական միջոցները կարող են արգելել գրադարաններին պատճենումներ կամ այլ օրինական գործողություններ կատարել: Էլեկտրոնային ստեղծագործությունների «օրիգինալ, մաքուր» տարբերակները պետք է հետևաբար ավանդադրվեն, կամ գրադարանը պետք է ապահովված լինի պաշտպանության տեխնիկական միջոցները (ՊՏՄ) շրջանցելու հնարավորությամբ: Գերմանիայում Ազգային գրադարանը կարողացել է հրատարակիչների հետ կնքել կամավոր համաձայնագիր, որը թույլ է տալիս գրադարաններին շրջանցելու պաշտպանության տեխնիկական միջոցները: Նորվեգիայում Ազգային գրադարանը ձեռք է բերել օրենքով հաստատված բացառություն, որը պաշտպանության տեխնիկական միջոցները շրջանցելու սահմանափակ հնարավորություն է ընձեռում գրադարանին՝ պահպանության նպատակով: Մեկ այլ խնդիր է **հեղինակային իրավունքով պահպանված էլեկտրոնային ստեղծագործությունների հասանելիությունը հանրության համար** նախքան հանրային սեփականություն դառնալը: Սովորաբար, հանրությունը կարող է մուտք ունենալ ազգային ինտերնետային արխիվին միայն տեղում՝ ավանդապահ գրադարանում կամ արխիվի այլ մասնաճյուղերի ապահով ցանցում: Որպեսզի հեղինակային իրավունքով պահպանված էլեկտրոնային ստեղծագործությունները ցանցի միջոցով հեռադիր կերպով մատչելի դառնան հանրությանը, սովորաբար անհրաժեշտ է ունենալ իրավատերերի թույլտվությունը: Բացի դրանից, որոշ ավանդապահ գրադարաններ նույնպես կարող են թույլատրել հետազոտողներին հեռադիր մատչելիություն ունենալ արխիվում գտնվող հեղինակային իրավունքով պահպանված էլեկտրոնային ստեղծագործություններին, որոնց առևտրային եղանակով ձեռքբերումը հնարավոր չէ:

Ազգային հավաքածուների զարգացումը սովորաբար կառավարվում է աշխարհագրական սահմաններով: Վեբկայքերում և ինտերնետում տեղադրված ստեղծագործություններից դժվար կլինի որոշել, թե դրանցից որոնք են անհրաժեշտ պարտադիր ավանդադրել, և մասնավորապես, որ վեբկայքերը պետք է ներբեռնվեն: Եվ կամավոր, և պետական համակարգեր են մշակվում ստեղծելու ազգային վեբ արխիվներ ազգային տիրույթով (domain), ազգային լեզվով և այլ կայքէջեր տվյալ երկրին վերաբերող բովանդակությամբ: Տվյալների պաշտպանության վերաբերյալ պարտադիր դրույթները ազգային օրենքներում, որոնք վերաբերում են անձնական տվյալների տարածմանը (տվյալներ ճանաչված մարդկանց մասին, որոնք դեռ կենդանի են, ինչպես օրինակ՝ նրանց անձնական և առողջական վիճակի մասին) պետք է հաշվի առնվեն, քանի դեռ հնարավոր չէ կանխատեսել՝ արդյոք օգտագործվող վեբկայքերի տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, թե՛ ոչ:

Էլեկտրոնային դարաշրջանին հարմարեցրած ազգային հավաքածուների զարգացման ռազմավարությունից ելնելով գրադարանները պետք է աշխատեն ռազմավարություն մշակողների և իրավատերերի հետ՝ համոզված լինելու, որ կան համապատասխան իրավական դրույթներ էլեկտրոնային ստեղծագործությունների կայուն ազգային հավաքածու ստեղծելու համար, որը մատչելի կլինի հանրության և հետազոտողների ապագա սերունդներին խելամիտ պայմաններով:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

British Library predicts 'switch to digital by 2020'. British Library Press Release, 29 June 2005.

<http://www.bl.uk/news/2005/pressrelease20050629.html>

Guidelines for audiovisual and multimedia materials in libraries and other institutions. IFLA Audiovisual and Multimedia Section, 2004. <http://archive.ifla.org/VII/s35/pubs/avm-guidelines04.htm> Available in several languages. See section 5. Acquisition and legal deposit

<http://archive.ifla.org/VII/s35/pubs/avm-guidelines04.htm#5>

Larivière, Jules. Guidelines for legal deposit legislation. IFLA and UNESCO, 2000.

<http://archive.ifla.org/VII/s1/gnl/legaldepl.htm>

Lor, Peter Johan and Sonnekus, Elizabeth A.S. Guidelines for legislation for national library services. IFLA Section of National Libraries, 1997 (Rev.) <http://archive.ifla.org/VII/s1/gnl/index.htm> See section 3.3.1 Legal deposit

<http://archive.ifla.org/VII/s1/gnl/gnl-i3.htm#env> (scroll down)

Music industry and book branch sign an agreement with the German National Library upon the duplication of material protected by technical measure. Joint Press Report. Die Deutsche Bibliothek, Börsenverein des Deutschen Buchhandels, Bundesverband der Phonographischen Wirtschaft, January 2005

<http://www.sub.uni-goettingen.de/frankfurtgroup/drms/drms.html>

Preserving the Memory of the World in Perpetuity: a joint statement on the archiving and preserving of digital information. IFLA/IPA Steering Group, 2002.

<http://archive.ifla.org/V/press/ifla-ipa02.htm>

Statement on the development and establishment of voluntary deposit schemes for electronic publications.

Conference of European National Librarians and the Federation of European Publishers, Luxembourg, September 2005.

http://www.nlib.ee/cenl/docs/05-11CENLFEP_Draft_Statement050822_02.pdf

Working Group of the Conference of Directors of National Libraries (CDNL). The legal deposit of electronic

publications. UNESCO, 1996.

<http://www.unesco.org/webworld/memory/legaldep.htm>

See also CDNL Vision for the Global Digital Library, October 2008.

http://www.cdnl.info/2008/CDNL_Vision_for_the_Global_Digital_Library.pdf

Գրականություն

Օրենսդրություն

Draft Resolution on the preservation of digital heritage (31C/DR.79 (COM.V). UNESCO General Conference 31st Session, Paris, 2001.

<http://unesdoc.unesco.org/images/0012/001239/123975e.pdf>

National Library of Australia. PADI (Preserving Access to Digital Information). Legal Deposit pages covering 20 countries.

http://www.nla.gov.au/padi/topics/_67.html

Զեկույցներ, հոդվածներ, փաստաթղթեր

Several relevant papers on legal deposit, too numerous to list here, were given at World Library and Information Congresses in Glasgow 2002 and Quebec 2008.

WLIC Glasgow 2002

<http://archive.ifla.org/IV/ifla68/prog02.htm>

Scroll down to

Tuesday 15.15-17.45 124. National Libraries: Legal Deposit and Copyright Laws: How they meet the National Libraries Mission

Wednesday 14.00-16.30 140. Bibliography and National Libraries: Bridging the gap between the publishing industry and national bibliographies

WLIC Quebec 2008

<http://archive.ifla.org/IV/ifla74/Programme2008.htm>

Scroll down to

Monday 13.45-18.00 95. Audiovisual and Multimedia, Copyright and other Legal Matters, National Libraries and Bibliography: The legal deposit of audiovisual and multimedia materials: practice around the world

Kenney, Anne R. Entlich, Richard, Hirtle, Peter B. et al. E-journal archiving metes and bounds: a survey of the landscape. CLIR pub 138

<http://www.clir.org/PUBS/abstract/pub138abst.html>

LOCKSS (Lots of Copies Keep Stuff Safe)

<http://www.lockss.org/>

Muir, Adrienne. Preservation, access and intellectual property rights challenges for libraries in the digital environment. London, Institute for Public Policy Research, June 2006.

<http://hdl.handle.net/2134/2181> (scroll down for PDF download)

Scott, Marianne. Legal Deposit of on-line materials and national bibliographies. 67th IFLA Council and General

Conference, Boston 16-25 August 2001.

<http://archive.ifla.org/IV/ifla67/papers/157-199e.pdf> Russian <http://archive.ifla.org/IV/ifla67/papers/157-199r.pdf>

Skarstein, Vigdis Moe. Strategies for a digital national library. WLIC, Milan, 23-27 August 2009

<http://www.ifla.org/files/hq/papers/ifla75/190-skarstein-en.pdf>

Verheul, Ingeborg. Networking for digital preservation: current practice in 15 national libraries. IFLA Publications 119. Munich, K. G. Saur, 2006

<http://archive.ifla.org/V/pr/saur119.htm>

Free download

<http://www.ifla.org/files/hq/publications/ifla-publications-series-119.pdf>

Von Hielmcrone, Harald. Electronic publication: problems of archiving and access to archived information: legal deposit, data protection and related topics. WLIC, Quebec, 10-14 August 2008

<http://archive.ifla.org/IV/ifla74/papers/087-Hielmcrone-en.pdf>

French <http://archive.ifla.org/IV/ifla74/papers/087-Hielmcrone-trans-fr.pdf>

Revised October 2009

Ծանոթագրություն

Հայաստանի Հանրապետության օրենքը « Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» ընդունվել է 2005 թ. հոկտեմբերի 4-ին.

Անհայտ հեղինակի ստեղծագործություններ («Որբ» ստեղծագործություններ)

Ինչ է անհայտ հեղինակի ստեղծագործությունը

«Որբ» ստեղծագործություններ են համարվում հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունները, որոնց իրավատերերին, սակայն, գտնելը դժվար է կամ անհնար: Սա նշանակում է, որ անհնար է թույլտվություն ստանալ այդ ստեղծագործությունների այնպիսի օգտագործման համար, որը նախատեսված չէ հեղինակային իրավունքի մասին օրենքով սահմանված բացառություններով (որի օգտագործման համար, հետևաբար, թույլտվություն է պահանջվում):

Միացյալ Նահանգների Հեղինակային իրավունքի գրասենյակը (US Copyright Office) հայտարարել է, որ «հասարակության շահերը կվնասվեն, երբ ստեղծագործությունները նրանց համար մատչելի չլինեն լոկ այն պատճառով, որ հնարավոր չէ գտնել իրավատիրոջը, որովհետև հնարավոր է, որ իրավատերը ողջ չէ և չկա այն հաստատությունը, որին փոխանցվել են հեղինակի գույքային իրավունքները»:

Անշուշտ, հարկ էնք համարում տեղեկացնել, որ «նման ստեղծագործությունների հեղինակային իրավունքով պահպանված լինելու անորոշակիությունը կարող է խանգարել շատ այլ ստեղծագործողների՝ օգտվելու այս ստեղծագործություններից նոր ստեղծագործություններ ստեղծելու, կամ դրանք հանրությանը մատչելի դարձնելու նպատակով»:

Դյուքի համալսարանի իրավաբանական դպրոցի հանրության սեփականության ուսումնասիրության կենտրոնը (The Center For the Study of the Public Domain at Duke Law School) պարզել է, որ անհայտ հեղինակի ստեղծագործությունները («որբ» ստեղծագործությունները) հավանաբար 20-րդ դարի մշակութային արժեքների մեծ մասն են կազմում: Սա իր ազդեցությունն է թողնում ստեղծագործողների և օգտվողների վրա: Նոր հեղինակները հաճախ ցանկանում են օգտվել առկա ստեղծագործություններից, բայց, չնայած բոլոր ջանքերին՝ չեն կարողանում գտնել իրավատերերին: Այսպիսի խնդիր է առաջանում այդ տիպի ստեղծագործությունների պահպանման, կամ թվայնացման ծրագրեր իրականացնելիս, կամ պատմական նյութեր հրատարակելիս, երբ անհրաժեշտություն է առաջանում թույլտվություն ստանալ օգտագործելու լուսանկարներ, նամակներ, հնչյունագրեր, տեսաժապավեններ և այլ ստեղծագործություններ, որոնք սկնհայտորեն ունեն կրթական և մշակութային արժեք, բայց չունեն իրավատերեր, ումից կարելի է թույլտվություն ստանալ:

Քանի որ իրավատերերին գտնելու համար, հնարավոր է, որ մեծ ծախսեր պահանջվեն, օգտվողները ետ են կանգնում անհայտ հեղինակի ստեղծագործությունն ուսումնասիրելու մտադրությունից, և այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են գրադարանները, նույնպես չեն կարողանում օգտագործել այդ ստեղծագործությունները, նույնիսկ, եթե պատրասատ են վճարել դրա համար: Շատ դեպքերում այս գործերը կարող են «լքված» լինել, որովհետև այլևս իրավատիրոջը շահույթ չեն բերում: Երբեմն հաջողվում է գտնել իրավատերերին, որոնք հաճույքով են ընդունում իրենց գործերի օգտագործման փաստը՝ դրա դիմաց մինիմալ փոխհատուցում պահանջելով:

Կան իրավատիրոջը չգտնելու մի քանի պատճառներ, օր.

- հնարավոր է, որ հեղինակի անունը անհայտ լինի, կամ, նույնիսկ, եթե հայտնի հեղինակ է, մահացած լինի, չունենա հայտնի ժառանգներ, և մահվան տարեթիվն էլ հայտնի չլինի:
- հնարավոր է, որ այն հրատարակչությունը, որին պատկանում են գույքային իրավունքները, արդեն դուրս է եկել բիզնեսից՝ չթողնելով իրավահաջորդներ, կամ միավորվել է այլ հրատարակչության հետ (հրատարակչությունների միավորումը տարածված երևույթ է), և

ցուցակներն այն հեղինակների, որոնց գործերը հրատարակվել են տարիներ շարունակ այդ ընկերության կողմից, պահպանված չլինեն:

- ստեղծագործությունը կարող է պարունակել այլ հեղինակների աշխատանքներ (օր. լուսանկարներ), որոնք նույնպես հեղինակային իրավունքով պահպանված են, և որոնցից մեկի հեղինակն անհայտ է:

Անհայտ հեղինակի ստեղծագործություն կարող են լինել հրատարակված և չհրատարակված գրական ստեղծագործությունները, լուսանկարները, պատկերազարդումները, ֆիլմերը, երաժշտական մրցության արձանագրությունները և այլ կատեգորիայի աշխատանքներ:

Պրակտիկան

Անհայտ հեղինակի ստեղծագործությունների հետ կապված խնդիրն ի հայտ եկավ մի շարք պատճառներով:

Ոչ մի ձևականություն

Բեռնի կոնվենցիան (ընդունված 1886թ, վերանայված 1971թ.) չի ընդունում որևէ **ձևականություն** հեղինակային իրավունքը «վայելելու և կիրառելու» համար: Ձևականությունների բացակայությունը նշանակում է, որ հեղինակից չի պահանջվում գրանցել իր հեղինակային իրավունքը, կամ պաշտոնապես հաստատագրել այն: Այլ խոսքերով ասած՝ հեղինակային իրավունքի պահպանությունը ծագում է, երբ ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք հանդիսացող ստեղծագործությունը «ամրագրվում է» նյութական կրիչի վրա գրավոր, կամ ձայնագրված տարբերակով: Որոշ երկրների նման Միացյալ Նահանգներում ևս հեղինակների համար գործում է հեղինակային իրավունքի կամավոր գրանցման համակարգ, որը գրանցում է սուկ հեղինակային իրավունքը, բայց չի ապահովում հեղինակային իրավունքի պահպանություն: Սա նշանակում է, որ իրավատիրոջը գտնելու խնդիրը պետք է լուծի օգտագործողը միայն: Սա անհնար է դառնում սեփականության իրավունքի պաշտոնապես հաստատագրման բացակայության պայմաններում, առավել ևս, երբ արտերկրի հեղինակի ստեղծագործությունից են օգտվում: Սա ակնհայտորեն խոչընդոտող հանգամանք է այնպիսի օրինական օգտվողների համար, ինչպիսիք գրադարաններն են, որոնց նպատակն է այդ գործերը մատչելի դարձնել հանրությանը, ստեղծագործողներին, որոնք այս ստեղծագործությունների հիման վրա կստեղծեն նորերը, օր. լուսանկարների օգտագործում նոր գրքի համար, հին տեսաժապավենների օգտագործում նոր վավերագրական ֆիլմ ստեղծելու համար:

Գույքային իրավունքների պահպանության ժամկետի երկարաձգումը

Ամեն անգամ, երբ երկարաձգվում է գույքային իրավունքների պահպանության ժամկետը, ավելի է մեծանում իրավատերերին գտնելու և ավելի վաղ ստեղծված ստեղծագործությունների օգտագործման համար թույլտվության ձեռքբերման դժվարությունները: Որքան քիչ ստեղծագործություններ հանրության սեփականություն դառած լինեն, այնքան շատ կլինեն ստեղծագործությունները, որոնց օգտագործման համար թույլտվություն է պահանջվում: Համաձայն Բեռնի կոնվենցիայի(1886) միջազգային ստանդարտի՝ հեղինակի գույքային իրավունքները պահպանվում են նրա կենդանության օրոք և 50 տարի մահից հետո: Օրինակ, 1920թ. 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ խրամատներում անցկացրած իր զինվորական կյանքի մասին գրած հեղինակի, որ մահացել է 1958թ. 70 տարեկան հասակում, ստեղծագործությունը հեղինակային իրավունքով շարունակում է պահպանված մնալ մինչև 2008 թ.: Եթե գրադարանը

ցանկանում է 2006թ. կազմակերպված Մոմֆի ճակատամարտի 90-ամյակին նվիրված ցուցահանդեսի համար թվայնացնել մի պոեմ վերը նշված հեղինակից, ապա պետք է հեղինակի ժառանգներից թույլտվություն ստանա: Այն երկրներում, որտեղ հեղինակի գույքային իրավունքների պահպանության ժամկետը երկարաձգվել է մինչև 70 տարի, ուրեմն ստեղծագործությունը պահպանված կլինի մինչև 2028թ., ամբողջ 108 տարի գրքի ստեղծման օրվանից հաշված: Իրավատերերին գտնելու հնարավորություններն այսպիսի դեպքերում ակնհայտորեն նվազում են և, ի վերջո, գրադարանը ետ է կանգնում ցուցահանդեսի համար տվյալ ստեղծագործությունն օգտագործելու մտադրությունից:

Միացյալ Նահանգների հեղինակային իրավունքի պահպանության գրասենյակը իր մտահոգությունն է արտահայտել հեղինակի գույքային իրավունքների պահպանության ժամկետի երկարաձգման առնչությամբ՝ պարզաբանելով, որ այն կխափանի վնասված, հին ֆիլմերի պահպանման գործը, ֆիլմեր, որոնց հեղինակներին դժվար է գտնել, այնինչ այդ ֆիլմերի ֆորմատը փոխելով, նրանք ավելի երկար կպահպանվեն: Արդյոք ֆիլմադարանի աշխատակիցը պետք է ռիսկի դիմի և թվայնացնի այդ ֆիլմը՝ պահպանելով պատմության մշակութային արժեքներից մեկը, ի նկատի ունենալով, որ մի օր կհայտնվի իրավատերը՝ հայցադիմումը ձեռքին, թե՛ ետ կանգնի այդ մտադրությունից՝ հավերժ կորցնելով այդ ստեղծագործությունը:

(Հեղինակի գույքային իրավունքների պահպանության ժամկետի մասին առավել մանրամասն տես այս ձեռնարկի «**Հեղինակային իրավունք, գործողության ժամկետը և հանրության սեփականությունը**» գլուխը):

Առցանց (օնլայն) աշխատանքների աճող մատչելիությունը

Անհայտ հեղինակի ստեղծագործությունների հետ կապված պրոբլեմը վերաբերում է ոչ միայն ավելի վաղ ստեղծված ստեղծագործություններին, այլ նաև՝ ժամանակակից թվային գործերին: Ինտերնետը գիտական աշխատանքների փնտրման և տարածման նոր հնարավորություններ է տալիս, բայց այս գայթակղիչ առիթից օգտվելու համար, երբեմն իրավատերերի թույլտվությունն է պահանջվում, որոնց հետ տարբեր պատճառներով անհնար է լինում հաղորդակցվել, օր. վեբկայքի վրա նրանց էլեկտրոնային փոստի հասցեն կարող է այլևս չգործել: Ունենալով ամբողջ աշխարհով սփռված օգտվողներ, անհաղթահարելի դժվարություն է առաջանում իրավատերերին Հնդկաստանում, Եվրոպայում, կամ Հարավային Աֆրիկայում հայտնաբերելու գործում:

«Creative Commons»-ը առաջարկում է ստեղծագործողներին լիցենզավորել իրենց գործերը օգտագործման տարբեր ձևերի համար, լիցենզիաներ, որոնք՝ պարունակելով նաև տեղեկատվություն հեղինակային իրավունքի վերաբերյալ, դրանով իսկ թեթևացնում են իրադրությունը, բայց իհարկե չեն լուծում վերը շարադրված բոլոր պրոբլեմները:

Որոշ հնարավոր լուծումներ

Մի քանի երկրների օրենսդիր ու պետական մարմիններ առաջարկել են վերը նշված խնդրի հետևյալ հնարավոր լուծումները:

Օրինակներ.

Կանադայում Հեղինակային իրավունքի հարցերով զբաղվող վարչությունը (Copyright Board) կարող է տրամադրել ոչ բացառիկ լիցենզիաներ այն հրատարակված գործերն օգտագործելու համար, որոնց իրավատերերին անհնար է գտնել: Յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է ձեռք բերել նման

լիցենզիա, պետք է լրացնի դիմումի ձև, որտեղ պետք է տեղեկացնի, որ ինքն ամեն հնարավոր ջանք գործադրել է իրավատիրոջը գտնելու համար: Եթե հանձնաժողովը գտնում է, որ իրոք գործադրվել են «անհրաժեշտ ջանքեր», ապա՝ առաջարկելով իր պայմաններն ու իրենց վճարվող վարձատրությունը, կթույլատրի ստեղծագործության օգտագործումը: Վճարված վարձատրությունը փոխանցվում է գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող համապատասխան ընկերություններ, եթե 5 տարվա ընթացքում օրինական իրավատերը չի հայտնվում դրանք հավաքելու նպատակով: Այնուամենայնիվ, Կանադական համակարգը գործում է միայն հայտնի, բայց դժվար հայտնաբերվող իրավատերերի համար, այլ ոչ՝ անհայտ իրավատերերի: 1990թ.-ից գործող այս նախաձեռնության շնորհիվ տրվել են 125 լիցենզիաներ:

Եվրախորհուրդը 2006թ. ընդունած իր «Երաշխավորագիր թվային գրադարանների համար» (**Recommendation on digital libraries**) փաստաթղթով հավաստում է, որ լիցենզային մեխանիզմների զարգացումն ու իրավատերերի հետ սերտ համագործակցությունը քաջալերման արժանի է հատկապես անհայտ հեղինակի և չտպագրված ստեղծագործությունների ոլորտում: Խորհուրդը հետևաբար երաշխավորում է, որ Եվրամիության անդամ երկրները բարելավեն անհայտ հեղինակի ստեղծագործությունների թվայնացման աշխատանքները՝ ապահովելով դիմողներին անհայտ հեղինակի, ինչպես նաև հանրության սեփականություն դարձած ստեղծագործությունների ցուցակով:

Միացյալ Թագավորությունը օրենքով հաստատված ավելի սահմանափակ հնարավորություններ է առաջարկում՝ հավաստելով, որ հեղինակային իրավունքի խախտում չի կատարվի, եթե խելամիտ բոլոր քայլերն արվեն իրավատիրոջը գտնելու կամ համոզվելու համար, որ հեղինակային իրավունքի տևողության ժամկետը սպառվել է, որ հեղինակը մահացել է 70 տարի առաջ կամ ավելի վաղ: Այս դրույթը տարածվում է անտիպ գործերի մի փոքր խմբի վրա, օր. շատ վաղ գործեր, որոնց իրավատերերին անհնար է գտնել: Կանադական օրենքի նման, այն հստակ չի սահմանում «խելամիտ ջանքեր» հասկացությունը: The Gowers Review Report on Intellectual Property (December 2006) առաջարկում է, որ Միացյալ Թագավորության Արտոնագրային գրասենյակը կամավոր կերպով հանձն առնի հեղինակային իրավունքով պահպանված գործերի գրանցումը, և, Միացյալ Թագավորության կառավարությունը աշխատի անտիպ ստեղծագործությունների նկատմամբ կիրառվող օրինական դրույթների վրա, ինչպես Եվրամիության օրենքի շրջանակներում է այն կատարվում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հեղինակային իրավունքի գրասենյակը (**Copyright Office**) 2006թ. հունվարին անհայտ հեղինակի ստեղծագործությունների վերաբերյալ զեկուցում հրապարակեց: Այնտեղ ասվում է, որ անհայտ հեղինակի ստեղծագործությունների ենթադրյալ հրատարակիչները առաջին հերթին մանրակրկիտ որոնումներ կատարեն ստեղծագործությունների իրավատերերին գտնելու համար: Եթե անհայտ հեղինակի ստեղծագործությունը վերահրատարակվում է (օր. թվայնացվում է), և օրինական իրավատերերը հայտնվում են ու իրենց գործերն օգտագործելու համար վճար են պահանջում, նրանք իրավասու են ստանալ «խելամիտ փոխհատուցում», բայց դա չի դիտվի որպես փոխհատուցում՝ տրված հեղինակային իրավունքի խախտման համար:

(Առավել մանրամասն Creative Commons-ի մասին, տես այս ձեռնարկի «**Creative Commons: an «open content» license** բաժնում):

Գրադարաններին առնչվող խնդիրները

Անհայտ հեղինակի ստեղծագործությունների հետ կապված խնդիրը մեծ վնաս է պատճառում գրադարաններին և կարող է նույնիսկ խափանել նրանց հիմնական գործառույթը, այն է՝ համաշխարհային մշակութային ժառանգության պահպանումը և հանրությանն այն մատչելի

դարձնելը: Գրադարանների կողմից ստեղծագործությունները հանրությանը մատչելի դարձնելու միակ արդյունավետ և հնարավոր եղանակը իրենց հավաքածուների թվայնացումն է: Այնուամենայնիվ՝ ստեղծելով անհայտ հեղինակի ստեղծագործություններ պարունակող թվային հավաքածուներ, գրադարանը հարկադրված կլինի ապացուցել, որ իր կողմից հեղինակային իրավունքի մասին օրենքի խախտում չի կատարվել, և այդ վստահությունը ձեռք բերելու համար գրադարանը ստիպված կլինի հաղթահարել շատ դժվարություններ, այդ թվում նաև՝ ֆինանսական: Որոշ երկրներում գրադարաններն ունեն օրենքով սահմանված իրավունքներ՝ վերարտադրելու իրենց հավաքածուներից գործեր օր. պահպանության նպատակով, այսինքն գրադարաններին տրվում են օրինական իրավունքներ՝ կատարելու թվայնացման աշխատանքներ: Այնուամենայնիվ, գրադարանին չի թույլատրվում առանց իրավատիրոջ թույլտվության հեռահար մուտք ունենալ դեպի անհրաժեշտ գործերը:

Հիմնական արձագանքը, որ ստացվում է արխիվի աշխատակիցներից, գրադարանավարներից, ֆիլմ վերականգնողներից, նկարիչներից, գիտնականներից, ուսուցիչներից, փոքր հրատարակչություններից և ուրիշներից, հետևյալն է. իրենք չեն կարող իրենց թույլ տալ անօրինական քայլեր անել, այսպիսով, խուսափում են թվայնացման աշխատանքներ կատարելուց այնքան ժամանակ, քանի դեռ չի բացահայտվել օրինական իրավատերը, կամ ստեղծագործությունը չի դարձել հանրության սեփականություն: Պետական բյուջեից ֆինանսավորվող հաստատությունները, ինչպիսիք են գրադարաններն ու համալսարանները, ինչպես նաև փոքր ձեռնարկատերերը, չեն ուզում ռիսկի դիմել, որովհետև չեն կարող իրենց թույլ տալ դատական պրոցեսներին մասնակցելու նպատակով իրավաբան վարձել:

Արդյունքում անհայտ հեղինակի ստեղծագործությունները անհասանելի են մնում, չեն վերամշակվում անհայտ հեղինակի կարգավիճակ ունենալու պատճառով: Այս անորոշության պատճառով անհրաժեշտություն է առաջանում՝ մշակել հեղինակային իրավունքի վերաբերյալ մի կարևոր քաղաքականություն՝ խթանելու հանրության շրջանում նոր ստեղծագործությունների ստեղծման ու տարածման գործընթացը: Գրադարանները համախոհների և օրենսդիր մարմինների հետ միասին պետք է օրեցօր աճող այս խնդրի իրական լուծումներ գտնեն:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

Association of Research Libraries

<http://www.arl.org/pp/ppcopyright/orphan/index.shtml>

<http://www.arl.org/pp/ppcopyright/orphan/orphanresources.shtml>

American Library Association Google Book Search Settlement

<http://wo.ala.org/gbs/>

Orphan works <http://wo.ala.org/gbs/>

<http://www.ala.org/ala/aboutala/offices/wo/woissues/copyright/federallegislation/orphanworks/orphanworks.cfm>

IFLA/IPA joint statement on orphan works. June 2007

<http://www.ifla.org/en/statements/joint-iflaipa-statement-on-access-to-orphan-works>

IFLA/IPA joint statement on orphan works and mass digitisation (2007)

<http://archive.ifla.org/VI/4/admin/ifla-ipaOrphanWorksJune2007.pdf>

Orphan works and mass digitisation. British Library, 2008. <http://www.bl.uk/ip/> (scroll down)

Position statement on orphan works. LACA: the Libraries and Archives Copyright Alliance, December 2007.

<http://www.cilip.org.uk/policyadvocacy/copyright/statements>

Գրականություն

ARROW (Accessible Registries of Rights Information and Orphan Works towards Europeana)

<http://www.arrow-net.eu/>

Center for the Study of the Public Domain, Duke Law School <http://www.law.duke.edu/cspd/orphanworks.html>

Columbia University's Copyright Advisory Office <http://copyright.columbia.edu/permissions>

Copyright Board Canada - Unlocatable Copyright Owners <http://www.cbcca.gc.ca/unlocatable-introuvables/index-e.html>

European Commission Digital Libraries Initiative High level Expert Group

http://ec.europa.eu/information_society/activities/digital_libraries/experts/hleg/meetings/index_en.htm (scroll down to *5th meeting - 4 June 2008*):

- Press Release
- Final report on Orphan Works and Out-of-Print Works and Annexes 1-7
- Memorandum of Understanding on Orphan Works
- Sector-specific guidelines on diligence search criteria for orphan works - Joint Report & Appendix to the Joint Report - Sector Reports

FOB (Firms Out of Business)

www.fob-file.com

Google Books Settlement

<http://books.google.com/googlebooks/agreement/>

Kopinor. Extended Collective License - the Nordic Solution

<http://www.kopinor.org/opphavsrett/avtalelisens>

MILE (Metadata Image Library Exploitation) Orphan Works Database

<http://orphanworks.ssl.co.uk/>

UK Intellectual Property Office

<http://www.ipo.gov.uk/c-policy-orphanworks>

http://www.ipo.gov.uk/ipo_c-orphanworks_paper0809.pdf

U.S. Copyright Office

<http://www.copyright.gov/orphan/>

<http://www.copyright.gov/orphan/orphan-report.pdf>

The WATCH File (Writers and Artists and Their Copyright Holders)

<http://tyler.hrc.utexas.edu/>

Revised October 2009

Ծանոթագրություն.

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», հոդված 64. Կազմակերպության գործառույթները

թ) հեղինակին կամ հարակից իրավունքների իրավաստիրոջն օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետում չհայտնաբերելու դեպքում նրան հասանելիք գումարն օգտագործում է ի շահ հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների այլ իրավատերերի և կազմակերպության զարգացման:

Գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարում

Ինչ է գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարումը

Ըստ հեղինակային իրավունքի մասին օրենքի, հեղինակները, կատարողները, լուսանկարիչները և այլ իրավատերեր բացառիկ իրավունք ունեն թույլատրելու իրենց ստեղծագործությունների օգտագործումը: Նրանք կարող են փոխանցել իրենց գույքային իրավունքների կառավարումը հատուկ կազմակերպությունների, որոնք կոչվում են հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ, կամ «հոնորարներ հավաքող ընկերություններ», կամ «ընկերություններ», որպեսզի այդ կազմակերպությունները զբաղվեն իրենց գույքային իրավունքների կառավարմամբ: Իրավատերերը կարող են դա իրականացնել կամավոր պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով: Արդյունքում, իրավունքները իրականացվում են հոնորարներ հավաքող ընկերությունների միջոցով և օգտագործողներն ավելի արդյունավետ եղանակով են համագործակցում նրանց հետ, քան անմիջական իրավատերերի հետ կապ հաստատելով:

Գոյություն ունեն տարբեր ընկերություններ տարբեր կատեգորիայի իրավունքների համար: Ընդհանրապես, հրապարակային կատարման իրավունքները կառավարող ընկերությունները լիցենզիաներ են տրամադրում երաժշտության կենդանի և ձայնագրությունների միջոցով կատարման համար հասարակական այնպիսի վայրերում, ինչպիսիք են ռադիո և հեռուստատեսության ստուդիաները, ռեստորաններն ու խանութները: Հասարակական վայրում, ինչպիսին բարն է, երաժշտության կատարման համար նույնպես պահանջվում է հնչյունագիր արտադրող կամ ձայնագրող ստուդիաների իրավունքները կառավարող ընկերության կողմից տրված լիցենզիա՝ ձայնագրությունների կամ հնչյունագրերի օգտագործման համար: «Մեխանիկական իրավունքը կառավարող» ընկերությունները լիցենզիա են տալիս երաժշտությունը տարբեր ձևաչափերով տարբեր նպատակների համար ձայնագրելու վերաբերյալ՝ օր. հարսանիքներ, կամ տնային վիդեո: Նկարիչների և դիզայներների իրավունքները կառավարող ընկերությունները լիցենզիա են տալիս նկարիչ-մուլտիպլիկատորների, ճարտարապետների, մուլտֆիլմերի կերպավորողների (animator) և այլոց գործերի օգտագործման համար: Ի հավելումն ասվածի, կարող են լինել նաև հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող, այսինքն՝ հոնորարները հավաքող այնպիսի ընկերություններ, որոնք լիցենզիա են տալիս մասնագիտացված բնագավառներում ստեղծագործությունների օգտագործման համար, ինչպիսիք են՝ Քրիստոնեական երաժշտությունը, ուսուցողական նպատակներով ռադիոհեռուստատեսային հեռարձակումները և այլն:

Ընդհանրապես, հեղինակների գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող, այսինքն՝ հոնորարներ հավաքող ընկերությունների գործառույթներն են.

- լիցենզային պայմանագրով թույլատրել օգտագործողներին՝ անհատներ, գրադարաններ, հեռարձակող կազմակերպություններ, արտատպող հիմնարկություններ և այլն, օգտագործելու հեղինակային իրավունքը պահպանվող ստեղծագործությունը օրենքով սահմանված կարգով,
- հավաքել հոնորարներն ու բաշխել իրենց անդամների՝ իրավատերերի միջև,
- պաշտպանել իրենց իրավատերերի իրավունքները,
- կնքել փոխադարձ համագործակցության պայմանագրեր օտարերկրյա պետություններում գործող հոնորար հավաքող նմանատիպ ընկերությունների հետ:

Չեն կարող ստեղծվել նույն իրավունքները կոլեկտիվ կառավարող երկու ընկերություն: Նրանք կարող են տարբերվել ըստ օրենսդրության շրջանակների, որի հիման վրա ստեղծվել են, ըստ իրենց կառուցվածքի, գործառույթների և օգտագործողներին տրվող իրավունքների: Որոշ

ընկերություններ էլ լիցենզիաներ չեն տրամադրում, այլ փոխարենը հավաքում են հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութերի պատճենման սարքավորումներ օգտագործելու համար վարձատրություն (levies), ինչպիսիք են պատճենման և ֆաքսի մեքենաները, համակարգչի կարծրապնակը (hard disk) և այլն: Գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող ընկերությունները շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններ են և ներկայացնում են այն իրավատերերին, ովքեր հիմնադրել և լիազորել են կազմակերպությանը գործունեություն իրականացնել:

Վերարտադրության իրավունքները կառավարող կազմակերպություններ (Reproduction Rights Organizations) (ՎԻԿԿ)

Գրադարաններն իրենց գործունեության ընթացքում կարիք կունենան ստանալ լիցենզիա վերարտադրության իրավունքները կառավարող վերոնշյալ ցանկացած տեսակի կազմակերպությունից: Այնուամենայնիվ, ավելի հաճախ, գրադարանը գործ կունենա ռեպրոգրաֆիական (արտատպման) եղանակով վերարտադրության համար լիցենզիա տրամադրող կազմակերպության հետ: Այն լիցենզիա է տալիս գրքերի, ամսագրերի և այլ նյութերի ինչպես տպագիր, այնպես էլ էլեկտրոնային տարբերակների արտատպման համար: ՎԻԿԿ-ն, մյուս բոլոր ընկերությունների նման, միջնորդ օղակ է իրավատերերի և օգտվողների միջև: Այնպիսի իրավատերերը, ինչպիսիք են՝ հեղինակները և հրատարակիչները, հանձնարարում են ՎԻԿԿ-ին կառավարել իրենց անունից արտատպման թույլտվության իրենց իրավունքները: Կառավարող ընկերությունն էլ հետագայում լիցենզիաներ է տրամադրում անհատներին և ինստիտուտներին՝ արտատպված նյութի օգտագործման կոնկրետ եղանակի համար: ՎԻԿԿ-ը հավաքում է վարձատրությունը, կատարում վարչական ծախսերի համար մասհանում և մնացած գումարը վճարում իրավատերերին որպես հոնորար: ՎԻԿԿ-եր գործում են Եվրոպայի, Ասիայի և Խաղաղ Օվկիանոսի շրջանի, Լատինամերիկյան, Կարիբյան և Աֆրիկյան մոտավորապես 55 երկրներում: Շատ ՎԻԿԿ-եր միմյանց հետ կնքում են երկկողմանի պայմանագրեր՝ լիցենզավորելու միմյանց գործերը, և հետագայում փոխանցելու հոնորարները այլ երկրների «քույր» կազմակերպությանը, օր. Հարավային Աֆրիկայում լիցենզիայի շրջանակներում ամերիկացի հեղինակի աշխատանքի արտատպման համար վճարը կփոխանցվի ամերիկյան հավաքող կազմակերպությանը*:

Պրակտիկան

Գոյություն ունեն երեք հիմնական տեսակի լիցենզիաներ, որ առաջարկվում են ընկերությունների կողմից: Որոշ լիցենզիաներ ոչ բանակցելի են ստանդարտ գնացուցակով՝ կախված կազմակերպության տեսակից ու չափից և արտատպման ծավալից: Լիցենզիաները, որոնք նախատեսված են ամբողջական սեկտորների համար, ինչպես բարձրագույն կրթությունն է, կարող են բանակցելի լինել:

Անհատական լիցենզիա (Individual license)-Տրվում է կոնկրետ ստեղծագործությունը կոնկրետ ձևով անհատի կողմից օգտագործելու համար, այլ խոսքերով ասած՝ միայն օգտագործման մեկ ձևի համար: Օրինակ, գրադարանը կարող է թվայնացնել մեկ հոդված տպագիր ամսագրից ուսանողին առցանց ռեժիմով կարդալու հնարավորություն տալու համար:

Ընդհանուր լիցենզիա (Blanket license) (Ամբողջական, բոլոր իրավունքները ներառած լիցենզիա)-Այն ընդգրկում է բոլոր իրավատերերի նույն կատեգորիայի ստեղծագործությունները: Օրինակ, հեռարձակող ընկերությունը կարող է թույլտվություն ստանալ կոնկրետ ժանրի և կոնկրետ ժամանակաշրջանի ստեղծագործությունը օգտագործելու վերաբերյալ, օր.՝ ռոքնռոլ-ի ստեղծագործու-

թյունների 1960-ական թվականների երաժշտության տոնակատարության համար օգտագործելու վերաբերյալ;

Օրինական լիցենզիա (Legal license) - Որոշ երկրներում արտատպման եղանակով վերարտադրության լիցենզիան՝ թույլտվությունը, նախատեսված է օրենքով, և իրավատերը օրինական վարձատրության իրավունք ունի, որը հավաքվում է ՎԻՎԿ -ն կողմից: Այս դեպքում իրավատիրոջ համաձայնությունը չի պահանջվում: Եթե հոնորարի չափը սահմանված է օրենքով, սա կոչվում է «օրենքով հաստատված լիցենզիա»: Եթե իրավատերերը օգտագործողների հետ կարող են բանակցել հոնորարի չափը, դա կոչվում է «հարկադիր լիցենզիա»:

Ընդլայնված կոլեկտիվ լիցենզիա (Extended collective license) –Սովորաբար, գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները կարող են լիցենզային պայմանագրեր կնքել միայն այն իրավատերերի անունից, ովքեր այդ կազմակերպության անդամներ են: Ընդլայնված կոլեկտիվ լիցենզիան տարածում է հեղինակային իրավունքի լիցենզիայի ազդեցությունը նաև այն իրավատերերի վրա, ովքեր տվյալ կազմակերպության անդամ չեն: Այս լիցենզիան օգտագործողներին հնարավորություն է տալիս պատճենել նյութերը առանց վախ ունենալու, որ այդպիսի անհատ իրավատերերի կողմից, ովքեր լիցենզիան տրամադրող ՎԻՎԿ անդամ չեն, կարող է հայց ներկայացվել: Այսպիսի լիցենզիան, ի սկզբանե ընդունված լինելով սկանդինավյան երկրների կողմից, ներկայումս օգտագործվում է միայն մի քանի երկրների կողմից:

Ժամանակի ընթացքում գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող ընկերությունների հիմնական գործառույթը դարձավ հեղինակային իրավունքի պաշտպանության առավել ուժեղացումը: Օր. Անգլիայի հեղինակային իրավունքով պահպանված գործերի լիցենզավորման գործակալությունը (UK Copyright Licensing Agency) որպես պարզևստում՝ 40 դոլլար է տալիս նրանց, ովքեր կհայտնեն անօրինական արտատպման մասին^{xi}: Արտատպման եղանակով վերարտադրության իրավունքները կառավարող կազմակերպությունների միջազգային դաշինքը (IFRRO) Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO) հետ ունի համագործակցության համաձայնագիր՝ «ամբողջ աշխարհում մտավոր սեփականության իրավունքների պահպանությունը խթանելու» վերաբերյալ, որն ընդգրկում է նաև ամբողջ աշխարհում սեմինարների ու ուսուցողական ծրագրերի իրականացում^{xii}:

Գրադարաններին առնչվող խնդիրները

Գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությունները, ընկերությունները ուսումնական հաստատություններին կարող են առաջարկել մի շարք արտոնություններ.

- Օգտվողներին օրինական պատճենելու հնարավորություն տալ, որն այլ կերպ օրենքով նախատեսված չէ: Այլ խոսքերով ասած, թույլ տալ գրադարաններին և գրադարանից օգտվողներին արտատպել ավելին, քան օրինական նախատեսված բացառություններն են (հարկե վարձատրության դիմաց),
- նրանք կարող են օգնել գրադարաններին հաղթահարելու հեղինակներին կամ իրավատերերին գտնելու հետ կապված դժվարությունները՝ նրանցից ստեղծագործության օգտագործման լիցենզիա ձեռք բերելու նպատակով: Շատ դեպքերում սա կարող է անհնար լինել (տես «Անհայտ հեղինակի ստեղծագործություններ» գլուխը),
- նրանք զբաղվում են տարբեր հեղինակային իրավունքների պարզաբանմամբ, քանի որ նույնիսկ գրական ստեղծագործությունը, էլ չենք խոսում, մուլտիմեդիա ստեղծագործությունների մասին, կարող են պարունակել մի քանի հեղինակային իրավունքով պահպանված գործեր: Առանց բոլոր հեղինակային իրավունքների պարզաբանումն ավարտելու, անհնար կլինի օգտագործել այդ

ստեղծագործությունները՝ նույնիսկ բարեխիղճ օգտագործողների կողմից,

- նրանք սովորաբար ազատում են գրադարաններին լիցենզավորված ստեղծագործություններն օգտագործելիս չկանխամտածված խախտումներ կատարելու համար պատասխանատվությունից:

Իրականում, այնուամենայնիվ, պրակտիկան այլ բան է ցույց տալիս: Չնայած, որ գրադարանները գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող կազմակերպությունների (ԳԻԿԿ) հիմնական հաճախորդներն են, նրանց համագործակցությունն այնքան էլ հեշտ չէ: Հեղինակների ու հրատարակիչների իրավունքները պահպանվում ու կառավարվում են ԳԻԿԿ-ի կողմից, իսկ օգտագործողների իրավունքները՝ հազվադեպ: ԳԻԿԿ-ը հանդիսանում են միջնորդ օղակ իրավատերերի և օգտվողների միջև, բայց նրանք ոչ միշտ են չեզոք դիրք գրավում: ԳԻԿԿ-ի նպատակը իրենց անդամների համար (հեղինակներ և հրատարակիչների)^{xiii} առավել ֆինանսական եկամուտ և շահերի պաշտպանություն ապահովելն է^{xiv}:

Գրադարանները ԳԻԿԿ-ի հետ կապված մի շարք մտահոգություններ ունեն.

- արդյունավետության բացակայություն. Հաճախ ԳԻԿԿ-ը ուշացումով են արձագանքում գրադարանների լիցենզիա ստանալու պահանջներին;
- թափանցիկության բացակայություն. Կարող է անհասկանալի թվալ, թե ինչ սկզբունքով են հիմնական վճարները հաշվարկվում և ադմինիստրատիվ ծախսերն անհամաչափ են կատարվում՝ ի օգուտ իրավատերերի;
- գրադարանները բանակցություններում թույլ դիրք են գրավում, այնպես ինչպես էլեկտրոնային նյութերից օգտվելու համար հրատարակիչների հետ բանակցելիս: ԳԻԿԿ-ը հանդես են գալիս իրավատերերի անունից, որպես մոնոպոլ իրավատերեր, և գրադարանը ստիպված է լինում վճարել պահանջվող գինը հետևելով «վերցրեք այն, կամ՝ ոչ» տարբերակին;
- լիցենզիան կարող է պարունակել գրադարանների համար ոչ նպաստավոր դրույթներ օր. անտեսելով հեղինակային իրավունքի մասին օրենքով հաստատված սահմանափակումները՝ այսպիսով, պահանջելով գրադարանից ձեռք բերել լիցենզիա և վճարել օգտագործման համար;

(տես նույնպես այս ձեռնարկի «Հեղինակային իրավունքի մասին օրենքի և պայմանագրերի մասին օրենքի փոխհարաբերությունը» գլուխը):

Անդրադառնալով վերը շարադրված մտահոգիչ խնդիրներին, նշենք, որ գրադարանները կողմնակից են հոնորարները հավաքող ընկերությունների բաց, հաշվետու, թափանցիկ, արդյունավետ և բոլոր համախոհների համար արդար գործունեության: Գրադարաններն իրենց բողոքներն արտահայտելու համար դյուրին եղանակներ պետք է ունենան, օր. տարաձայնությունների, վեճերի անկախ կարգավորում և արդար մեխանիզմներ արտաքին վերահսկողության համար:

Գրադարանները պետք է

- ստեղծեն գրադարանային կոնսորցիում, կամ միանան որևէ կոնսորցիումի լիցենզիայի շուրջ բանակցելիս ուժեղ դիրք գրավելու համար,
- երբեք չստորագրել լիցենզիա իրենց ոչ անհրաժեշտ գործընթացի համար: Լիցենզիան անհրաժեշտ է, որպեսզի թույլտվություն ունենան արտատպել ավելին, քան թույլատրվում է օրենքով: Եթե գրադարանում լուսապատճենումը կատարվում է օրենքով թույլատրված ծավալով, լիցենզիայի կարիք բոլորովին չկա,
- երբեք մի ստորագրեք այնպիսի լիցենզիա, որն անտեսում է հեղինակային իրավունքի մասին օրենքի ազատ օգտագործման դրույթով հաստատված իրավունքները,

- պահանջեք, որ լիցենզիան ստորագրող իրավաբանական անձ լինելուց բացի, գրադարանը նաև մասնակցի բոլոր բանակցություններին,
- պահանջեք, որ ներքին ադմինիստրացիան, ֆինանսական միջոցների հավաքումն ու բաշխումը թափանցիկ լինեն:

Մի շարք գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող (ԳԻԿԿ) կազմակերպությունների աշխատանքը, որոնք զբաղվում են հեղինակային իրավունքով պահպանված նյութի մեկ անգամ օգտագործելու լիցենզիա տրամադրելով, երբեմն պրոբլեմատիկ է: Որոշակի կատեգորիայի աշխատանքներ և նույնիսկ որոշակի իրավատերեր կարող են չընդգրկվել լիցենզիայի մեջ: Գրադարանները ստիպված պետք է գործ ունենան մի քանի ԳԻԿԿ-ի հետ տարբեր կատեգորիայի աշխատանքների, օր.՝ գրքերի, քարտեզների, ամրագրված երաժշտության, լուսանկարների օգտագործման համար: Հոնորարներ հավաքող կազմակերպությունը կարող է թվային նյութերի օգտագործման համար լիցենզիա տրամադրելու իրավասություն չունենալ, այսինքն՝ իրավատերն այդ իրավունքների համար կազմակերպությանը լիազորած չլինի: Գրադարանները, հետևաբար, պետք է գործ ունենան գույքային իրավունքները կոլեկտիվ կառավարող բազմաբնույթ ընկերությունների հետ, որոնք իրավասու են լիցենզիաներ տալ և տպագիր և ոչ տպագիր նյութերի օգտագործման համար:

Փորձություններ զարգացող երկրներում

1996թ. իրենց առաջին հարյուրամյակին նվիրված հանդիպման ժամանակ Հրատարակիչների միջազգային ասոցիացիան աշխարհի բոլոր երկրներում վարձատրությունը հավաքող անկախ կազմակերպություն ստեղծելու մասին որոշում ընդունեց: Հոնորարներ հավաքող ընկերությունների միջազգային ֆեդերացիան հիմնադրեց տարածաշրջանային կոմիտեներ Ասիայի, Խաղաղ Օվկիանոսյան տարածաշրջանի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի, Լատինական Ամերիկայի և Կարիբյան երկրների համար, որոնց նպատակը պետք է լինի աջակցել իրավական համակարգի զարգացմանը, ստեղծել հոնորարներ հավաքող ընկերություններ/կազմակերպություններ և պայքարել իրենց տարածաշրջանում ցանկացած անօրինական պատճենման դեմ:

Հոնորարներ հավաքող կազմակերպությունների միջազգային ֆեդերացիան տեղյակ է, որ արագ ստեղծվում են այդպիսի կազմակերպություններ այն երկրներում, որոնք ունեն քիչ ռեսուրսներ, բայց շատ քաղաքական, տնտեսական ու սոցիալական պրոբլեմներ^{xv}: Եվ զարմանալի է, որ կրթական սեկտորը դառնում է առաջին թիրախը: Սա մասամբ այն պատճառով, որ դպրոցներն ու համալսարանները հեղինակային իրավունքով պահպանված նյութերի ամենաշատ պատճենողներն են: Եվ քանի որ նպատակը ամենակարճ ժամկետում առավելագույն եկամուտ ստանալն է, պետական հիմնարկները, կառավարական գերատեսչությունները, գրադարանները, մշակութային և գիտահետազոտական ինստիտուտները նույնպես նշանակետ են դառնում հոնորարներ հավաքող կազմակերպությունների համար:

Տեղեկատվության և գիտելիքի մատչելիությունը վճարող նշանակություն ունի աղքատ երկրների կրթական և ուսուցողական կարիքները բավարարելու համար, երկրներ, որոնց զարգացումը պայմանավորված է մարդկային կապիտալով:

Մեկ այլ մտահոգիչ գործոն է նաև այն, որ Աֆրիկյան երկրները, որոնք հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունների հիմնական սպառողներն են, իրենց հոնորարներ հավաքող ընկերությունների միջոցով ավելի շատ նպաստում են օտար երկրների համար եկամուտների հավաքմանը^{xvi}, այսինքն, ավելի շատ գումար ուղարկում են երկրից դուրս, քան ստանում են արտահանված ստեղծագործությունների դիմաց:

Չնայած հատուկ երկկողմանի լիցենզային պայմանագրեր են կազմվում, այնուամենայնիվ,

աչալուրջ պետք է լինել, որպեսզի գրադարանների հետ տարվող բանակցությունները, ինչպես նաև հոնորարների հավաքումն ու բաշխումը տեղի հեղինակներին իրականացվի բաց և թափանցիկ եղանակով:

Ավելի արդարացի կլիներ, եթե նոր ի հայտ եկած կազմակերպությունները իրենց գործունեությունը ծավալեին առևտրի ոլորտում, ինչպիսիք են ֆինանսական ծառայություններ մատուցող, կամ դեղագործական ընկերությունները, մասնագիտական հիմնարկներ՝ ինչպիսիք են իրավաբանական, հաշվապահական, ճարտարապետական գրասենյակները, այլ ոչ թե նշանակետ դարձնել ոչ առևտրային սեկտորի ամենաաղքատ և խոցելի բնագավառները:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

Australian Library and Information Association (ALIA) Copyright collecting societies: proposed code of conduct

<http://alia.org.au/advocacy/submissions/code.of.conduct.html>

EBLIDA Response to the European Commission Working Document on the management of copyright and related rights

<http://www.eblida.org.position/Collective Management Response July05.htm>

Գրականություն

Collective Management in Reprography (2005) IFFRO/WIPO

<http://www.iffro.org/show.aspx?pageid=library/publications&culture=en>

Gervais, Daniel (2006). The changing Roles of Copyright RROs. In Press

Nwauche S. Enyinna (2006) A Development Oriented Intellectual Property Regime for Africa

www.codesria.org/Links/conferences/general_assembly11/papers/nwauche.pdf

Ծանոթագրություն

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», հոդված 63. Գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպություններ

Հայաստանում այսպիսի կազմակերպություն է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերերի գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունը, որը հիմնադրվել է 2001 թվականին:

<http://www.armauthor.am>

e-mail: armauthor@yahoo.com

Փոխատվության իրավունք

Ինչ է փոխատվության իրավունքը

Փոխատվության իրավունքը կարող է երկու հասկացություն ունենալ.

1. Փոխատվության իրավունքը կարող է ամրագրվել հեղինակային իրավունքի մասին օրենքում, որպես հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործության իրավատիրոջը տրված ժամանակային սահմանափակում ունեցող բացառիկ իրավունք: Այս դեպքում այն իրավատիրոջը իրավունք է տալիս թույլ տալ կամ արգելել հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործության սահմանափակ ժամանակահատվածով օգտագործման տրամադրումը հանրության ազատ այցելության համար նախատեսված հաստատությունների միջոցով՝ առանց ուղղակի, կամ անուղղակի տնտեսական կամ առևտրային օգուտ ստանալու: Հեղինակային իրավունքի տերը կարող է լինել հեղինակը, կամ որևէ առևտրային ձեռնարկություն, որին հեղինակը փոխանցել է իր գույքային իրավունքները, օր. հրատարակչությունը: Փոխատվության իրավունքը կարող է գործել լիցենզային սխեմաների և վարձատրությունը հավաքող կազմակերպությունների միջոցով (որոնք կառավարում են իրավատերերի գույքային իրավունքները): Որոշ երկրների հեղինակային իրավունքի մասին օրենսդրությունում փոխատվության իրավունքը կոչվում է վարձատրության իրավունք (remuneration right):

2. Փոխատվության իրավունքը կարող է կոչվել նաև «փոխհատուցման իրավունք»: Սա հիմնականում հեղինակին է վերաբերում: Դա հեղինակի իրավունքն է (և ոչ պարտադիր իրավատիրոջ) ստանալ ֆինանսական փոխհատուցում իր ստեղծագործության օրինակների փոխատվության համար: Այս դեպքում, յուրաքանչյուր երկիրն ինքը կարող է սահմանել իր չափորոշիչները, որով կորոշվի, թե ով է իրավասու ստանալ փոխհատուցում և հիմնավորել այս գործընթացը նրանով, որ դա արվում է ազգային մշակույթի զարգացմանն աջակցելու նպատակով, օր. Ֆինանսական խրախուսում կստանան այն հեղինակները, որոնք գրում են իրենց մայրենի լեզվով՝ այսպիսով նպաստելով ազգային մշակույթի զարգացմանը:

Ստեղծագործությունների փոխատվության իրավունքը կիրառվում է միայն նյութական ստեղծագործությունների նկատմամբ, օրինակ՝ տպագրված գրքեր, ձայնագրություններ: Այն չի կարող կիրառվել էլեկտրոնային ստեղծագործությունների, կամ էլեկտրոնային շտեմարաններից ներբեռնված-դուրսհանված որոշ ստեղծատվական նյութերի համար, որոնց օգտագործումը կարգավորվում է լիցենզիայով:

(Տես այս ձեռնարկի «Հեղինակային իրավունքի մասին օրենքի և պայմանագրի մասին օրենքի փոխհարաբերությունը: Էլեկտրոնային շտեմարաններ և Գրադարանային կոնսոցիում» գլուխը):

Պրակտիկան

Փոխատվության իրավունքի կիրառման միջազգային ցանցի տվյալների համաձայն^{xvii} այն գործում է տասնինը երկրում^{xviii}, քսանմեկ երկրում այն գտնվում է ձևավորման փուլում^{xix}:

Կարևոր է իմանալ, որ չկա միջազգային պայմանագիր կամ կոնվենցիա, որ պարտադիր որևէ երկրի ընդունել փոխատվության իրավունքը: (Իրականում, 1996թ. ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրի ընդունման բանակցությունների ժամանակ, որոշվեց հանել այս իրավունքը, գիտակցելով այն բացասական ազդեցությունը, որ այն կունենար գրադարանների գործունեության և զարգացող երկրների կրթական համակարգի վրա):

Փոխաստվության իրավունքը Եվրամիությունում

Այնուամենայնիվ, ԵՄ անդամակցող երկրներից պահանջվում է ընդունել փոխաստվության իրավունքի մասին դրույթը, որովհետև 1992թ. Եվրոպական օրենսդրությունը դիրեկտիվ է ընդունել փոխաստվության և վարձույթով տալու իրավունքի վերաբերյալ: ԵՄ անդամ 25 երկրներից բացի դիրեկտիվները պարտավոր են ընդունել ԵՄ ոչ անդամ երկրները, որոնք, սակայն, օգտվում են Եվրոպական շուկայից, այսինքն՝ Եվրոպական տնտեսական գոտու երկրները, Նորվեգիան, Իսլանդիան և Լիխտենշտեյնը:

Իրականում փոխաստվության իրավունքը Եվրոպական նախաձեռնություն է, որն առաջարկվել է դեռ 19-րդ դարի հեղինակների կողմից, որոնք կարծում էին, թե իրենց գրքերը հանրային գրադարանների միջոցով հանրությանը մատչելի դարձնելու շնորհիվ, իրենք գրկվում են գրքերի վաճառքից առաջացած եկամուտներից: Փոխաստվության իրավունքն ընդունող առաջին երկիրը Դանիան էր, որին հետևեցին Նորվեգիան ու Շվեդիան:

Այսպիսով, Եվրոպական օրենքը պահանջում է, որ գրքերի, ֆիլմերի և այլ հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործության հեղինակները և այլ իրավատերերը կամ իրավասու լինեն թույլատրելու, կամ արգելելու հանրային գրադարանների միջոցով իրենց ստեղծագործությունների սպասարկումը, կամ այդ սպասարկման համար փոխհատուցում ստանան: Այլ խոսքերով ասած, այն համատեղում է փոխաստվության իրավունքի երկու կոնցեպցիաների կիրառումը:

Արձանագրությունները ցույց են տալիս, որ ԵՄ անդամ երկրներից շատերն առանց խանդավառության են ընդունել այս իրավունքը: Համաձայն 1992թ. դիրեկտիվի, Եվրախորհրդը պետք է այս դիրեկտիվի կիրառման վերաբերյալ զեկուցում պատրաստեր 1997թ.: Մի քանի անդամակից երկրներում այս դրույթի կիրառման հետաձգման պատճառների հետևանքով Խորհուրդը մինչև 2002թ.՝ այսինքն դիրեկտիվն ընդունելուց 10 տարի հետո նույնիսկ չէր կարողանում ավարտել իր զեկուցումը: Խորհուրդը տասնհինգ անդամ երկրներից տասներեքն էր ուսումնասիրել՝ ընդգրկելով Ֆրանսիան, Հունաստանը, Իռլանդիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Անգլիան: Եվրոպական արդարադատության դատարանի աշխատանքների ընթացքում բացահայտվեցին դրույթի խախտման դեպքեր: Այս դրույթը սխալ էր կիրառվել, կամ չէր կիրառվել ընդհանրապես: (Բելգիան, Իտալիան, Պորտուգալիան, Իսպանիան հաջողությամբ ավարտեցին դատական պրոցեսը):

Ավելացնենք նաև, որ մտահոգություններ եղան այն մասին, որ Սկանդինավյան երկրներում այս դրույթը կիրառվել է խտրականության եղանակով, փոխհատուցում չնորհվել է հայրենակից, կամ իրենց երկրում (Շվեդիա) բնակվող հեղինակներին, կամ մայրենի լեզվով հրատարակված ստեղծագործությունների համար (Դանիա, Ֆինլանդիա):

Սա բացատրվում է նախ դիրեկտիվների բնույթով, որոնք Եվրոպական օրենքի ճկուն գործիքներն են, որը և հնարավորություն է տալիս անդամ երկրներին չկանխամտածված կերպով յուրովի մեկնաբանել ու կիրառել այդ դիրեկտիվը: Անշուշտ, այս դեպքում պրոբլեմ է առաջանում՝ կապված հաստատություններին տրվող զիջումների հետ: Չնայած դիրեկտիվը թույլ է տալիս ընդառաջել որոշ վարկատու հաստատությունների միայն՝ ազատելով նրանց հարկերից, բայց անդամ երկրներն ընդլայնում են այդ հաստատությունների թիվը, և Եվրախորհրդի կարծիքով իրականում շատ վարկատու հաստատություններ են հարկերից ազատվում և փոխաստվության իրավունքի կիրառման արդյունավետությունը ռիսկի տակ է դրվում:

Մյուս պատճառը այն է, որ շատ երկրներում փոխաստվության իրավունքը հակասում է ազգային սովորույթներին և օտարված հասկացություն է, որը և վարչարարության և փոխհատուցման նոր համակարգ ստեղծելու անհրաժեշտություն է առաջացնում: Մի քանի անդամ երկրներ այլ եղանակներով են խրախուսում հեղինակներին, օր.՝ նրանց հարկերից ազատելով:

Ինչպես են կատարվում վճարումները

Յուրաքանչյուր երկիր վճարումները կատարում է տարբեր եղանակով: Եվրամիությունում փոխհատուցումը տրվում է ստեղծագործությունն օգտագործելու համար (որը նշանակում է, որ այն կարող է ընդգրկել նաև տեղեկատու նյութեր, որոնք գրադարանից դուրս չեն տրվում):

Վճարումները կատարվում են նաև հեղինակներին ներկայացնող կազմակերպությունների միջոցով ըստ հեղինակի գրքերի օգտագործման հաճախականության, գրադարանում գրքերի քանակի առկայության, գրանցված ընթերցողների քանակի:

Հեղինակներին տրվող գումարը սովորաբար մեծ չէ, և կարելի է հեղինակին վճարվող գումարի առավելագույն չափ սահմանել: Կարևոր է սահմանել ընդհանուր գումարի չափը: Փոխատվության համար վճարները Դանիայում մոտավորապես կազմում է 20 միլիոն եվրո (\$26.6) յուրաքանչյուր տարվա համար, մոտավորապես հանրային գրադարանային ծախսերի 5%-ը^{xx}: 2006թ. Անգլիայում այն կազմում էր 11 միլիոն եվրո (\$15 միլիոն)^{xxi}:

Բոլոր երկրներում, բացի Նիդեռլանդներից, փոխհատուցման վճարումները և դրա հետ կապված բոլոր վարչական ծախսերը կատարվում են պետության կողմից:

Գրադարաններին առնչվող խնդիրները^{xxii}

Երբ դանիացի հեղինակը 1917թ. դանիական գրադարանային ասոցիացիայի առաջին տարեկան կոնֆերանսի ժամանակ փոխհատուցում պահանջեց իր գրքերի օգտագործման համար, գրադարաններն ու հրատարակիչները ընդդիմացան այս գաղափարին, քննարկումների պոռթկում առաջացավ, թե արդյոք հեղինակները կշահեն, թե կտուժեն գրադարաններից փոխհատուցում պահանջելով: Այն ընդգծված տեսակետը, որ գրադարանների միջոցով գրքերի սպասարկումը բացասական ազդեցություն է ունենում գրքերի վաճառքի վրա, չհիմնավորվեց: Գրադարանները հրատարակված գրքերի հիմնական գնորդներն են, հաճախ գնելով նույնիսկ բազմաթիվ օրինակներ: Նրանք հնարավորություն են տալիս ընթերցողներին ճանաչել նոր հեղինակների՝ ամենայն բժախնդրությամբ ողջ հանրության համար նրանց գրքերի մատչելիությունն ապահովելով:

Որտեղ հաստատվում է փոխատվության իրավունքը, այնտեղ այն գործում է հանրային գրադարանների շնորհիվ: Գրադարանները փոխհատուցումն իրականացնող վարչական աշխատողներին ապահովում են գրքի շրջանառության, հավաքածուների քանակի և գրանցված ընթերցողների վերաբերյալ տվյալների տեղեկատվությամբ: Համագործակցությունը գրադարանների հետ էական նշանակություն ունի փոխատվության համակարգը ստեղծելու, պահպանելու և կառավարելու համար:

Գրադարանային ասոցիացիաների և ինստիտուտների միջազգային դաշնությունը (IFLA), այնուամենայնիվ, փոխատվության իրավունքին հավանություն չի տալիս, համոզված, որ այն վտանգի է ենթարկում հանրության համար բաց գրադարանների^{xxiii} կողմից մատուցվող բաց մատչելիության ծառայությունները: Ստեղծագործությունների փոխատվությունը (Lending) էական նշանակություն ունի մշակույթի և կրթության համար, և այն պետք է ազատ, անվճար կերպով հասանելի լինի բոլորի համար: Այս դիրքորոշումը հիմնավորված է հետևյալ սկզբունքներով.

- Գրադարանային ասոցիացիաների և ինստիտուտների միջազգային դաշնությունը (IFLA) գործունեության հիմնական բնույթով;
- Հանրային գրադարանի ծառայություններն անվճար պետք է լինեն;
- Գրադարանների կողմից նյութի փոխատվությունը օրենքով, կամ պայմանագրերով սահմանափակված չպետք է լինի;
- Փոխատվության համար վճարները պետք է կատարվեն պետության, այլ ոչ թե գրադարանի բյուջեից:

Անհրաժեշտ է ուսուցողական աշխատանքներ տանել փոխատվության իրավունքի ներմուծման, կիրառման, իրավական սահմանման, փոխատվության հետ կապված վճարումների համակարգի աշխատանքի վերաբերյալ, և գրադարաններին նույնպես ընդգրկել փոխատվության համակարգի ստեղծման ու իրականացման գործում:

Փոխատվության իրավունքը և զարգացող երկրները

Գրադարանային ասոցիացիաների և ինստիտուտների միջազգային ֆեդերացիան (IFLA) հավաստում է, որ փոխատվության իրավունքը չպետք է ընդունվի այն երկրներում, որոնք ի վիճակի չեն իրականացնել փոխատվության վճարները՝ առանց հիմնական հասարակական ծառայությունների համար վճարներ վերցնելով: Ավելի կոնկրետ, այն չպետք է ընդունվի այն երկրներում, որոնք Համաշխարհային բանկի կողմից չեն համարվում միջին, կամ բարձր եկամուտ ունեցող երկիր:

Փոխատվության իրավունքը թվային դարաշրջանում

Փոխատվության իրավունքը կիրառվում է նյութական ստեղծագործությունների վրա, ինչպիսիք են՝ տպագիր գրքերը: Այն չի կիրառվում էլեկտրոնային գրքերի, կամ այլ առցանց (օնլայն) նյութերի վրա: Հարց է առաջանում, թե որն է փոխատվության իրավունքի դերը թվային միջավայրում, որտեղ իրավատերերը լիցենզիաների և ՊՏՍ-ի համատեղ կիրառմամբ ավելի ուժեղ հսկողություն կարող են սահմանել էլեկտրոնային ստեղծագործությունների օգտագործման վրա: Օրինակ, եթե օգտվողը հանրային գրադարանից գիրք է վերցնում, գրքի իրավատերը չի կարող հսկել, թե ով է այն կարդում և որտեղ, մինչդեռ թվային ռեսուրսների օգտագործման ժամանակ կարելի է նման վերահսկողություն սահմանել: Գրադարանավարները պետք է աչալուրջ լինեն և հետևեն, որ փոխատվության իրավունքը թվային ստեղծագործությունների օգտագործման վրա չկիրառվի:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

EBLIDA statement on the infringement procedures over Public Lending Right
http://www.eblida.org/position/PLR_Statement_March04.htm

IFLA Committee on Copyright and Other Legal Matters (CLM)

Background paper on Public Lending Right
<http://www.ifla.org/III/clm/p1/PublicLendingRight-Backgr.htm>

IFLA Position on Public Lending Right
<http://www.ifla.org/III/clm/p1/PublicLendingRigh.htm>

Գրականություն

European Commission Rental and Lending Right
http://ec.europa.eu/internal_market/copyright/rental-right/rental-right_en.htm

PLR International <http://www.plrinternational.com/>

Ծանոթագրություն

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»

- Հոդված 17. Փոխատվությունը

Տվյալների բազա պատրաստողի իրավունքները - Եվրոպայի փորձը

Տվյալների բազա. Հեղինակային իրավունքը և տվյալների բազա պատրաստողի իրավունքները

Տվյալների բազան առանձին ստեղծագործությունների, տվյալների, կամ այլ անկախ ստեղծագործությունների համակարգված ձևով դասավորված փնտրովի հավաքածու է: Տվյալների բազան կարող է լինել և էլեկտրոնային, և ոչ էլեկտրոնային, օր. տպագրված քարտեր պարունակող գրադարանային քարտարանը ոչ էլեկտրոնային տվյալների բազա է:

Փաստերն ու տվյալներն ինքնին, ինչպես օր. մաթեմատիկական բանաձևերը, կամ օվկիանոսների մակընթացություններն ու տեղատվությունները հեղինակային իրավունքով պահպանված չեն, բայց այս երևույթների մասին տվյալների բազան հեղինակային իրավունքով պահպանված է: Այլ խոսքերով ասած՝ տվյալների բազան հեղինակային իրավունքով պահպանված է, եթե այն «ամրագրված է» (*fixed*) ինչ-որ նյութական ձևով և համարվում է **յուրօրինակ (original)** իր բովանդակության ընտրության և տեղաբաշխման ստեղծագործական աշխատանքի արդյունք լինելու տեսանկյունից:

Յուրօրինակության երկու շեմ գոյություն ունի.

Նորմատիվ իրավական համակարգ ունեցող երկրներում (civil law countries) որպես «ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք» կարող է հեղինակային իրավունքով պահպանված լինել:

Նախադեպային (ընդհանուր) իրավական համակարգ ունեցող երկրներում (common law countries) տվյալների բազան հեղինակային իրավունքով պահպանված է համարվում, եթե այն ստեղծելու համար բավականաչափ հմտություն ու աշխատանք է ծախսվել (հայտնի որպես «քրտինքի արդյունք» համարվող հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործություն): Սա նշանակում է, որ իրականում նորմատիվ իրավական համակարգ ունեցող երկրներում մի քանի տվյալների բազաներ են հեղինակային իրավունքով պահպանված, որովհետև հեղինակային իրավունքով պահպանված լինելու համար ամենաբարձր շեմը շտեմարանների համար «օրիգինալությունը» պետք է լինի:

1991թ. Միացյալ Նահանգների գերագույն դատարանը (նախադեպային/ընդհանուր իրավական համակարգ) «Feist case» «Ֆեստ» գործը^{xxiv} քննելուց հետո պարզեց, որ, այնուամենայնիվ, փաստերի ոչ յուրօրինակ շարադրումը չի կարող հեղինակային իրավունքով պահպանված համարվել: «Յուրօրինակությունը» առավել, քան «քրտինքի արդյունքը» պարտադիր պայման համարելը հեղինակային իրավունքով պահպանված լինելու համար դատարանը որոշեց, որ այբբենական կարգով դասավորված հեռախոսահամարների տեղեկատուն չի կարող հեղինակային իրավունքով պահպանված համարվել:

Մինչդեռ, Եվրախորհուրդը գտավ, որ Եվրոպական շուկան տրոհվում է բազմաթիվ տեխնիկական, իրավական և լեզվաբանական արգելքների պատճառով^{xxv}: Տվյալների բազայի պահպանությունը նորմատիվ իրավական համակարգ ունեցող անդամ երկրներում տարբերվում է նախադեպային/ընդհանուր իրավական համակարգ ունեցող անդամ երկրներից (Անգլիա և Իռլանդիա): Խորհուրդը գտնում է, որ այս տարբերությունը վնասում է տվյալների բազաների ազատ տեղաշարժմանը Եվրոպայի տարածքում և բացահայտեց, որ Անգլիան տվյալների բազաների բովանդակության յուրօրինակության համար ունենալով ավելի ցածր ստանդարտներ, իրականացնում է Եվրոպական առցանց տվյալների բազաների սպասարկման 50%-ը (Սա, իհարկե, բացատրվում է այլ գործոններով, օր. լեզուն, որով կազմվել են այդ տվյալների բազաները): Խորհուրդը համոզված է, որ ուժեղացնելով տվյալների բազաների պահպանությունը Եվրոպայում, դրանով իսկ

կնպաստի տվյալների բազաների զարգացմանը և Միացյալ Նահանգների հետ մրցակցության հնարավորություն ստեղծելուն:

1996թ. Տվյալների բազայի օրինական պահպանության մասին իր դիրեկտիվով^{xxvi} Խորհուրդը փորձեց լավագույն միջին եզրը գտնել: Այն ներդաշնակություն ստեղծեց «յուրօրինակության» եզրը բարձր ստանդարտի հասցնելով, ինչպես այն կիրառվում է բոլոր եվրոպական երկրներում՝ համաձայն «Droit d’auteur=հեղինակի իրավունք»-ի պահպանության սկզբունքի, այսպիսով, միայն «յուրօրինակ» տվյալների բազաներն են հեղինակային իրավունքով պահպանված համարվում: Երկրորդ քայլն այն էր, որ նոր իրավունքներ ստեղծվեցին «ոչ յուրօրինակ», այսինքն, բավականաչափ հմտության ու աշխատանքի արդյունքում ստեղծված տվյալների բազայի պահպանության համար, որոնք յուրօրինակության ավելի ցածր չափանիշներ ունեն: Հայտնի, որպես տվյալների բազայի, կամ «առանձնահատուկ» իրավունք, այն պաշտպանում է տվյալների բազան պատրաստողներին, որոնք էական ներդրում են կատարել այդ գործում: Սա վերաբերվում է նաև «հրատարակիչների իրավունքին»^{xxvii}, որը կիրառվում է այնպիսի բազաների վրա, որոնք, չնայած յուրօրինակ չեն, բայց տնտեսական նշանակություն ունեն հրատարակիչների համար:

«Sui generis» նշանակում է «իր բնույթով յուրօրինակ»: Թերևս Միացյալ Նահանգների կողմից պատրաստված տվյալների բազաների հետ մրցելու նպատակով, այն իրավական պաշտպանվածություն է տալիս «ոչ յուրօրինակ» բազաներին (ինչպիսին այբբենական կարգով դասավորված հեռախոսահամարների տեղեկատուն է): Սա նշանակում է, որ միջազգային պայմանագրերին բնորոշ սկզբունքը, առ այն, որ և արտահանվող և տեղում արտադրված իրերը նույն կերպ են որակավորվում, չի կիրառվում: Այստեղից էլ հետևություն, որ ամերիկյան տվյալների բազաներ արտադրողները չեն կարող օգտվել նոր իրավունքից: Այսպիսով, սկիզբ է առնում **Եվրոպական տվյալների բազայի փորձը:**

Պրակտիկան

Այսպիսով, տվյալների բազան պատրաստողը (սովորաբար հրատարակիչը), որը մեծ ներդրում է կատարել տվյալների բազայի պարունակության ձեռքբերման, ճշգրտման, կամ ներկայացման համար, բացառիկ իրավունք ունի թույլատրել կամ արգելել բազայի որևէ մասի դուրսհանումը (right of extraction, որը համապատասխանում է վերարտադրման իրավունքին), վերաօգտագործումը (right of reutilisation, որը համապատասխանում է հասարակությանը մատչելի դարձնելու, ինչպես նաև տարածման իրավունքին (right of communication to public):

Տվյալների բազա պատրաստողի իրավունքների պահպանության ժամկետը 15 տարի է, որը հետագայում կավելանա ևս 15 տարով, եթե նույն բազայի հիմնական բովանդակության մեջ էական փոփոխություններ կատարվեն: Դիրեկտիվը պարունակում է քիչ բացառություններ ու սահմանափակումներ:

Հեղինակային իրավունքի նման, տվյալների բազան պատրաստողի իրավունքները նույնպես ծագում են ավտոմատ կերպով՝ բազայի ստեղծման պահից սկսված, և սա վերաբերվում է բոլոր եվրոպական տվյալների բազաներին, անկախ նրանից, թե նրանք արդյոք պահպանված են նաև հեղինակային իրավունքով: Որպեսզի տվյալների բազան **հեղինակային իրավունքով** պահպանված լինի, այն պետք է **յուրօրինակ** լինի թե **բովանդակության** ընտրության և թե **համակարգված դասավորության** առումով: Որպեսզի **տվյալների բազան հարակից իրավունքով** պահպանված լինի, ապա թե **բովանդակության** ընտրության, և թե **համակարգված դասավորության** համար բավականաչափ նյութական ներդրումներ պետք է արված լինեն^{xxviii}: Սա նշանակում է, որ հնարավոր է բավարարել երկու պահանջներն էլ, ըստ որի երկու իրավունքներն էլ, այն է՝ բազայի

բովանդակության հեղինակային իրավունքը և բազան պատրաստողի հարակից իրավունքները կարող են կիրառվել միաժամանակ: Բազայի իրական բովանդակությունը՝ կախված նրա բնույթից, կարող է և հեղինակային իրավունքի պահպանության առարկա չլինել:

Այս հանգամանքը մեծ շփոթություն է առաջացնում օգտագործողների՝ այդ թվում նաև գրադարանների համար: Այս երկու մոտեցումների բարդությունը անհասկանալի է դարձնում, թե ինչն է հեղինակային իրավունքով պահպանված և որքան ժամանակով: Բացառություններն ու սահմանափակումները չեն համապատասխանում հեղինակային իրավունքի վերաբերյալ վերջին դիրեկտիվին^{xxix}, պարզ չէ, թե որ դիրեկտիվն է գերիշխում:

Գիտաշխատողները բողոքում են, որ տվյալների բազայի իրավունքը արգելակում է հետազոտական աշխատանքները, ապահովելով գիտական տվյալների սահմանափակ մատչելիություն, որոնք հնարավոր է, որ հեղինակային իրավունքով ամենևին պահպանված չեն: Կասկածելի և անորոշ սահմանումները, ինչպիսիք են «էական ներդրում (substantial investment)», պատճառ դարձան տարբեր մեկնաբանությունների ազգային դատարաններում, ստեղծելով իրավաբանական որոշ հարցերի հետ կապված անորոշություն:

Վերջին առաջխաղացումները

Երկու կարևոր առաջխաղացումներ են եղել վերջերս: 2004թ. Եվրոպական դատարանը (Եվրամիության գլխավոր դատարանը) ֆուտբոլային խաղերի և ձիավազքի մրցումների արդյունքների ցուցակներ պարունակող տվյալների բազաների նկատմամբ Եվրոպական դիրեկտիվի կիրառման իր առաջին որոշումը կայացրեց: Հանրային խնդիրների մասին որոշման մեջ դատարանը կրճատեց «sui generis» իրավունքի մասշտաբը, նվազեցնելով մեկ աղբյուրից տրամադրվող տվյալների բազայի պահպանությունը (sole source database providers): Այս որոշման համաձայն Ձիավազքի բրիտանական միությունը, որի հիմնական գործառույթը մրցումների արդյունքների վերաբերյալ ցուցակներ կազմելն է, «sui generis» իրավունքի պահպանության չի կարող հավակնել: Սա նշանակում է, որ հեռախոսահամարների տեղեկագիրքը, հեռուստատեսության հաղորդումները, և այլն չեն կարող «sui generis» իրավունքով պահպանված լինել: Նույնիսկ ավելին, պահպանության աստիճանը նվազեցվել է՝ խախտման չափանիշ համարելով արդյոք տվյալների բազայից վերցրած մասի ստեղծման համար տվյալներ բազա պատրաստողը բավականաչափ ներդրում է արել:

2005թ. Եվրոպական հանձնաժողովը գնահատեց տվյալների բազայի իրավունքի կիրառման արդյունքները: Բավականին անսպասելի բայց ողջունելի քայլ էր, որ «փորձարկումը» հաջող էր ընթացել: Այն եզրակացրեց, որ «sui generis» իրավունքի կիրառման տնտեսապես արդյունավետ լինելը ապացուցված չէ:

Ի սկզբանե նպատակաուղղված լինելով տվյալների նոր բազաներ ստեղծելու համար, այն իրեն չարդարացրեց^{xxx}: Գնահատման աշխատանքների արդյունքում ներկայացվեցին գործունեության չորս ծրագրեր. չեղյալ հայտարարել ամբողջ դիրեկտիվը, չեղյալ հայտարարել «sui generis» իրավունքը, փոփոխություններ մտցնել «sui generis» իրավունքի սահմանման մեջ, կամ առայժմ ընդունել ստատուս-քվո՝ թողնել առկա իրավական վիճակը: 2006թ. հանրային քննարկումներից հետո Հանձնաժողովը վերջնական վերլուծությունների արդյունքների հիման վրա կեզրակացնի, թե արդյոք օրենսդրական փոփոխությունների կարիք կա, թե ոչ:

Գրադարաններին առնչվող խնդիրները

Գրադարանները հավաքում, կազմակերպում և պահպանում են տեղեկատվությունն ու գիտական ռեսուրսները, դրանք ուսանողներին, գիտաշխատողներին և հանրությանը մատչելի

դարձնելու և դրանով իսկ ողջ հասարակությանը օգուտ տալու նպատակով: Թվային միջավայրում նյութերի մեծ մասը գտնվում է տվյալների բազաներում: Այս առումով, գրադարանները կրկնակի դեր ունեն: Գրադարանները տվյալների բազաների հաճախակի օգտագործողներ են, հրատարակիչների հետ լիցենզիաներ կնքելով օգտվում են տվյալների բազայում գտնվող էլեկտրոնային նյութերից: Գրադարանները, միևնույն ժամանակ, տվյալների բազաներ պատրաստողներ են, օր` թվայնացման միջոցով ստեղծված բազաներ, գրադարանային էլեկտրոնային քարտարաններ և այլ տվյալների բազաներ:

Սկզբունքորեն, գրադարանները դեմ են նոր իրավունքների ներմուծմանը, որովհետև այն գիտելիքի մատչելիության, հատկապես, հանրային տիրույթում գտնվող գիտելիքի մատչելիության համար լրացուցիչ արգելքներ է ստեղծում: Նոր իրավական շերտերի առաջացումը նշանակում է, որ գրադարանները նոր բանակցություններ պիտի վարեն պարզաբանելու իրենց իրավունքները, ստիպված լինեն նոր վճարումներ անել և կանգնել նոր արգելքների առաջ: Տվյալների բազայի վերաբերյալ դիրեկտիվը նոր իրավունքներ է հաստատում` խթանելու տվյալների բազայի պատրաստմանը: Միևնույն ժամանակ, տվյալների բազաներ պատրաստողները միավորվում են դիմակայելու մրցակցությանը^{xxxi}, այսպիսով մեծ քանակությամբ տեղեկատվությունը կենտրոնանում է ավելի քիչ ձեռքերում: Տվյալների բազաների ստեղծումը նվազել է Եվրոպայում, մինչ Դիրեկտիվը բարդ ու նույնիսկ փորձագետների համար անհասկանալի դրույթներ էր ընդունում:

Գրադարանային տեսանկյունից, տեղեկատվական միջավայրում շատ առաջխաղացումներ են եղել: Գրադարանների միջև աճող համագործակցությունը նշանակում էր, որ տեղական տվյալների բազաները միավորվում են շրջանային և ազգային ռեսուրսների հետ, մեծ մասշտաբի թվայնացման ծրագրեր են իրականացվում գրադարանների և առևտրային գործընկերների միջև: Տվյալների բազաները միավորվելով փնտրման հիանալի մեխանիզմներ են ստեղծում թե ինտերնետում, և թե բազաների միջև: Որոշ գրադարաններ արդեն սկսել են օգտվել իրենց «sui generis» իրավունքից, որը թույլ է տալիս իրենց ստեղծած տվյալների բազաների օգտագործումը վերահսկել, հատկապես, երբ համագործակցում են առևտրային կազմակերպությունների հետ: Օրինակ, գրադարանն իր տվյալների բազան միացնելով մեկ ուրիշին պատկանող տվյալների բազային, կարող է վստահ լինել, որ իրենց նյութերի ազնիվ օգտագործումն ապահովված է:

Այս առումով, «էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» (eIFL.net) միջազգային կոնսորցիումը կոչ արեց Եվրոպական Խորհրդին ամբողջովին բարելավել տվյալների բազայի վերաբերյալ դիրեկտիվը` փոփոխություն մտցնելով յուրօրինակության մեջ, ներմուծելով պարտադիր լիցենզավորումը, այնպես, որ տվյալների բազայի վերաբերյալ դիրեկտիվի ու Տեղեկատվական հասարակության վերաբերյալ դիրեկտիվի (Information Society Directive) միջև տրամաբանական կապ լինի:

Միջազգային չափանիշներ

Երկար տարիներ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ) ֆորումների ժամանակ Եվրոպական հանձնաժողովը փորձում է ընդունել տվյալների բազայի վերաբերյալ միջազգային պայմանագիր: 2002թ. Հանձնաժողովը հաջողության հասավ «յուրօրինակության» պահպանմամբ, կոչ անելով ՄՍՀԿ անդամ երկրներին երկարացնել տվյալների բազայի պահպանության ժամկետը միջազգային մակարդակով^{xxxii}:

Միացյալ Նահանգները, խոշոր տվյալների բազաներ արտադրող մեկ այլ երկիր, հավանություն չտվեց այս առաջարկությանը: Որոշ դատական գործեր ցույց էին տվել, որ տվյալների բազաներ արտադրող ամերիկյան ընկերությունները հատուկ իրավունք էին ուզում ստեղծել իրենց համար:

Այնուամենայնիվ, ավելի շատ ընկերություններ, հավանություն ստանալով Առևտրի պալատի կողմից, ընդդիմացան նման իրավունքի ընդունմանը, համոզված լինելով, որ կարող են ապահովել իրենց պահպանությունը իրավական միջոցներով, այն է՝ պայմանագրեր, պաշտպանության տեխնիկական միջոցներ, ինչպիսին է գաղտնաբառերի օգտագործումը: Առավել կարևորվեց այն հանգամանքը, որ տվյալների բազաների պահպանության ուժեղացումը կոժվարացնի նոր բազաների ստեղծումը և կթուլացնի մրցակցությունը տեղեկատվության տրամադրման ասպարեզում^{xxxiii}: Այլ կերպ ասած, այն արդյունավետ չի լինի:

Տալով իրենց գնահատականը տվյալների բազաների վերաբերյալ դիրեկտիվին, անհավանական է, որ մոտ ապագայում Եվրոպական հանձնաժողովը թարմացնի ՄՄՀԿ ֆորումների ժամանակ տվյալների բազաների վերաբերյալ միջազգային համաձայնագրի ընդունման գաղափարը: Այնուամենայնիվ, Դիրեկտիվը քաջալերում է հեղինակային իրավունքի պահանջության ժամկետի երկարաձգումը երրորդ երկրներում հարկադիր փոխադարձ համագործակցության հիմքով^{xxxiv}: Յուրաքանչյուր երկիր, որ Եվրամիության հետ բանակցություններ է վարում առևտրի համաձայնագրեր կնքելու համար, ինչպիսին օր. Տնտեսական համագործակցության համաձայնագիրն է, պետք է տեղյակ լինի տվյալների բազան պատրաստողների իրավունքի վերաբերյալ Եվրամիության փորձի մասին և խուսափի ներմուծելու այս նոր իրավունքն իր օրենքում:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

Responses to the Commission consultation, March, 2006

eIFL <http://www.eifl.net/services/databaserules.html>

EBLIDA http://www.eblida.org/position/Databases_Response_March06.htm

UK Libraries and Archives Copyright Alliance

<http://www.clip.org.uk/professionalguidance/copyright/lobbying/laca3.htm>

Գրականություն

European Commission. Protection of databases in the European Union: Database Directive, Evaluation of database rules, etc.

http://ec.europa.eu/internal_market/copyright/prot-databases/prot-databases_en.htm

Two database cheers for the EU James Boyle, Financial Times, 2.1.2006

<http://www.ft.com/cms/s/99610a50-7bb2-11da-ab8e-0000779e2340.html>

Institute for Information Law, University of Amsterdam. The database Right File. A unique collection of case law on the European (sui generis) database right

<http://www.ivir.nl/files/database/index.html>

Ծանոթագրություն.

Հայաստանի Հանրապետության օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»

- Հոդված 58. Տվյալների բազան և տվյալների բազա պատրաստողը
- Հոդված 59. Տվյալների բազա պատրաստողի իրավունքները

Creative Commons. Բաց բովանդակությամբ լիցենզիաներ

Ինչ է Creative Commons-ը

Creative Commons-ը (CC) ամերիկյան օրենքների վրա հիմնված շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ հիմնադրված Լորենս Լեսսիգի կողմից 2001թ., որի նպատակն է ընդլայնել ստեղծագործական աշխատանքների մատչելիությունը հասկապես առցանց ռեժիմով: Ինտերնետը ստեղծագործական աշխատանքները տարածելու, բաշխելու և վերաօգտագործելու նոր հնարավորություններ է առաջարկում: Այս ստեղծագործությունների մեծ մասը պահպանված են հեղինակային իրավունքով: Հեղինակային իրավունքով ստեղծագործությունը պահպանված է համարվում ստեղծման պահից սկսած՝ տալով հեղինակին բացառիկ իրավունքներ թույլատրելու, կամ արգելելու այդ ստեղծագործության վերարտադրումը, թարգմանությունը, հասարակությանը մատչելի դարձնելը և ձայնագրումը:

Creative Commons-ը հեղինակներին, նկարիչներին, երաժիշտներին և այլ ստեղծագործողներին իրենց ստեղծագործություններն օգտագործողների համար մատչելի դարձնելու նպատակով առաջարկում է դյուրին եղանակներ ու պայմաններ, որոնք օգտագործողներին նույնպես օգնում են հասկանալ, թե ինչ պայմաններով կարող են օգտագործել հեղինակային իրավունքով պահպանված տվյալ ստեղծագործությունները:

Creative Commons-ը օգտագործում է դյուրըմբռնելի լիցենզիաներ և պատկերանիշեր (logo) օգնելու օգտագործողներին ճանաչել **Creative Commons**-ի կողմից լիցենզավորված ստեղծագործությունը: Լիցենզիայի էլեկտրոնային տարբերակը պարունակում է մեքենայաընթեռնելի տվյալներ, որոնք նկարագրում են լիցենզիան և նշում հեղինակային իրավունքի ստատուսը՝ հնարավորություն տալով գտնել **CC**-ով լիցենզավորված նյութը որոնման տարբեր մեխանիզմներով կամ այլ առցանց գործող որոնման եղանակներով:

Creative Commons-ն ընդգրկում է հեղինակային իրավունքով պահպանված տարաբնույթ ստեղծագործություններ, ինչպիսիք են՝ լսողական, օր. երաժշտությունը, հնչյունները, ելույթները, պատկերներ, օր.՝ լուսանկարներ, պատկերագրադրումներ, նախագծեր, վիդեոներ, օր.՝ ֆիլմեր, անիմացիաներ, լայնամետրաժ ֆիլմեր, տեքստեր, օր.՝ գրքեր, վեբկայքեր, վեբլոգեր, ակնարկներ, ուսումնական նյութեր, օր.՝ ուսումնական պլաններ, ուսումնական դասընթացի փաթեթներ, դասագրքեր, շնորհանդեսներ:

Վեբ կայքում տեղադրված միլիոնավոր էջեր ներկայումս օգտագործում են **Creative Commons**-ի լիցենզիաները: Ահա մի քանի հայտնի վեբկայքեր, որոնց բովանդակությունը լիցենզավորված է **CC** լիցենզիաներով. Լուսանկարների համաօգտագործման վեբկայք **Flickr**, **Internet Archive**, որը սպասարկում է վեբ պահոցն ու մուլտիմեդիա (բազմամիջավայր) ռեսուրսները, **MIT Open Courseware**, որը Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) ուսումնական նյութերը մատչելի է դարձնում առցանց ռեժիմով:

CC-ն «բաց բովանդակությամբ» լիցենզիա է, կազմված այնպես, որ նկարագրում է նմանատիպ լիցենզիաներ, որոնք արտատպման և վերաօգտագործման թույլտվություն են տալիս: Մեկ այլ բաց բովանդակությամբ, բայց որոշ տարբերությամբ, լիցենզիայի տեսակ է **GNU Free Documentation License**-ը (օգտագործվում է Wikipedia-ի կողմից) և **Free Art Licence**-ը:

Պրակտիկան. ինչպես է Creative Commons-ը լիցենզավորում ստեղծագործությունները

Creative Commons-ն առաջարկում է կամավոր, ձկուն լիցենզային դրույթներ՝ կախված

ստեղծագործության պահպանվածության մակարդակից և հեղինակի կամքից, թե վերջինս ազատ օգտագործման ինչ հնարավորություններ է ցանկանում տալ օգտագործողին: Լիցենզիաները կազմված են հեղինակային իրավունքի մասին օրենքի հիմնական, այն է՝ «բոլոր իրավունքները պահպանված են» դրույթի հիման վրա, պարունակելով իհարկե «որոշ իրավունքներ պահպանված են» նշումը, և հանրային սեփականություն համարվող նյութերի համար «հեղինակային իրավունքով պահպանված չէ» նշումը:

Յուրաքանչյուր լիցենզիա պարունակում է հեղինակի կողմից ընտրված հիմնական կետերն առ այն, թե հեղինակն իր ստեղծագործությունն ինչ պայմաններով է թույլ տալիս օգտագործել: Ահա այդ կետերը.

Attribution (Հեղինակի անվան նշումով)-թույլ է տալիս արտատպել, տարածել, հասարակությանը մատչելի դարձնել հեղինակային իրավունքով պահպանված նյութը՝ ներառյալ նաև ածանցյալ ստեղծագործությունները՝ պարտադիր նշելով հեղինակի անունը և ստեղծագործության սկզբնաղբյուրը:

Non-commercial (Ոչ առևտրային)-թույլ է տալիս ուրիշներին արտատպել, տարածել, հանրությանը մատչելի դարձնել հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունը՝ ներառյալ նաև ածանցյալ ստեղծագործությունները, բայց ոչ առևտրային նպատակներով:

No derivative works (Բացառությամբ ածանցյալ ստեղծագործությունների) - թույլ է տալիս ուրիշներին արտատպել, տարածել, հասարակությանը մատչելի դարձնել հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունը՝ բացառությամբ նրանց հիման վրա ստեղծված ածանցյալ ստեղծագործությունների (թարգմանություններ, ադապտացիաներ, վերափոխումներ, մշակումներ և այլն):

Share alike (Նման օգտագործման համար) թույլ է տալիս ուրիշներին տարածել ածանցյալ ստեղծագործությունները, բայց միայն այնպիսի լիցենզիայի հիման վրա, որը նմանատիպ է օրիգինալ ստեղծագործությունների համար տրվող լիցենզիային:

Վեց տեսակի լիցենզիաներից բացի, կան ևս մի քանի այլ տեսակի լիցենզիաներ՝ նախատեսված հատուկ կիրառումների համար, օր. Օրինակելի լիցենզիաներ: Յուրաքանչյուր լիցենզիան ունի երեք տարբերակ.

- a «**Common Deed**»-մատչելի լեզվով բացատրում է լիցենզիայի բովանդակությունը, թե ինչ է թույլատրվում անել և օգտագործում է պարզ սիմվոլներ;

- a «**Legal Code**»- նախատեսված է իրավաբանների համար, քանի որ լիցենզիայի ամբողջական տեքստն է ներկայացնում;

- a **Machine-readable (մեքենայարդրելի)** տարբերակը, որը պարունակում է լիցենզիան նկարագրող RDF/XML մետատվյալներ, որոնք հնարավորություն են տալիս վեբի վրա որոնման մեխանիզմների միջոցով տեղակայել **CC** լիցենզավորված նյութերը:

Science Commons-ը, **Creative Commons**-ի մի ճյուղն է, որի նպատակն է հեռացնել ոչ անհրաժեշտ իրավական և տեխնիկական արգելքները՝ հանուն գիտական համագործակցության և նորարարության: Բացի օգտակար պայմանագրերով ապահովելուց, նրանց հեռակա երկարատև տեսլականն է, միավորել հրատարակման, տվյալների ու լիցենզիայի հետ կապված խնդիրները՝ դարձնելով այն մեկ ինտեգրված հետազոտական գործընթաց:

Creative Commons-ի լիցենզիաներին առնչվող խնդիրները

Creative Commons-ի լիցենզիաները ստեղծվել են Միացյալ Նահանգներում և, հետևաբար, հիմնված են ամերիկյան օրենքի վրա: Սա նշանակում է, որ որոշ դրույթներ կիրառելի չեն աշխարհի այլ երկրների համար:

Creative Commons International-ը՝ **CC**-ի մեկ այլ տեսակ, նախատեսված է գուտ իրավաբանական տեսակի լիցենզիաներ կազմելու համար: Այն ընդգրկում է լիցենզիաների գրական և իրավաբանական թարգմանություններ՝ կատարված կամավորների կողմից, որպեսզի հնարավոր լինի այն կիրառել տվյալ երկրի գործող հեղինակային իրավունքի մասին օրենքի և իրավական համակարգի շրջանակներում:

National Creative Commons տեսակի լիցենզիաներ ընդունվել են Արգենտինայից մինչև Անգոլիա 35 երկրների կողմից, և 20 այլ երկրներ էլ պատրաստվում են կիրառել այս համակարգն իրենց երկրներում:

Նախքան **Creative Commons** տեսակի լիցենզիաների կիրառումն ընդունելը, պետք է հաշվի առնել մի քանի այլ գործոններ: Տվյալ ստեղծագործությունը պետք է լիցենզավորված լինի **Creative Commons** լիցենզիայով, լիցենզիա տվողները պետք է իրավունքներ ունենան, այսինքն հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործության իրավատերերը լինեն և հասկանան, թե ինչպես են գործում Creative Commons-ի լիցենզիաները: Մեկ կարևոր հանգամանք՝ կապված Creative Commons-ի լիցենզիաների հետ այն է, որ նրանք չեղյալ հայտարարվելու ենթակա չեն: Սա նշանակում է, որ հեղինակը չի կարող դադարեցնել իր ստեղծագործության օգտագործումը մի անձի կողմից, որն արդեն Creative Commons-ի լիցենզիայով այն օգտագործելու թույլտվություն է ձեռք բերել: Անշուշտ, նրանք ցանկացած ժամանակ կարող են դադարեցնել նյութերի սպասարկումը, բայց շրջանառությունից չեն կարող հանել այն ստեղծագործությունների օրինակները, որոնք Creative Commons-ի լիցենզիայով են լիցենզավորված:

Ավելին, հոնորարներ հավաքող ընկերությունները, որոնք հեղինակների անունից կառավարում են գույքային իրավունքները, որոշ իրավական ատյաններում չեն կարող իրենց անդամներին թույլ տալ **CC** լիցենզիայով լիցենզավորել իրենց գործերը հենց այն պատճառով, որ հեղինակը փոխանցել է իր իրավունքները հավաքող ընկերությանը:

Գրադարաններին առնչվող խնդիրները

Creative Commons լիցենզիաները երկու տեսանկյունից են առնչվում գրադարանների հետ:

Առաջինը՝ ստեղծագործողի/հեղինակի տեսանկյունն է: Մեծ մասամբ գրադարաններն ավելի շատ հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունների օգտագործողներ են, քան՝ ստեղծողները: Այնուամենայնիվ, գրադարանների հիմնական գործունեությունը՝ հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունների օգտագործումն է, որոնք գրադարանը ցանկության դեպքում կարող է տարածել, փոխ տալ այլ օգտվողների, օր. Կոնֆերանսի նյութերը, վեբկայքի վրա տեղադրված գրադարանի լուսանկարները, գրադարանի բլոգը, և այլն: (Կարևոր է հիշել, որ գրադարանը տվյալ նյութի օգտագործման համար լիցենզիա կարող է տալ, եթե իրեն է պատկանում այդ ստեղծագործության նկատմամբ հեղինակի իրավունքները):

Երկրորդը օգտագործողի տեսանկյունն է: Գրադարանները կարող են օգտվել միլիոնավոր **CC** լիցենզիայով լիցենզավորված նյութերից իրենց սեփական փաստաթղթերը ստեղծելիս: Օրինակ, վերցնել մի հարմար պատկերանիշ գրադարանային բրոշյուրի համար, կամ օգտագործել մի հատված վերջին ճանապարհորդական տեղեկատուից այցելուների համար վեբկայքի վրա տեղեկություն տեղադրելու նպատակով, կամ գրադարանի հավաքածուն լրացնել մեկ այլ գրքի մասին մեկնաբանությամբ:

2006թ. հունիսի տվյալներով մոտավորապես 140 միլիոն վեբկայքեր ընդունել են **CC** լիցենզիաներ: **CC** համարվում է ամենահայտնի բաց մատչելիությամբ լիցենզիաները, որի մասին շատ է գրվում մամուլում և քննարկվում է գիտնականների և փորձագետների կողմից: Որպես

տեղեկատվական մասնագետներ, գրադարանավարները պետք է տեղեկացված լինեն նման առաջընթացների մասին և ընդունակ լինեն իրենց խորհուրդներով օգնել հաճախորդներին՝ լուծելու թվային նյութերի օգտագործման հետ կապված խնդիրները: Որոշ հաստատություններում կան գրադարանավար-փորձագետներ՝ լուծելու թվային նյութերի օգտագործման հետ կապված իրավաբանական խնդիրները, և միևնույն ժամանակ գործընկերներին մշտապես իրազեկելու այս բարդ բնագավառում արագ կատարվող փոփոխությունների մասին:

Գրականություն

Creative Commons website

<http://creativecommons.org/>

Freedom fighter with a guilty conscience. Lawrence Lessig explains his mission to limit the cultural damage caused by copyright

<http://technology.guardian.co.uk/weekly/story/0,,1792117,00.html>

Unbounded Freedom. A guide to Creative Commons thinking for cultural organizations

<http://www.counterpoint-online.org/cgi-bin/item.cgi?id=618>

Գիտական ստեղծագործությունների բաց մատչելիություն

Ինչ է բաց մատչելիությունը

«**Բաց մատչելիություն** (ԲՄ)» տերմինն օգտագործելով ի նկատի ունենք ինտերնետում տեղադրված խմբագրված գրականության ազատ, անվճար մատչելիություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր օգտվողի կարդալ, ներբեռնել, արտատպել, տարածել, տպել, որոնել կամ հղումներ անել դեպի հոդվածների ամբողջական տեքստերը (Budapest Open Access Initiative): Երկու եղանակով կարելի է իրականացնել այս գործողությունները. **բաց մատչելիության ամսագրերի** և **բուհական առարկայական խորագրերով համակարգված շտեմարանների** միջոցով:

Բաց մատչելիության ամսագիրը բոլորի համար առցանց մատչելի ամսագիր է և կարիք չկա բաժանորդագրվել այն կարդալու համար, ինչպես նախկինում արվում էր՝ համաձայն ընդունված սովորության: Փոխարենը, այժմ նոր բիզնես մոդելներ են գործում, ներառելով հոդվածի, հովանավորության, գովազդի, կամ այս բոլոր գործոնների համար տրվող ընդհանուր վճարը: Խմբագրված բաց մատչելիության ամսագրեր, որոնք պարունակում են ստեղծագործություններ տարբեր բնագավառների, այդ թվում կենսաբանության և արդեն մոռացված արևադարձային հիվանդությունների վերաբերյալ, տեղադրվել են ինտերնետում Հանրային գիտական գրադարանի (Public Library of Science) կողմից, մինչդեռ BioMed Central-ը և Bioline International-ը համատեղ հրատարակել են 255 վերնագիր ամսագրեր: Ի հավելումս, մի շարք հայտնի հրատարակչություններ, ինչպիսիք են՝ Oxford University Press, Springer, Elsevier արդեն բաց մատչելիությամբ շատ ամսագրեր են տեղադրել: 2009թ. հոկտեմբերին Directory of Open Access Journals-ը (DOAJ) պարունակում է տարբեր թեմաներով 4,358 անվանում ամսագրեր: Բացի այդ, այնպիսի խոշոր հայտնի հրատարակիչներ, ինչպիսիք են Oxford University Press, Springer և Elsevier առաջարկում են հեղինակներին իրենց հոդվածները բաց մատչելիության ամսագրերում տեղադրելու տարբերակ՝ փոխարենը պահանջելով միայն հոդվածն առաքելու վարձը:

Բուհական շտեմարանը հանրության համար մատչելի արխիվ է, որտեղ տվյալ համալսարանի կամ ինստիտուտի դասախոսների կողմից հրատարակված ստեղծագործությունը դրվում է առցանց: Մրանք կարող են լինել դեռ չտպագրված և/կամ արդեն տպագրված ավարտուն հոդվածներ: Կարող են լինել նաև այլ տարբերակներ՝ կցված վերջնական խմբագրված տարբերակին (որը սովորաբար հրատարակվում է տպագիր ամսագրերում): Բայց հիմնականում ամսագիր հրատարակողների մեծամասնությունը համագործակցում են շտեմարանների հետ: Օգտագործելով փոխգործելի ծրագրեր, հայտնի որպես Open Archive Initiative (OAI) Compliant անվամբ, ավանդադրված ստեղծագործությունները կարելի է փնտրել ու ներբեռնել: (OAI) Compliant –ի օրինակներ են DSpace, E-Prints, Fedora կոչվող ծրագրերը: The Directory of Open Access Repositories (OpenDOAR)–ը փնտրովի գիտական բաց մատչելիության շտեմարանների բազա է:

Բաց մատչելիության արդյունավետ լինելու հարցը թե՛ քննարկման խնդիր է գիտնականների, հետազոտողների համալսարանի ադմինիստրացիայի, գրադարանավարների, ֆինանսավորող գործակալությունների, հրատարակչությունների և մտավոր հասարակության կողմից: Բաց մատչելիությունն ընդմիջտ փոխել է գիտական աշխատությունների համայնապատկերը:

Առաջին համաշխարհային **Բաց մատչելիության շաբաթը** տեղի ունեցավ 2009թ. հոկտեմբերին:

Որն է բաց մատչելիության խթանիչ ուժը

Այս գաղափարն առաջ տանելու համար տասնամյակներ են անցել: Գիտնականներն ու

բուհերում դասավանդող գիտական աշխատությունների հեղինակները միշտ էլ ձգտել են, որ իրենց գիտական աշխատանքները լայնորեն օգտագործվեն: Որքան շատ օգտվեն գիտական աշխատություններից, այնքան լավ թե իրենց կարիերայի, թե իրենց ինստիտուտի, ինչպես նաև հետագա ֆինանսավորման հնարավորություններ ստանալու համար, որից կշահի նաև գիտությունն ու հասարակությունը: Հայտնվելով թղթից դեպի էլեկտրոնային աշխատանքային միջավայրում, գիտաշխատողների աշխատանքի բնույթն արագ փոխվում է: Չնայած հաղորդակցման նոր միջոցներին, նրանք ակնատես են լինում շատ սահմանափակումների և արգելքների ոչ միայն իրենց, այլև իրենց նախորդների աշխատանքներից օգտվելու համար: Այս հանգամանքը պարտադրում է շատ հեղինակների փոխանցել իրենց գույքային իրավունքները հրատարակիչներին, այսպիսով՝ օտարելով իրենցից տվյալ ստեղծագործության տարածման իրավունքը, այսինքն՝ հեղինակներն արդեն իրավասու չեն լինում իրենց անձնական վերկայքի վրա տեղադրել իրենց աշխատությունները, կամ բաժանել այն իրենց ուսանողներին լսարանային պարապմունքների ժամանակ: Արդյունքում, գիտական աշխատությունները մեծ մասամբ մատչելի են դառնում այն ինստիտուտների, կամ գրադարանների համար, որոնք բաժանորդագրված են այդ ամսագրին: Բացի այն փաստից, որ ոչ մի գրադարան չի կարող իրեն թույլ տալ բաժանորդագրվել բոլոր ամսագրերի համար ամսագրերի օրեցօր աճող գնի և օրեցօր նվազող գրադարանային բյուջեի պատճառով, գրադարանները՝ մանրակրկիտ ուսումնասիրելով բոլոր ամսագրերի տվյալները, դադարեցնում են ոչ շատ անհրաժեշտ ամսագրերի բաժանորդագրությունը: Եվրոպական հանձնաժողովի կատարած վերջին ուսումնասիրությունները (2006թ.) ցույց տվեցին, որ 1975-1995թ. ընկած ժամանակահատվածում տպագիր ամսագրերի գինը բարձրացել է 300%-ով, որը սղաճի գնից էլ բարձր էր:

Ֆինանսավորող կազմակերպությունները ցանկանում են վստահ լինել, որ իրենց ֆինանսավորման հետևանքով կատարված գիտահետազոտական աշխատանքը մաքսիմալ չափով գիտահետազոտական արդյունք է տալիս (չափված այդ աշխատանքների մեջբերման/օգտագործման քանակով): Այնինչ, հիմնական ֆինանսավորումն ապահոված կազմակերպությունները երբեմն իրենք իրենց ֆինանսավորած գիտահետազոտական աշխատանքների արդյունքներին չեն կարողանում մուտք ունենալ սուկ այն պատճառով, որ իրենց հաստատությունը բաժանորդագրված չէ այդ ամսագրին, որտեղ հրատարակված են այդ աշխատությունները: Պետական ֆինանսավորում ստացող հետազոտություններից օգտվելու հանրության իրավունքների վերաբերյալ թեժ քննարկումները հանգեցրին նոր կանոնակարգերի մշակմանը: Օր. Միացյալ Նահանգների Ազգային առողջապահության ինստիտուտը ընդունեց կանոնակարգ, որով առաջարկվում էր հեղինակներին արխիվացնել իրենց ստեղծագործությունները, մինչդեռ Wellcome Trusts' Position Statement in Support of Open and Unrestricted Access to Published Research(2005)-ը առաջարկեց կատարել ստեղծագործությունների արխիվացում 6 ամսվա ընթացքում:

Այսպիսով, հեղինակների գիտական աշխատանքները հասանելի չեն իրենց գործընկերների համար, հետազոտողները չեն կարող օգտվել անհրաժեշտ գրականությունից, և գրադարաններն էլ չեն կարող բավարարել իրենց օգտվողների տեղեկատվական պահանջները: Այս դժգոհությունների պատճառով գիտնականների, ֆինանսավորող կազմակերպությունների, օրենսդիր մարմինների և գրադարանների կողմից փոփոխություններ կատարելու համաշխարհային շարժում սկսվեց:

Ռազմավարություն

Բաց մատչելիության ռազմավարության հիմնական փաստաթղթերը

2002. Budapest Open Access Initiative (BOAI)=Բուդապեշտի Բաց հասարակության ինստիտուտի նախաձեռնություն - Բաց հասարակության ինստիտուտի կողմից աջակցություն ստացած առաջին

հիմնական միջազգային փաստաթուղթը **Բաց մատչելիության** վերաբերյալ: Այն տալիս է բաց մատչելիության առաջին սահմանումը և ներկայացնում գիտական աշխատությունների մատչելիության ստրատեգիաներն ու նպատակները:

2003. Howard Hughes Medical Institute (HMMI)-ը և Max Planck Society-ն միասին կազմակերպեցին հանդիպումներ բաց մատչելիության վերաբերյալ, թե ինչպես է այն ընկալվում ֆինանսավորողների տեսանկյունից: HMMI-ի հանդիպման արդյունքը եղավ **"Bethesda Statement on Open Access"** փաստաթղթի ստեղծումը, իսկ Max Planck-ի կոնֆերանսի արդյունքը եղավ **"Berlin Declaration"** փաստաթղթի ստեղծումը: Երկու փաստաթղթերն էլ տալիս են բաց մատչելիության սահմանումը՝ հիմնական շեշտը դնելով ֆինանսավորողների դերի վրա:

2004. The UK House of Commons Sciences and Technology Committee. «Գիտական հրատարակություններ: Անվճար բոլորի համար» զեկույցը առաջարկեց, որպեսզի Անգլիայի բոլոր բուհերը և կառավարության կողմից ֆինանսավորվող հետազոտական հաստատությունները ստեղծեն անվճար բաց մատչելիությամբ առցանց բուհական շտեմարաններ և աջակցեն բաց մատչելիության ամսագրերի հրատարակմանը:

2005. The UK's Wellcome Trust-ը հետազոտությունը ֆինանսավորող առաջին կազմակերպությունն էր, որը հաստատեց բաց մատչելիության գաղափարը իրենց կողմից ֆինանսավորվող հետազոտությունների համար:

2006. European Commission =Եվրոպական հանձնաժողովը-ի կողմից ֆինանսավորված ուսումնասիրությունը Եվրոպայում հետազոտական հրատարակչությունների շուկաների վերաբերյալ հաստատեց, որպեսզի Եվրոպայի կողմից ֆինանսավորված հետազոտական հրատարակչությունները հասանելի լինեն բաց մատչելիության արխիվներում: Միացյալ Թագավորության յոթ հետազոտական խորհուրդներ (**7 UK Research Councils**) ընդունեցին ԲՄ մանդատներ՝ ի աջակցություն իրենց կողմից ֆինանսավորվող հետազոտության: 2006թ. Միացյալ Նահանգներում՝ համաձայն **Federal Research Public Access Act (2006)** փաստաթղթի, թույլատրվեց բաց մատչելիություն ապահովել 11 խոշոր պետական գործակալությունների կողմից օր. (Առողջապահության ազգային ինստիտուտ, Ազգային գիտական հիմնադրամ) ֆինանսավորվող հետազոտական աշխատությունների համար:

2007. The Ukraine Parliament= Ուկրաինայի պառլամենտը հաստատեց պետական ֆինանսավորում ստացող հետազոտական աշխատանքների բաց մատչելիությունը: Դեկտեմբերին **Եվրոպական հետազոտական խորհուրդը= European Research Council-ը** հրատարակեց «Բաց մատչելիության ուղեցույցներ»:

2008. European Commission Science in Society փորձական ծրագիր մշակվեց **7th Research framework Programm (FP7)**-ի հետազոտական ծրագրերի մոտավորապես 20 տոկոսը բաց մատչելիությամբ ապահովելու նպատակով: **The European University Association-ը** խրախուսեց ԲՄ գաղափարը համալսարանի առաջընթացի համար: **Հարվարդի համալսարանի արվեստի և գիտությունների ֆակուլտետը= Harvard University Faculty of Art and Sciences** դարձավ առաջին ամերիկյան ֆակուլտետը, որ միաձայն քվեարկեց ի օգուտ բաց մատչելիության (ԲՄ):

2009. Լիտվայի Գիտության վերաբերյալ նոր օրենքը (The New Lithuanian law on science) պահանջում է, որպեսզի պետական ֆինանսավորում ստացած հետազոտությունները բաց մատչելի լինեն առցանց: A Bill for a Federal Research Public Access Act-ը՝ ի սկզբանե առաջադրված 2006թ., կրկին ներկայացվեց Միացյալ Նահանգների Սենատում՝ պահանջելով բաց մատչելիություն (ԲՄ) 11 խոշոր պետական գործակալությունների կողմից ֆինանսավորում ստացած բոլոր հետազոտությունների համար:

Բաց մատչելիությունը և զարգացող ու անցումային շրջանի երկրները

2005. Բրազիլիայում կայացած միջազգային սեմինարի ժամանակ ընդունվեց **Մավվադորի հռչակագիրը բաց մատչելիության վերաբերյալ**: Այս փաստաթղթում ասվում է, որ եթե աշխարհում գիտությունը համընդհանուր է, գիտական տեղեկատվության մատչելիության բացառումն անընդունելի է: Բաց մատչելիությունը կմեծացնի զարգացող երկրների գիտնականների հնարավորությունները, թե գիտական ստեղծագործություններին մուտք ունենալու, և թե համընդհանուր գիտության զարգացմանը նպաստելու գործում՝ դրանով իսկ օգնելով նրանց գրել հետազոտական ստեղծագործություններ իրենց երկրներին հուզող թեմաների վերաբերյալ:

2006 թ. զեկույցով **Հարավային Աֆրիկայի Գիտությունների Ակադեմիան** պարզեց, որ վերջին 14 տարիների ընթացքում Հարավաֆրիկյան ամսագրերի մեկ էջն անգամ չի մեջբերվել իրենց միջազգային գործընկերների կողմից: Հարավաֆրիկյան 255 հավաստարմագրված ամսագրերի նվազ քան մեկ տասներորդն է օգտագործվել միջազգային գիտահետազոտական շտեմարաններում, չնայած այն հանգամանքին, որ Հարավային Աֆրիկյան հետազոտական ստեղծագործությունների հրատարակմամբ առաջնային դիրք է գրավում մայրցամաքում: Հարավային Աֆրիկայի և այլ զարգացող երկրների կողմից հետազոտական ստեղծագործությունների հրատարակման ավելացումը դրամատիկ նշանակություն ունի այն իմաստով, որ զարգացող երկրներում կատարված հետազոտական ստեղծագործությունները պետք է ընդգրկվեն համաշխարհային գիտական բազաների մեջ, որն այնքան անհրաժեշտ նշանակություն ունի այնպիսի գլոբալ խնդիրների լուծման համար, ինչպիսիք են կլիմայական փոփոխությունները և ինֆեկցիոն հիվանդությունների տարածումը: Քվեբեկի Համալսարանից (Universite du Quebec) Չոկի Հաջեմի և ուրիշների կողմից կատարված հետազոտությունը ցույց տվեց, որ բաց մատչելիությամբ և էլեկտրոնային տարբերակով տեղադրված հոդվածները 50%-ով ավել են մեջբերվում/օգտագործվում, քան նույն ամսագրի հոդվածների ոչ էլեկտրոնային տարբերակները:

Զարգացող երկրներից համաշխարհային տեղեկատվական բազաների մեջ գիտական տեղեկատվության ինտեգրման գաղափարն արտացոլված է **“National Open Access Policy for Developing Countires”** («Բաց մատչելիության ազգային ռազմավարություն զարգացող երկրների համար») փաստաթղթի նմուշային օրինակում: Այն հաստատվել է 2006թ. նոյեմբերին Հնդկաստանի գիտական ինստիտուտի, Հնդկաստանի գիտությունների ակադեմիայի և Մ.Ս. Սվամինատան հետազոտական հիմնադրամի համատեղ աշխատաժողովի ժամանակ, որտեղ ցավով նշվեց այն փաստը, որ աշխարհի բնակչության 80%-ը կազմող զարգացող երկրներում կատարվող յուրօրինակ հետազոտությունները մեծ մասամբ անտեսանելի են մնում միջազգային գիտական միջավայրի համար:

Զարգացող և անցումային շրջանի երկրները արդեն քայլեր են նախաձեռնել քարոզելու բաց մատչելիության գաղափարը, և կարևոր դեր են կատարում ամբողջ աշխարհում բաց մատչելիության կանոնակարգեր մշակելու գործում: Բաց հասարակության ինստիտուտի կողմից հովանավորություն ստանալով, **Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար (eIFL.net) միջազգային կազմակերպությունը** կազմակերպել է մի շարք սեմինարներ Չինաստանում, Լիտվայում, Լեհաստանում, Սերբիայում, Հարավային Աֆրիկայում և Ուկրաինայում: Արդյունքում, 2002թ. սկսած ստեղծվեցին բաց մատչելիության 165 պահոցներ, բաց մատչելիությամբ զբաղվող աշխատանքային խմբեր, աջակցություն ստացվեց ազգային հետազոտական հիմնադրամներից և ձևակերպվեցին ազգային փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Բելգորդի հռչակագիրը բելոռուսական, ռուսական և ուկրաինական համալսարանների կողմից: Ի հավելումն, Հոնգ Կոնգի համալսարանները ներկայացրին բաց մատչելիության ռազմավարություն պետական ֆինանսավորում ստացած հետազոտությունների համար և հետազոտական տեղեկատվության բաց մատչելիության գաղափարն

ընդգրկվեց նաև Ուկրաինայի համալսարանների Օլվիա հոչակագրի մեջ: Բաց մատչելիության վերաբերյալ բուհական փաստաթղթեր մշակվեցին Հարավային Աֆրիկայի Պրետորիայի համալսարանի, Ուկրաինայի Տերնոպլի պետական տեխնիկական համալսարանի, Ռուսաստանի գիտությունների ազգային ակադեմիայի մի քանի ինստիտուտների, ինչպես օրինակ՝ Տնտեսագիտության և Մաթեմատիկայի ինստիտուտի կողմից:

Հեղինակային իրավունքն ու բաց մատչելիությունը

Ներբեռնելու համար հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործություն, ինչպես օրինակ՝ գիտական աշխատություն, կամ տվյալներ պարունակող ֆայլեր, իրավատիրոջ թույլտվությունն է անհրաժեշտ: Հաստատությունները պետք է հեղինակային իրավունքի հստակ ռազմավարություն ունենան, որտեղ պարզ շարադրված է հեղինակների և հաստատությունների փոխհարաբերությունները, որտեղ պարզաբանվում է, թե ով է տվյալ աշխատության իրավատերը: Հեղինակները պետք է պահպանեն իրենց հեղինակային իրավունքը, այսինքն՝ ինստիտուտը, որպես գործատու չպետք է փորձի զբաղվել իր ծառայողի հեղինակային իրավունքի պահպանությամբ նրա գիտական աշխատությունները այլ անձանց հաղորդելիս: Այնուամենայնիվ, սա պետք է հստակ ամրագրված լինի հաստատությունների գործառույթներում, կամ ծառայողական պայմանագրերում: Նմանապես, հեղինակները ավանդական ամսագրերում իրենց աշխատությունները տպագրելու նպատակով պայմանագրեր կնքելու համար մասնագիտական ցուցումների կարիք կունենան, որպեսզի կարողանան իրենց աշխատությունները ավանդադրել նաև հաստատության պահոցներում: **The SURF Copyright in Higher Education** վեբկայքն օգտակար աղբյուր է հանդիսանում այս առումով:

Գրադարաններն ու բաց մատչելիությունը

Իրենց առաքելությունը համարելով հանրության համար տեղեկատվության մատչելիության ապահովումը, գրադարաններն այսպիսով դարձել են բաց մատչելիության ջատագովներ: Համամիտ լինելով «պարբերականների ճգնաժամի» վնասակար ազդեցությանը գիտության առաջընթացի վրա, գրադարաններն ամենայն ջանասիրությամբ ուղիներ են փնտրում հաղթահարելու ֆինանսական և իրավական արգելքները հետազոտական նյութերին մուտք ունենալու համար: Գրադարանները բուհերում հաճախ բաց մատչելիություն ապահովող առաջին վայրն են և գրադարանն է, որ կարող է դառնալ ինստիտուտի գրապահոցը: Աշխարհի շատ գրադարանային ասոցիացիաներ ընդունել են որոշումներ հանուն բաց մատչելիության աջակցության և նույնիսկ ստորագրել են հոչակագրեր այդ մասին: Գրադարանները պետք է միշտ տեղեկացված լինեն բաց մատչելիությամբ տեղադրված խմբագրված գիտական ստեղծագործությունների մասին և ապահովեն այդ ստեղծագործությունների մատչելիությունը գրադարանից օգտվողների համար:

Ինչ կարող են անել գրադարանները բաց մատչելիությունը խթանելու համար

- Ստեղծել բաց մատչելիություն, **OAI (Open Archive Initiative)** տեքստերի և տվյալների բաց մատչելիությամբ բուհական շտեմարաններ,
- Օգնել դասախոսներին ավանդադրել իրենց հետազոտական աշխատությունները հաստատության արխիվներում,
- Օգնել հրատարակելու բաց մատչելիության ամսագրեր և ստեղծել բաց ուսումնական շտեմարաններ,
- Օգնել տվյալների կառավարման և տարածման գործում,

- Բարձրաձայնել բաց մատչելիության մասին, լինել բաց մատչելիության խթանողներ,
- Ցույց տալ բաց մատչելիության առավելությունները տեղական համայնքների ոչ ակադեմիական հանրությանը, հատկապես շահույթ չհետապնդող հանրությանը. օրինակ՝ նախաձեռնել թվայնացման ծրագրեր տեղական հիմնարկների, խմբերի համար, տեղական կազմակերպությունների, թանգարանների, պատկերասրահների, այլ գրադարանների համար:

Հիմնված է Փիթեր Սուրբերի «Ինչպես կարող եք խթանել բաց մատչելիությունը» գրքին:

<http://www.earlham.edu/~peters/fos/do.htm>)

Գրականություն

Berlin Declaration on Open Access to knowledge in the sciences and humanities (2003)

<http://oa.mpg.de/openaccess-berlin/berlindeclaration.html>

Bethesda statement on Open Access publishing (2003)

<http://www.earlham.edu/~peters/fos/bethesda.htm>

Budapest Open Access Initiative (2002)

<http://www.soros.org/openaccess/>

Enhancing the debate on Open Access: a joint statement by the International Federation of Library Associations and Institutions and the International Publishers Association, May 2009.

<http://www.ifla.org/en/news/joint-iflaipa-statement-enhancing-the-debate-on-open-access-0>

Hajjem, C., Harnad, S., and Gingras, Y. Ten-year cross-disciplinary comparison of the growth of Open Access and how it increases research citation impact. IEEE Data Engineering Bulletin, 28 (4), 2005, pp. 39-47.

<http://eprints.ecs.soton.ac.uk/12906/>

IFLA statement on Open Access to scholarly literature and research documentation (2003)

<http://www.ifla.org/V/cdoc/open-access04.html>

Joint IFLA/IPA statement: Enhancing the Debate on Open Access (2009)

http://www.ifla.org/files/ifla-ipa/documents/enhancing-the-debate-on-open-access_final-20090505.pdf

National Open Access policy for developing countries (2006)

<http://scigate.ncsi.iisc.ernet.in/OAworkshop2006/presentations.htm>

Open access to research outputs: final report to RCUK. SQW Consulting and Loughborough University Library and Information Statistics Unit, September 2008.

<http://www.rcuk.ac.uk/research/outputs/access/default.htm>

Publish online, South African journals told. SciDev.net, 9th May 2006.

<http://www.scidev.net/en/news/publish-online-south-african-journals-told.html>

Salvador declaration on Open Access: the developing world perspective (2005)

<http://www.icml9.org/meetings/openaccess/public/documents/declaration.htm>

UK Research Councils' position statements on OA

<http://www.rcuk.ac.uk/research/outputs/access/default.htm> (scroll down)

Report on a strategic approach to research publishing in South Africa. Academy of Science of South Africa, March 2006.

http://www.assaf.org.za/images/assaf_strategic_research_publishing.pdf

Scientific publications. Free for all? United Kingdom, House of Commons Science and Technology Committee, 2004.

<http://www.publications.parliament.uk/pa/cm200304/cmselect/cmsctech/399/399.pdf>.

<http://www.publications.parliament.uk/pa/cm200304/cmselect/cmsctech/399/39902.htm>

Van Orsdel, Lee C. and Born, Kathleen. Periodicals Price Survey 2005: choosing sides. Library Journal, 15 April 2005.

<http://www.libraryjournal.com/article/CA516819.html>

What you can do to promote open access by Peter Suber

<http://www.earlham.edu/~peters/fos/do.htm>

Աղբյուրներ

Directory of Open Access Journals

<http://www.doaj.org/>

Directory of Open Access Repositories

<http://www.openoar.org>

DRIVER - Digital Repository Infrastructure Vision for European Research

<http://www.driverrepository.eu/>

eIFL.net Open Access Program.

<http://www.eifl.net/cps/sections/services/eifl-oa>

European Research Council Scientific Council Guidelines for Open Access

http://erc.europa.eu/pdf/ScC_Guidelines_Open_Access_revised_Dec07_FINAL.pdf

European Commission Science in Society Access to Scientific Information pages

<http://ec.europa.eu/research/science-society/index.cfm?fuseaction=public.topic&id=1660>

JISC and SURF Copyright Toolbox <http://copyrighttoolbox.surf.nl/copyrighttoolbox/> Designed to assist with a range of scholarly communications issues including author-publisher contracts.

A guide to developing Open Access through your digital repository. Open Access to Knowledge Law Project, 2007.

<http://www.oaklaw.qut.edu.au/node/32>

Sherpa/RoMEO guide to publisher copyright policies & self-archiving

<http://www.sherpa.ac.uk/romeo.php>

Open Access Directory
<http://oad.simmons.edu>

Open Access scholarly information sourcebook
<http://www.openoasis.org>

Open Access Week
www.openaccessweek.org

OSI Stories: Open access to scientific research—sharing information, saving lives.
Open Society Institute, January 2008.
http://www.soros.org/initiatives/information/focus/access/articles_publications/articles/openaccess_20070419

Registry of Open Access Repositories
<http://roar.eprints.org/>

Registry of Open Access Mandates
<http://www.eprints.org/openaccess/policysignup/>

Scholarly Publishing and Academic Resources Coalition (SPARC) <http://www.arl.org/sparc/> See also Author rights: using the SPARC Author Addendum to secure your rights as the author of a journal article <http://www.arl.org/sparc/author/addendum.shtml>

Science Commons Scholar's Copyright Project
<http://sciencecommons.org/projects/publishing/>

SURF Foundation Copyright in Higher Education
<http://www.surffoundation.nl/auteursrechten/en/Pages/Default.aspx>

Revised October 2009

Ծանոթագրություն:

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) կողմից հրատարակված հետևյալ երեք ամսագրերը մատչելի են **Directory of Open Access Journals (DOAJ)** բաց մատչելիության շտեմարանում

1. Armenian Journal of Mathematics
2. Armenian Journal of Physics
3. Proceedings of NAS RA : Mechanics

[DOAJ - http://www.doaj.org/doaj?func=findJournals&hybrid=&query=armenia](http://www.doaj.org/doaj?func=findJournals&hybrid=&query=armenia)

Հեղինակային իրավունքն ու առևտրի համաձայնագրերը

Ինչ է առևտրի համաձայնագիրը

Առևտրի համաձայնագրերը, հայտնի նաև «ազատ առևտրի համաձայնագրեր», անունով, բանակցելի համաձայնագրեր են երկու կամ ավելի պետությունների միջև արտոնյալ շուկայական հարաբերություններ ստեղծելու նպատակով՝ թե՛ ապրանքների, թե՛/կամ ծառայությունների բնագավառում: Կախված բանակցող կողմերի քանակից կամ ընդգրկված աշխարհագրական տարածքից, համաձայնագրերը կարող են լինել **բազմակողմ (multi-lateral)**, **տարածաշրջանային (regional)**, **կամ երկկողմ (bi-lateral)**: Առևտրի համաձայնագիրը սովորաբար կնքվում է ապրանքների առևտրային գործարքների համար, սակայն այն երբեմն օգտագործվում է նաև առևտրային ծառայությունների, ստանդարտների ճանաչման, մաքսատների հետ համագործակցության, մտավոր սեփականության իրավունքների պահպանության համար (ընդգրկելով հեղինակային իրավունքը): Առևտրի համաձայնագրերի մեջ հեղինակային իրավունքի ներառման փաստն էր, որ գրադարանները նույնպես առնչվեցին այս երևույթի հետ: Առևտրի համաձայնագիրը ստորագրող կողմերը պետք է սովորաբար փոփոխեն իրենց ազգային օրենքները համաձայնագրի պայմաններն ընդունելու համար:

Պրակտիկան

Բազմակողմ առևտրի համաձայնագրեր. Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) և Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր (TRIPS)

Բազմակողմ առևտրի համաձայնագրերը ղեկավարվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից, որը հիմնադրվել է 1995 թվականին:

Համակարգի «սրտում», հայտնի որպես՝ բազմակողմ առևտրի համակարգ, գտնվում են ԱՀԿ-ի համաձայնագրերը՝ ստորագրված և իրենց ազգային օրենքներում վավերացրած ԱՀԿ-ի անդամ 155 (2012թ. դրությամբ) երկրների կողմից: Այս համաձայնագրերը համարվում են միջազգային առևտրի իրավական հիմնական հիմքը:

Կարող է զարմանալի թվալ, որ մի կազմակերպություն, որն իրեն նվիրել է առևտրային արգելքները նվազեցնելու և մրցակցությունը քաջալերելու գործին, կընդգրկի իր փաթեթի մեջ նաև մտավոր սեփականության դրույթը, որը ստեղծում է սահմանափակ մենաշնորհներ: Բայց այս վիճահարույց քայլը կատարվեց, երբ 1995թ. ընդունվեց Մտավոր սեփականության իրավունքների՝ Առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը: Առաջին անգամ մտավոր սեփականության (ՄՍ) կանոնները ներառվեցին բազմակողմ առևտրային համակարգի մեջ, կապելով ՄՍ պաշտպանությունը և ուժեղացումը առևտրի այլ բնագավառների՝ գյուղատնտեսության և տեքստիլ արդյունաբերության հետ: TRIPS-ը տարածվեց ՄՍ բոլոր իրավունքների վրա, օր. հեղինակային իրավունք, գյուտեր, ապրանքային նշաններ և այլն, սակայն այն չի առնչվում թվային միջավայրում հեղինակային իրավունքի խնդրի հետ (այն կարգավորվում է ՄՍՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրով^{xxxv}):

TRIPS-ը ունեցավ հետևյալ կիրառությունները

- այն ներկայացրեց նվազագույն ՄՍ ստանդարտների սկզբունքը, որը նշանակում էր, որ բանակցությունների արդյունքում կնքված ցանկացած ՄՍ համաձայնագիր կարող է ավելի բարձր ստանդարտներ ստեղծել (հայտնի որպես TRIPS-plus),
- այն վերացրեց բազմաթիվ ազգային կարգավորող գործողությունները, փոխարենը առաջին

անգամ ներմուծելով գլոբալ հարկադրման կոմպոնենտը (անհամապատասխանությունը կանոններին կարող է հանգեցնել առևտրային պատժամիջոցների),

- այն մշակեց վեճերը կարգավորելու հետևյալ մեխանիզմը, որ յուրաքանչյուր ԱՀԿ անդամ երկիր իր վիճահարույց գործը պետք է ներկայացնի հատուկ նշանակված անկախ փորձագետների կոմիտեին: Մեկ հետաքրքիր երևույթ, որ ընդունվեց, այսպես կոչված «եռաստիճան թեստ»-ն էր, որով որոշվում էր հեղինակային իրավունքի բացառությունների և սահմանափակումների օրինականությունը: 2000թ. ԱՀԿ-ն ստիպեց Միացյալ Նահանգներին պատասխան տալ միջազգային պարտականությունները խախտելու համար: Գործը հարուցվել էր Եվրամիության կողմից, որը հանդես էր գալիս կատարողների իրավունքները պաշտպանող իռլանդական կազմակերպության անունից^{xxxvi}: Միացյալ Նահանգները հայտնվելով հեղինակային իրավունքի հետ առնչվող իրենց համար անսովոր դիրքում, այնուամենայնիվ, փոփոխության չենթարկեց իր օրենքը, փոխարենը շարունակեց վճարել տուգանքը^{xxxvii},
- այն ներկայացրեց առևտրային սեկտորների միջև «խաչաձև փոխհատուցման պայմաններ» ներկայացնելու կարողությունը: 1999թ., երբ ԱՀԿ փորձագետների խումբը Էկվադորի և Եվրամիության միջև բանանի ներմուծման հետ կապված վեճը լուծեց ի օգուտ Էկվադորի, վերջինս առաջարկեց TRIPS-ի կիրառումը դադարեցնելու պայմանով, կենտրոնանալ Եվրամիության համար այնպիսի զգայուն սեկտորների վրա, ինչպիսիք են՝ հեղինակային իրավունքը երաժշտական արդյունաբերությունում և աշխարհագրական նշումները ակոհոլային խմիչքների համար^{xxxviii}:

Զարգացող երկրները և TRIPS-ը

ԱՀԿ անդամակից երկրներից երեք քառորդը զարգացող կամ ամենաքիչ զարգացած երկրներն են, և հաշվարկների համաձայն մոտավորապես տասնհինգ զարգացած երկրներ են ակտիվ մասնակցություն ունենում TRIPS -ի բանակցություններին^{xxxix}, այդ թվում նաև մեկ քիչ զարգացած երկիր (Տանզանիա)^{xl}: Զարգացող երկրները ի սկզբանե դեմ էին ՄՍ ընդգրկմանը ԱՀԿ համընդհանուր առևտրային համակարգի մեջ: Արդյունքում նրանց հաջողվեց ընդգրկել երկու կարևոր հոդվածներ այն մասին, որ ՄՍ պաշտպանությունը ներկայացնելով, երկրները ստիպված կլինեն ձևակերպել կանոններն «այնպիսի եղանակով, որը նպաստում է սոցիալական և տնտեսական բարեկեցությանը»^{xli}: Այլ կեպ ասած, ՄՍ ինքնին վերջը չէ: ԱՀԿ-ի Doha Declaration on TRIPS and Public Health (2001)^{xlii} առաջացան այս երկու հոդվածների հիման վրա:

Թույլատրվեց անցումային ժամանակահատվածներ սահմանել իրականացման համար. զարգացող և անցումային շրջանի երկրներին լրացուցիչ տրվեց ևս չորս տարի, այսինքն, մինչև 2000թ. հունվարի 1-ը և ամենաքիչ զարգացած երկրներին (ներկայումս դրանք 32-ն են) մինչև 2006թ. հունվարի 1-ը, վերջիններիս համար ժամկետը երկարաձգվեց մինչև 2013թ. հուլիսի 1-ը: Մա ցույց է տալիս, որ TRIPS-ը խոր արմատներ է գցում երկրի ներքին իրավական համակարգում, բերում իր հետ ծախսեր, պահանջելով նվազագույն ստանդարտների, սահմանների վերահսկողության, ներքին նորմերի, ընթացակարգերի հզորացում և վերադաս մարմինների հետ համագործակցության ընդունում:

1995թ. Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ) Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ համաձայնագիր կնքեց զարգացող երկրներին TRIPS-ի կիրառման համար տեխնիկական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ: Այն ընդգրկում է իրավաբանական խորհրդատվություն, ազգային ՄՍ կառույցների ավտոմատացում և վերապատրաստում: Վերջին տարիներին ՄՍՀԿ-ի ծրագիրը քննադատվել է փորձագետների կողմից TRIPS-

plus մոտեցումն ընդունելու և զարգացող երկրներին լավագույն խորհրդատվություն չապահովելու համար: ՄՄՀԿ տեխնիկական աջակցության ծրագրի բարելավումը ՄՄՀԿ Զարգացման ծրագրի տարրերից մեկն է, որ առաջարկվում է ՄՄՀԿ-ի անդամ տասնչորս զարգացող երկրների կողմից ՄՄՀԿ-ի համար (See A Development Agenda for WIPO: International Policy Issues).

Երկկողմ առևտրի համաձայնագրեր

Պատճառներից մեկը, թե ինչու զարգացող երկրները ընդունեցին TRIPS-ը, այն էր, որ նրանք հավատում էին, որ ՄՄ բազմակողմ համակարգը վերջ կդնի այնպիսի երկկողմ ճնշմանը, ինչպիսին է «Special 301» ընթացակարգը: (Սա հնարավորություն է տալիս Միացյալ Նահանգների առևտրի ներկայացուցիչներին առևտրային պատժամիջոցներով սպառնալ այն երկրներին, որտեղ բնակվում են Միացյալ Նահանգների քաղաքացիներ և ունեն ՄՄ իրավունքներ): Այնուամենայնիվ, վերջին ժամանակներում, մասնավորապես Միացյալ Նահանգների և Եվրամիության նախաձեռնությամբ երկկողմ և տարածաշրջանային առևտրի համաձայնագրերի տարածումը ցույց է տալիս, որ մենք կրկին մտնում ենք երկկողմ փուլ և այս համաձայնագրերի մեծ մասը ընդունում են էքստրեմալ մոտեցում^{xliii}: Սա հայտնի է, որպես «կրկնակի փակուղու» (double backdoor) քաղաքականություն. քանի որ շատ քաղաքներ ընդունում են TRIPS-plus (higher=ավելի բարձր) ստանդարտներ, դրանք չափանիշ են դառնում և շատ հավանական է, որ կընդգրկվեն TRIPS-ի ցանկացած վերանայման ժամանակ^{xliv}:

Աշխարհի խոշորագույն առևտրային բլոկներից երկուսն այլ կերպ են անվանում իրենց համաձայնագրերը: Միացյալ Նահանգների համաձայնագրերը կոչվում են «Ազատ առևտրի համաձայնագրեր» (FTAs), մինչդեռ Եվրամիության համաձայնագրերը սովորաբար կոչվում են «Տնտեսական համագործակցության համաձայնագրեր» (EPAs): Երկու համաձայնագրերի բովանդակության մեծ մասը նվիրված է մտավոր սեփականության և մասնակից երկրի կողմից մտավոր սեփականության պաշտպանության բարձրագույն ստանդարտների ընդունման գաղափարին: (Թունիսի, Հորդանանի, Պաղեստինի Տնտեսական համագործակցության համաձայնագրեր), կամ «...պաշտպանության այնպիսի ստանդարտներ, որ բնորոշ են Միացյալ Նահանգների օրենքին» (Ազատ առևտրի համաձայնագրերի բանակցելի դրույթներ):

Ազատ առևտրի համաձայնագրերը պարունակում են հետևյալ դրույթները ՄՄ-ի վերաբերյալ

- TRIPS-ի համաձայն՝ պահպանության ժամկետի երկարաձգումը ևս 20 տարով,
- Միացյալ Նահանգների օրենքներին համապատասխան պարտականությունների ընդունում ընդդեմ պաշտպանության տեխնիկական միջոցների (ՊՏՄ) շրջանցման,
- պատասխանատվության պահանջ ինտերնետային ծառայություն տրամադրողներից նրանց ցանցի միջոցով հեղինակային իրավունքով պահպանված ստեղծագործությունների իրավունքի խախտմամբ տարածման դեպքում,
- օրինական ճանապարհով արտաքին շուկաներում վաճառված հեղինակային իրավունքով պահպանված ապրանքների նմանակված տարբերակների ներմուծման արգելում,
- պարտավորությունների պարտադիր կատարում TRIPS-ի պահանջներին համաձայն, հատկապես զարգացող երկրների համար ռեսուրսների բացակայության փաստը պարտավորությունների կատարումից խուսափելու պատճառ չի կարող հանդիսանալ,
- ՄՄՀԿ-ի 1996թ. ինտերնետային պայմանագրերին հետևելը,
- հեղինակային իրավունքի խախտման դեպքում պաշտպանվող կողմը պետք է ապացուցի, որ խախտում չի եղել:

Այս դրույթներից յուրաքանչյուրը կարող է բացասաբար ազդել գրադարանների վրա, որովհետև

կարևորվում է գրադարանների մասնակցությունը բանակցություններին:

Մասնավորապես զարգացող երկրները կարող են ունենալ ֆինանսական առումով այլ առաջնություններ, ինչպես օրինակ առողջապահությունն ու տարրական կրթությունը, որից ցանկալի չէ ռեսուրսներ վերցնել: Նման մտահոգությունների հետ կապված հասարակական բանավեճեր եղան, և երբեմն նույնիսկ բողոքներ մի շարք երկրներում, որտեղ երկկողմ առևտրի համաձայնագրերի վերաբերյալ բանակցություններ էին տարվում:

Գրադարաններին առնչվող խնդիրները

Միջազգային առևտրի համաձայնագրերի մեջ ընդգրկված հեղինակային իրավունքի դրույթները, որոնք թարգմանված են ազգային օրենքներում, կարող են մեծ ազդեցություն ունենալ գրադարանների գործունեության և հաճախորդներին մատուցվող ծառայությունների վրա: Նոր, ավելի խիստ պարտականություններ առաջադրելով, երկկողմ համաձայնագրերը կարող են խեղաթյուրել իրավունքների և սահմանափակումների հավասարակշռությունը, որը միջազգային համաձայնագրերում, և գուցե նաև ազգային օրենքներում ընդգրկված շատ կարևոր հանգամանք է գրադարանների համար: Սա նշանակում է, որ գրադարանները կարևոր համախոհներ են, որոնց հետ պարտավոր են խորհրդակցել ցանկացած առևտրային բանակցությունների ժամանակ: Մի քանի պատճառներով սա այնքան էլ դյուրին գործ չէ:

Ի տարբերություն քաղաքականության մշակման այլ ոլորտների, առևտրային բանակցությունները ընթանում են դռնփակ՝ թեթև, երբեմն էլ առանց հասարակական վերլուծության: Օրինակ, ԱՀԿ TRIPS Խորհուրդը, որը վերահսկում է TRIPS գործունեությունը, իր ժողովներն անց է կացնում գաղտնի՝ առանց քաղաքացիական հասարակությունից որևէ դիտորդի մասնակցության: Դժվարությամբ կարելի է գտնել նույնիսկ այնպիսի կարևոր տեղեկություն, ինչպիսին երկկողմ համաձայնագրերի ժամկետներն են, ինչպես նաև ձեռք բերել քննարկվող փաստաթղթերի պատճենները: Բանակցությունները վարում են առևտրի բնագավառի պաշտոնյաները, որոնք շատ քիչ գիտեն, կամ ընդհանրապես տեղյակ չեն, թե հեղինակային իրավունքի հետ կապված ինչպիսի խնդիրներ կարող են ծագել գրադարաններում, կրթության և մշակույթի ոլորտում: Բանակցությունների ժամանակ կարող են ընդունել TRIPS-plus-դրույթները, եթե փոխվում է բանակցությունների ոլորտը, տեղափոխվելով, օրինակ, գյուղատնտեսության բնագավառ:

Այնուամենայնիվ, գրադարանավարները և արհեստավարժ գրադարանային ասոցիացիաները պետք է աշխույժ լինեն, որպեսզի իրենց երկրների կառավարության կողմից առևտրային ցանկացած համաձայնագրերի վերաբերյալ բանակցություններին մասնակցելիս իրենք տեղեկացված լինեն, համոզվելու համար, որ հեղինակային իրավունքի հետ առնչվող որևէ դրույթ բացասաբար չի ազդի գիտության, կրթության և գիտական հետազոտությունների վրա, և անհրաժեշտություն առաջացնի հանդես գալ հակառակ առաջարկությամբ՝ անցանկալի հետևանքները վերացնելու համար:

Միշտ կարող եք օգնության դիմել: Կան շատ աղբյուրներ տեղեկատվություն ստանալու համար, օր. **bilaterals.org**, կայքէջը, որը «տեղեկացնում է այն ամենի մասին, ինչ տեղի չի ունենում ԱՀԿ-ում»: **eIFL.net** կոնսորցիումի անդամները աջակցություն ստանալու համար կարող են դիմել «Մտավոր սեփականություն» ծրագրին: Գրադարանային ասոցիացիաների և ինստիտուտների միջազգային դաշնությունը հրատարակել են որոշումներ ԱՀԿ-ի և TRIPS-ի վերաբերյալ:

Շուկայի մատչելիությունը մի երկրից մյուսը արտահանվող ապրանքների համար սահմանում է քվոտաներ, որոնք փոփոխվում են ժամանակ առ ժամանակ: Եթե երկիրը պարտավորվում է ապահովել օրինական պաշտպանություն հանուն շուկա մուտք ունենալու, ուրեմն, պետք է ընդմիջտ հետևի դրան: Այդ պատճառով, գրադարանային հանրությունը միշտ իր խոսքը պետք է ասի:

Գրականություն

Agreement on Trade-Related Aspects of Intellectual Property Rights (TRIPS), WTO 1995

How International Trade Agreements affect Libraries (EBLIDA Position Paper on International Trade Agreements), EBLIDA 2005

http://www.eblida.org/position/InternationalTradeAgreements_Position_September05.htm

IFLA Position on The World Trade Organization, IFLA 2001

<http://www.ifla.org/III/clm/p1/wto-fla.htm>

Multilateral agreements and a TRIPS-plus world: the World Intellectual Property Organization (WIPO), TRIPS Issues Papers 3(2003) by Sisule Musungu and Graham Dutfield, QUNO

Resource Book on TRIPS and Development, UNCTAD-ICTSD Project on IPRs and Sustainable Development (2005), Cambridge University Press

Tips for Trips – A Guide for Libraries and Librarians to the Agreement on Trade-Related Aspects of Intellectual Property Rights (TRIPS), IFLA 2002

<http://www.ifla.org/III/clm/p1/tt-e.htm>

www.bilaterals.org «Everything that's not happening at the WTO»

Միջազգային քաղաքականության մշակում. ՄՄՀԿ Զարգացման ծրագիրը

ԱՀԿ և ՄՄՀԿ

Հեղինակային իրավունքի մասին ազգային շատ օրենքներ հիմնված են հեղինակային իրավունքի վերաբերյալ միջազգային պայմանագրերի վրա: Միջազգային զարգացումների և քաղաքականության մշակումների մասին տեղեկացված լինելը օգնում է ավելի լավ հասկանալ, թե ինչպես են հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքները կիրառվում: Հեղինակային իրավունքի վերաբերյալ միջազգային օրակարգի մշակմամբ զբաղվող երկու հիմնական կազմակերպություններն էլ գտնվում են Ժնևում:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ղեկավարում և գործադրում է բազմակողմ առևտրի համաձայնագիրը, որը համընդհանուր առևտրային համակարգ է բերում հեղինակային իրավունքի գաղափարը: Ներկայումս 155 երկրներ անդամակցում են ԱՀԿ-ին (հետևաբար նաև TRIPS-ին): Ավելի քիչ զարգացած երկրներին ԱՀԿ-ին միանալու ժամկետ է տրված մինչև 2013թ. հուլիս ամիսը (Տես «Հեղինակային իրավունք և առևտրի համաձայնագրեր» գլուխը):

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՄՀԿ) ղեկավարում է հեղինակային իրավունքի վերաբերյալ երեք հիմնական պայմանագրերը.

- **Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիան (1886, վերանայված 1971 թ.)** – 165 անդամ պետություններ, հունիս, 2012թ. տվյալների համաձայն,
- **ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր (1996)** - 89 անդամ պետություն, հունիս, 2012թ. տվյալների համաձայն,
- **ՄՄՀԿ Կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիր (1996)** - 89 անդամ պետություն, հունիս, 2012թ. տվյալների համաձայն,

1974թ. ՄՄՀԿ-ն դարձավ Միավորված ազգերի մասնագիտացված գործակալություն՝ լիազորված ղեկավարելու Միավորված Ազգերի մի քանի այլ կազմակերպությունների գործունեությունը նորարարության, զարգացման և մտավոր սեփականության ոլորտներում: Գործունեության իրական պատկերն այլ է: ՄՄՀԿ-ի 2006-2007թ.թ. ծրագրի ստրատեգիական նպատակն է «խթանել/զարգացնել մտավոր սեփականության կուլտուրան»: Ի տարբերություն ՄԱԿ-ի մյուս ճյուղերի, ՄՄՀԿ-ն ֆինանսապես կախված չէ անդամ պետությունների անդամավճարներից, բայց փոխարենը այն ստանում է եկամուտների 90%-ը, որոնք ստացվում են արտոնագրերի գրանցման համակարգով սահմանված վճարումներից:

Այլ կերպ ասած, այն մեծ մասամբ ֆինանսավորվում է իրավատերերի կողմից, ովքեր շահագրգռված են մտավոր սեփականության պահպանությամբ: Սա իր արտացոլումն է գտնում ՄՄՀԿ-ի կազմում գործարարական ու արդյունաբերական խմբերի ընդգրկմամբ: Նրանցից ոմանք ՄՄՀԿ-ի հետ համագործակցելու վերաբերյալ համաձայնագրեր ունեն համընդհանուր աշխատաժողովներ կազմակերպելու նպատակով, և մինչև վերջերս Խորհրդի հանդիպումների ժամանակ դիտորդների գերիշխող թիվն են կազմում այս խմբերի ներկայացուցիչները:

ԱՀԿ-ի հետ ունենալով համագործակցության համաձայնագիր, ՄՄՀԿ քարտուղարությունը զարգացող երկրներին ապահովում է տեխնիկական աջակցությամբ և իրավաբանական խորհրդատվությամբ՝ ԱՀԿ TRIPS համաձայնագրի դրույթները կիրառելու գործում:

Ծրագիրը բազմիցս քննադատվել է ՄՄ-ից ստացված եկամուտի վրա չափից ավել ուշադրություն դարձնելու համար, մինչդեռ շատ քիչ ուշադրություն է դարձվում TRIPS-plus-ի քաջալերման համար կատարված ծախսերի վրա:

ՄՍՀԿ Զարգացման ծրագիրը

ՄՍՀԿ-ին անդամակցող որոշ պետություններ եկան այն կարծիքին, որ ՄՍՀԿ-ն թերանում է օգնել զարգացող երկրներին լուծելու մտավոր սեփականության հետ առնչվող խնդիրները: ՄՍՀԿ-ն ժամանակակից մտածելակերպի առումով համաքայլ չի ընթանում այլ կազմակերպությունների՝ Համաշխարհային բանկի (ՀԲ) և ԱՀԿ-ի հետ, որոնք անցել են գնահատման փուլերը՝ ապացուցելով, որ իրենց գործողությունները ուղղված են հանուն զարգացման: ՄՍՀԿ-ն փաստորեն հավատարիմ չի մնում իր բուն մանդատին, և պետք է իր բոլոր գործողություններում զարգացման չափանիշներ ունենա, և ղեկավարվի ՄԱԿ-ի «Հազարամյակի զարգացման հեռանկարներ» ծրագրով (UN Millenium Development Goals):

ՄՍՀԿ Գլխավոր համաժողովի ընթացքում, 2004թ. սեպտեմբերին, Բրազիլիան և Արգենտինան պատմական առաջարկություն արեցին՝ ստեղծել Զարգացման ծրագիր (Development Agenda) ՄՍՀԿ շրջանակներում: Միանալով Բոլիվիայի, Կուբայի, Դոմինիկյան Հանրապետության, Էկվադորի, Եգիպտոսի, Իրանի, Քենիայի, Պերուի, Սիեռա-Լեոնեի (պետություն Հարավային Աֆրիկայում), Հարավային Աֆրիկայի, Տանզանիայի և Վենեսուելայի հետ, այս խումբը հայտնի դարձավ «Ընկերներ հանուն զարգացման» անունով: Սա սկիզբ դրեց մի գործընթացի, որը պետք է ընթանար ոչ միայն ՄՍՀԿ ներսում, այլև տարածվեր ամբողջ աշխարհի քաղաքացիական հասարակության հետաքրքրված մարդկանց շրջանում:

Զարգացման ծրագրի նպատակն է ՄՍՀԿ-ն վերակողմնորոշել դեպի իր բուն նպատակը, այն է՝ խթանել մտավոր ստեղծագործական գործունեությունն ավելի, քան մտավոր սեփականությունը: Այլ կերպ ասած՝ մտավոր սեփականությունը դիտել որպես միջոց ավարտի՝ մտավոր ստեղծագործություն ստեղծելու համար, այլ ոչ թե սահմանափակվել միայն մտավոր սեփականության խթանմամբ: «Ընկերներ հանուն զարգացման» խումբը նշում է, որ զարգացման չափանիշը առաջնահերթ ուշադրության արժանի և ՄՍՀԿ-ի գործունեության ոլորտներում բազմակողմանի մոտեցում պահանջող խնդիր է, ավելի կարևոր է՝ քան տեխնիկական աջակցություն ցույց տալը: Ոչ միայն զարգացող, այլև բոլոր երկրները կշահեն նման հավասարակշռված մոտեցումից:

Ընդհանուր նպատակն է խթանել զարգացումն ու գիտելիքի մատչելիությունը բոլորի համար:

Ահա ծրագրի հիմնական կետերը.

- բարեփոխել ՄՍՀԿ ղեկավարման կառուցվածքը, ուժեղացնել անդամ երկրների դերը ՄՍՀԿ աշխատանքներում և հիմնել անկախ «Հետազոտական և գնահատման գրասենյակ» (independent “**Research and Evaluation Office**”) ՄՍՀԿ աշխատանքը վերահսկելու նպատակով,
- ապահովել քաղաքացիական հասարակության անդամների և պետական/հանրային շահեր ունեցող խմբերի լայն մասնակցությունը ՄՍՀԿ-ի քննարկումներին և գործունեությանը,
- ներկայացնել փաստերի վրա հիմնված տվյալներ Զարգացման ծրագրի արդյունքների և առաջարկված պայմանագրերի քննարկմանը լայն հասարակության մասնակցության վերաբերյալ,
- ընդունել տեխնիկական աջակցության վերաբերյալ այնպիսի ծրագրեր, որոնք կենտրոնացած են զարգացման վրա՝ զերծ խտրական բնույթից և կազմված բոլոր շահագրգիռ կողմերի կարիքները բավարարելու նպատակով,
- ընդունել Գիտության և տեխնոլոգիայի մատչելիության վերաբերյալ պայմանագրի առաջարկություն (Treaty on Access to Knowledge and Technology):

2004թ. սկսած Զարգացման ծրագրի քննարկումներ են տեղի ունենում Ժնևում, հատուկ ստեղծված հանձնաժողովների կողմից: Այս պրոցեսը դանդաղ է ընթանում, հենց սկզբից ընթացակարգային հարցերով խեղաթյուրելով այն: Այնուամենայնիվ, հիմնական խնդիրների շուրջ տարվող

քննարկումները սկսվել են, լսվում են և հույս կա, որ որոշ թեմաների վերաբերյալ 2007թ. համաձայնագրեր կընդունվեն: Շատ հասարակական կազմակերպությունների համար այս պրոցեսը շահավետ էր: Շահագրգիռ խմբերի կողքին արագ հայտնվեցին նոր հզոր միություններ, որոնք նույնպես մտահոգված էին, որ «մտավոր սեփականության մաքսիմալիստներ» (IP maximalists) կետը գերիշխող դիրք գրավի միջազգային քաղաքականության մշակման օրակարգում:

Հանձնարարականներ Չարգացման ծրագրի համար

Վերջին երեք տարիների ընթացքում անդամ պետությունները քննարկեցին 111 առաջարկ՝ առաջ քաշված առանձին երկրների հատուկ ստեղծված կոմիտեների կողմից – միջնատաշրջանային միջկառավարական հանդիպում ՄՍՀԿ Չարգացման օրակարգի վերաբերյալ (ապրիլ, հունիս, հուլիս 2005), Ժամանակավոր կոմիտեներ ՄՍՀԿ Չարգացման ծրագրին առնչվող առաջարկությունների համար (փետրվար, հունիս, 2006, փետրվար, հունիս, 2007): Հաջորդելով բանակցություններին, որոնք երբեմն շատ լարված էին ընթանում, Չարգացման ծրագրի համար արված 45 առաջարկությունները վերջնականապես ընդունվեցին ՄՍՀԿ Գլխավոր Ասամբլեայի կողմից 2007թ.:

Հանձնարարականները խմբավորված են հետևյալ 6 խմբերով

- Խումբ Ա. Տեխնիկական աջակցություն և ունակությունների ձևավորում
- Խումբ Բ. Չափանիշների ստեղծում, հմտություններ, հանրային ռազմավարություն և հանրային տիրույթ
- Խումբ Գ. Տեխնոլոգիայի փոխանցում, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ և գիտելիքի մատչելիություն
- Խումբ Դ. Գնահատում, արժեքավորում և ներգործության ուսումնասիրություններ
- Խումբ Ե. Բուհական հարցեր՝ կապված լիազորությունների և կառավարման հետ
- Խումբ Զ. Այլ խնդիրներ (խթանելով տեխնոլոգիական նորարարությունը հանուն «փոխադարձ առավելության ստեղծողների և օգտագործողների միջև... և հանուն իրավունքների և պարտականությունների հավասարակշռման»):

Գլխավոր ասամբլեայի կողմից առանձնացվեցին տասնինը առաջարկություններ անմիջապես կատարելու համար: Հանձնարարականների կատարումը վերահսկվում է նաև նոր ստեղծված **Չարգացման և մտավոր սեփականության կոմիտեի** կողմից (**CDIP=Committee on Development and Intellectual Property**), որը հանդիպումներ է կազմակերպում Ժնևում տարին երկու անգամ: Առաջին նստաշրջանը տեղի ունեցավ 2008թ. մարտին, որին մասնակցեցին 99 անդամ պետություն, 7 միջկառավարական կազմակերպություն և 31 հասարակական կազմակերպություն (այդ թվում նաև eIFL-ը): 2008թ. գործելակերպի կանոններ ընդունվեցին, աշխատանքային ծրագիր մշակվեց 45 հանձնարարականների համար՝ ընդգրկելով մարդկային և ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև այդ հանձնարարականների կոնկրետ կատարումները:

2009թ. Քարտուղարությունը առաջարկեց հանձնարարականների կատարման մեթոդոլոգիա մշակել, և մի խումբ թեմատիկ ծրագրեր՝ ուղղված կոնկրետ հանձնարարականների կատարման համար: Մինչ այդ Քարտուղարությունը Չարգացման ծրագրի կոորդինացման համար ստեղծեց առանձին Բաժին, որը կստեղծեր կենտրոնական փոխհամաձայնեցված համակարգ՝ համագործակցելով արտերկրի համախոհների հետ և իրականացնելով Չարգացման ծրագիրը ՄՍՀԿ շրջանակներում:

Գրադարանները և ՄՍՀԿ Զարգացման ծրագիրը

Միջազգային գրադարանային հանրությունը ի սկզբանե ակտիվորեն աջակցել է ՄՍՀԿ անդամ պետություններին, որոնք պատկանում էին Զարգացման ընկերների խմբին: **eIFL.net** և **IFLA**-ն առաջինն էին, որ ստորագրեցին **ՄՍՀԿ-ի ապագայի վերաբերյալ Ժնևի հռչակագիրը (2004թ.)**՝ ընդունված առաջատար գիտաշխատողների, Նոբելյան մրցանակակիր գիտնականների, բժշկության մատչելիության ջատագովների և անվճար(ազատ) համակարգչային ծրագրեր կազմողների կողմից: Հռչակագիրն առաջին հանրային փաստաթուղթն էր, որտեղ շարադրված էին բոլոր մտահոգություններն ու նպատակները, և որը կոչ էր անում հետաձգել նոր պայմանագրերի կնքումը, որոնք կընդլայնեին և կուժեղացնեին մենաշնորհը և հետագա արգելքներ կստեղծեին գիտելիքի մատչելիության համար: ՄՍՀԿ-ին կոչ է արվում, քաղաքացիական հասարակության լայն խմբերի մտահոգությունները հաշվի առնել, ինչպես օրինակ՝ սպառողների իրավունքների պաշտպանությունը, և առաջնություն տալ տարիներ շարունակ անտեսված կույր և թույլ տեսողություն ունեցողների, գրադարանների և կրթության խնդիրներին: Միջազգային գրադարանային հանրությունը **Գիտելիքի մատչելիություն=Access to Knowledge(A2K)** կոչվող հզոր կոալիցիայի մասնակիցներից է:

2004թ. սկսած eIFL.net-ը, IFLA-ն, և հետևաբար U.S. Library Copyright Alliance (LCA)-ը կանոնավոր հաճախել են Զարգացման ծրագրին, հեղինակային իրավունքին, ավանդական գիտությանը նվիրված ՄՍՀԿ Կոմիտեի և Գլխավոր ասամբլեայի 25 հանդիպումներին և նույնիսկ լրացուցիչ տեղեկատվական հանդիպումներին ու սեմինարներին: Գրադարանային պատվիրակության կազմում ընդգրկվել են գրադարանավարներ զարգացող և անցումային շրջանի երկրներից՝ այդ թվում առաջին գրադարանավարը Աֆրիկայից 2005թ.: Մոտ 30 պաշտոնական փաստաթղթեր և միջամտություններ են եղել՝ տեղեկացնելու անդամ պետությունների պատվիրակություններին տեղեկատվական հասարակության ու տնտեսական և սոցիալական զարգացման բնագավառում գրադարանավարների դերի մասին, գրադարանային ծառայությունների մեջ հեղինակային իրավունքի խնդիրների մասին, թե ինչպես հեղինակային իրավունքի վերաբերյալ գեր-սահմանափակող օրենքները կարող են խափանել գիտելիքի մատչելիությունը, զարգացումը, և ինչու ներկայիս բոլորի համար «միատեսակ մոտեցում»-ը անարդարացի է: Զարգացման ծրագիրը, որ հաշվի է առնում երկրի զարգացման անհրաժեշտությունն ու փուլերը, վճռորոշ է գրադարանների և գրադարաններից օգտվողների համար, որովհետև գիտելիքի և ուսման մատչելիությունը կենսական նշանակություն ունի տնտեսական, սոցիալական և մտավոր զարգացման համար:

Բանակցությունների ժամանակ, գրադարանները շեշտում են, որ ազգային ռազմավարություն մշակողների և ունակությունների զարգացման համար ցուցաբերած տեխնիկական աջակցությունը պետք զարգացման կողմնորոշվածություն ունենա և ընդգրկի բոլոր շահագրգիռ կողմերին՝ ներառելով գրադարանները, և պետք է խրախուսի այլ տարբերակների և ճկունությունների օգտագործումը, որ ՄՍՀԿ-ն մեծ դեր ունի պահպանելու հանրային տիրույթը՝ մեր համընդհանուր մշակութային և մտավոր ժառանգության մասը, որ ՄՍՀԿ-ն պետք է մշակի այլընտրանքային մոդելներ, որոնք կաջակցեն ստեղծագործական մտքին ու այնպիսի նորարարությանը, ինչպես օրինակ՝ հետազոտական ստեղծագործությունների բաց մատչելիությունն է և գիտելիքի մատչելիության պայմանագիրը: Մասնավորապես վիճահարույց խնդիրներ, որ առաջանում են զարգացող երկրների և հարուստ արդյունաբերական երկրների միջև, դա գիտելիքի մատչելիության, հեղինակային իրավունքի սահմանափակումների ու բացառությունների, և հանրային տիրույթի պահպանության խնդիրներն են ՄՍՀԿ շրջանակներում:

Ահա բոլոր այն խնդիրները, որոնց հետ առնչվում են գրադարանները:

- ազատ օգտագործման և սահմանափակումների վերաբերյալ դրույթները դժվար կլինի կիրառել նաև թվային միջավայրում,
- հեղինակային իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման պատճառով վնասվում է հանրության սեփականությունը, որը կրթվելու և ստեղծագործելու հնարավորություններ է ապահովում,
- թվային միջավայրում ի հայտ եկած նոր իրավական շերտերը արգելքներ են ստեղծում գիտելիքի մատչելիության համար,
- պաշտպանության տեխնիկական միջոցները արգելք են հանդիսանում գրադարանների համար՝ օգտվել օրինական ազատ օգտագործման հնարավորություններից և թվային մշակութային ժառանգությունը պահպանելուց,
- լիցենզիաների մեջ ընդգրկված անարդար և ոչ բանակցելի դրույթները, որոնք մեծ մասամբ վերաբերում են թվային բովանդակության վերահսկմանը, սահմանափակում են գրադարանի օրինական իրավունքները:

Գրադարաններին առնչվող Զարգացման ծրագրի հանձնարարականներն են.

- Խումբ Ա. Տեխնիկական աջակցություն և ունակությունների ձևավորում (հանձնարարականներ 5,8,10)
- Խումբ Բ. Չափանիշների ստեղծում, ճկունություններ, հանրային ռազմավարություն և հանրային սեփականություն (հանձնարարականներ 16,19,20,21,22,23)
- Խումբ Գ. Տեխնոլոգիայի փոխանցում, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ և գիտելիքի մատչելիություն (հանձնարարականներ 24,25,26)
- Խումբ Դ. Գնահատում, արժեքավորում և ներգործության ուսումնասիրություններ (հանձնարարականներ 33,35)
- Խումբ Ե. Բուհական հարցեր կապված լիազորությունների և կառավարման հետ (հանձնարարական 42)
- Խումբ Զ. Այլ խնդիրներ (հանձնարարական 45).

Զարգացման ծրագրի նպատակն է փոփոխություններ իրականացնել, ուստի, հանձնարարականների ընդունումը Զարգացման ծրագրի համար գործընթացի սկիզբն է: Անհրաժեշտ է, որպեսզի Զարգացման ծրագիրը իրականացվի ՄՄՀԿ-ի բոլոր հանձնաժողովների և միջոցառումների միջոցով և արդյունքը կլինի ճկունությունների կարևորության ավելի լավ ըմբռնումը՝ հատկապես զարգացող և ոչ այնքան զարգացած երկրների համար, և հավասարակշռված մտավոր սեփականության կրթություն՝ ընդգրկելով հեղինակային իրավունքի բացառություններն ու սահմանափակումները, հեղինակային իրավունքի խնդիրները գրադարաններում, հանրային սեփականությունը, արդար օրինակելի օրենքներ և գերմրցակցային լիցենզավորման ռեժիմներ:

Գրադարանի դերն է վերահսկել առաջընթացը՝ համոզված լինելու, որ հանձնարարականները կատարվում են խելամիտ կերպով և անդամ երկրների մտադրություններին համահունչ: Մինչ կոնկրետ հանձնարարականներ արդեն կատարվում են, կարևոր է, որպեսզի Զարգացման ծրագիրը չտրոհվի առանձին ծրագրերի և հետևի իր սկզբնական նպատակին, այն է՝ կրկին կողմնորոշել և կրկին հավասարակշռել ՄՄՀԿ-ի գործունեությունը:

Զարգացման ծրագիրն իր ազդեցությունը թողեց նաև ՄՄՀԿ այլ հանձնաժողովների աշխատանքի վրա՝ ընդգրկելով նաև հեղինակային և հարակից իրավունքների Մշտական հանձնաժողովը (SCCR=Standing Committee on Copyright and Related Rights)

SCCR-ը ունի նոր կետ օրակարգում «Բացառություններ և սահմանափակումներ» և

իրականացնում է հիմնական աշխատանքներ՝ ներառելով բացառությունների և սահմանափակումների վերաբերյալ մանրամասն ուսումնասիրությունների հրատարակությունը և կույրերի, թույլ տեսողների և ընթերցանության դժվարություն ունեցողների համար ՄՍՀԿ պայմանագրի քննարկումը, վերլուծությունը: Գրադարանային հանրությունը կմասնակցի SCCR-ին և CDIP=Committee on Development and Intellectual Property-ի ժողովներին՝ վերահսկելու Զարգացման ծրագրի առաջընթացը, լուսաբանելու բոլոր խնդիրները և առաջ քաշելու կոնստրուկտիվ առաջարկներ և մտքեր անդամ երկրներին և ՄՍՀԿ քարտուղարությանը: Մենք հավատում ենք, որ գրադարաններն ամենուր կշահեն ՄՍՀԿ Զարգացման ծրագրից, որովհետև գիտելիքի մատչելիությունը խնդիր է ոչ միայն զարգացող, այլ նաև զարգացած երկրների համար, քանի որ գիտելիքը համընդհանուր գործիք է և հավասարաչափ մատչելիությունը կարևոր է բոլորի համար: Գիտելիքի մատչելիության ապահովումը, վերջապես, գրադարանի գործունեության «սիրտն» է կազմում: Գրադարանավարները իրենց արհեստավարժ գրադարանային ասոցիացիաներով և այլ ներկայացուցիչներով հանդիսանում են հիմնական շահագրգիռ կողմերը և պետք է ակտիվ դեր խաղան այս համընդհանուր քննարկման ընթացքում: Գրադարանների ձայնը պետք է լսվի թե ազգային, թե միջազգային ասպարեզում, իսկ դրան կարելի է հասնել տեղեկացված լինելու միջոցով և տեղեկացնելով հեղինակային իրավունքով զբաղվող պաշտոնյաներին, թե որքան կարևոր է, որպեսզի գրադարաններում հավասարակշռված գործի հեղինակային իրավունքը:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

eIFL.net Issues and campaigns.

<http://www.eifl.net/cps/sections/services/eifl-ip/issues>

IFLA Committee on Copyright and other Legal Matters (CLM) See Statements or Publications for various statements made at WIPO)

<http://www.ifla.org/en/clm>

Library Copyright Alliance (USA)

<http://www.librarycopyrightalliance.org/>

A development agenda for WIPO. Why libraries care

http://www.eifl.net/cps/sections/docs/ip_docs/pcda-4-development

The Public Domain Why WIPO should care

<http://archive.ifla.org/III/clm/p1/CLM-pr08032007.htm>

Գրականություն

Access to Knowledge mailing list and public archive

<http://lists.essential.org/mailman/listinfo/a2k>

Geneva Declaration on the future of the World Intellectual Property Organization, 2004.

<http://www.cptech.org/ip/wipo/genevadeclaration.html>

Negotiating a 'Development Agenda' for the World Intellectual Property Organisation (WIPO) (2009) Edited by Martin Khor and Sangeeta Shashikant

<http://www.twinside.org.sg/title2/books/negotiating.a.development.htm>

Third World Network. Humanising intellectual property: developing countries launch new initiative (All articles originally published in *Third World Resurgence* magazine, Issue No. 171-172 (Nov-Dec 2004)) <http://www.twinside.org.sg/focus.htm>

WIPO administered Treaties <http://www.wipo.int/treaties/en/>

• Berne Convention for the Protection of Literary and Artistic Works
<http://www.wipo.int/treaties/en/ip/berne/>

• WIPO Copyright Treaty

<http://www.wipo.int/treaties/en/ip/wct/>

• WIPO Performances and Phonograms Treaty

<http://www.wipo.int/treaties/en/ip/wppt/>

WIPO Intellectual property for development

<http://www.wipo.int/ip-development/en/>

• Proposal by Argentina and Brazil for the Establishment of a Development Agenda for WIPO. WO/GA/31/12 September 24, 2004

http://www.wipo.int/meetings/en/doc_details.jsp?doc_id=32266

• Development Agenda for WIPO pages

<http://www.wipo.int/ip-development/en/agenda/>

• 45 adopted recommendations of the WIPO Development Agenda

<http://www.wipo.int/ip-development/en/agenda/recommendations.html>

Revised October 2009

Ծանոթագրություն

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է ստորև թվարկված միջազգային կազմակերպություններին, կոնվենցիաներին ու պայմանագրերին.

- Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը - 1993թ.
- Արբանյակների միջոցով հաղորդվող ծրագրեր կրող ազդանշանների տարածման մասին Բրյուսելյան կոնվենցիա -1993թ.
- Առևտրի համաշխարհային կազմակերպությանը – 2003թ.
- Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր (TRIPS) -2003թ.
- Գրական զեղարվեստական երկերի պահպանության մասին Բեռնի կոնվենցիա - 2000թ.
- Հնչյունագրեր արտադրողների իրավունքները իրենց հնչյունագրերը անօրինական պատճենահանումից պաշտպանելու մասին Ժնևի կոնվենցիա -2003թ.
- Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին Հռոմի կոնվենցիա - 2003թ.
- Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիր - 2005թ.
- Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Հեղինակային իրավունքի մասին պայմանագիր -2005թ.

Ազգային քաղաքականության մշակում. Հեղինակային իրավունքի մասին արդար օրենքների խրախուսում

Ազգային քաղաքականության մշակում՝ ի տարբերություն միջազգային քաղաքականության

Հեղինակային իրավունքի մասին շատ օրենքներ հիմնված են հեղինակային իրավունքի վերաբերյալ միջազգային համաձայնագրերին: Մա նշանակում է, որ երբ պետությունը ստորագրում է որևէ միջազգային համաձայնագիր, դրանով իսկ պարտավորվում է կատարել այդ համաձայնագրի դրույթները: Շատ երկրներ, այդ թվում նաև զարգացող երկրները, թերևս պարտավորված են միանալ այս երկու հիմնական համաձայնագրերին.

- 165 երկիր միացել է Բեռնի կոնվենցիային, որը հեղինակային իրավունքի մասին միջազգային օրենքի հիմքն է^{xliii}: Որոշ երկրներ, ինչպես օրինակ՝ Նորվեգիան, միացել է Բեռնի կոնվենցիային ավելի վաղ, 1896թ., իսկ մյուսները, ինչպես օրինակ՝ Միացյալ Նահանգները, ավելի ուշ, 1989թ.,
- 155 երկիր միացել է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), որը նշանակում է, որ նրանք կապված են 1995թ. ընդունված Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրով, հայտնի որպես TRIPS^{xliv}: ԱՀԿ-ի անդամ երկրներից երեք քառորդը զարգացող կամ թույլ զարգացած երկրներ են, վերջիններիս TRIPS-ին միանալու ժամկետ է տրված մինչև 2013թ.:

Անդամ երկրների թիվը ներկայացված է 2012թ. դրությամբ:

Որոշ երկրներ ստանձնել են լրացուցիչ պատասխանատվություն, մասնավորապես զարգացող և անցումային շրջանի երկրները: 2002թ. սկսած ՄՄՀԿ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրին միացած վաթսուն երկրներից հիսուներեքը զարգացող կամ անցումային շրջանի երկրներ են: Որոշ երկրներ՝ կնքելով երկկողմ առևտրի համաձայնագրեր, միգուցե ստիպված լինեն միանալ Հեղինակային իրավունքի մասին պայմանագրին «փաթեթ»-ի մի մաս կազմելու նպատակով (Հեղինակային իրավունք և առևտրի պայմանագրեր):

Յուրաքանչյուր նոր դրույթ համաձայնագրի մեջ որոշակիորեն նշանակում է հեղինակային իրավունքի ազգային օրենքի փոփոխություն: Մա նշանակում է, որ շատ երկրներ, հատկապես զարգացող կամ անցումային շրջանի երկրները, գտնվում են հեղինակային իրավունքի մասին ազգային օրենքի մեջ փոփոխություններ կատարելու փուլում: Միջազգային համաձայնագրերը ինչ-որ չափով ձկուն են, որը տարբեր իրավական համակարգ ունեցող երկրներին հնարավորություն է տալիս կիրառել այդ համաձայնագրերի դրույթները:

Գրադարանավարները պետք է համոզված լինեն, որ հեղինակային իրավունքի մասին օրենքի ձկունությունը կօգնի ընդունել իրենց ազգային օրենքները:

Գրադարանավարները՝ որպես շահագրգիռ կողմեր

Հեղինակային իրավունքի մասին օրենքը կարգավորում է մարդկային ստեղծագործ մտքի արդյունքների ու տեղեկատվության տիրապետումը, վերահսկումը և տարածումը: Գրադարանները հնարավորություն են տալիս մարդկանց փնտրել, մուտք ունենալ և օգտագործել տեղեկատվությունն ու գիտական ստեղծագործությունները: Հեղինակային իրավունքը, հետևաբար, մեծ խնդիր է գրադարանների համար, որովհետև այն ղեկավարում է գրադարանային հիմնական գործառույթը:

Հեղինակային իրավունքը ուղղակիորեն ազդում է գրադարանային այնպիսի

ծառայությունների վրա, որոնց նպատակն է ապահովել ուսումնական շտեմարանների, գիտական ու հետազոտական տեղեկատվության մատչելիությունը. շատ կարևոր մի գործոն ցանկացած երկրի կրթության ու ուսուցման համար: Գրադարանավարները և նրանց ներկայացնող կազմակերպությունները կարևոր շահագրգիռ կողմեր են ցանկացած ազգային քննարկումների, բանավեճերի ժամանակ և պետք է անպայման նրանց հետ խորհրդակցել, երբ քննարկվում են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքը, կամ հարկադիր կատարումները: Սա նշանակում է, որ գրադարանի ներկայացուցիչները կանոնավոր կապի մեջ պետք է լինեն հեղինակային իրավունքով զբաղվող կազմակերպությունների և պաշտոնատար անձանց հետ և պետք է տեղեկացված լինեն ցանկացած ազգային նվաճումների մասին: Գրադարանավարները կարող են ներկայացնել փաստաթղթեր իրենց դիրքորոշման վերաբերյալ, հաճախել լսումներին և օրենքում իրենց փոփոխությունները առաջադրել:

Մասնավորապես, գրադարանավարները պետք է համոզված լինեն, որ

- ազատ օգտագործումն ու սահմանափակումները բավարար են՝ ապահովելու ժամանակակից տեղեկատվական ծառայության և ուսումնական միջավայրի պահանջները,
- առկա ազատ օգտագործումն ու սահմանափակումները տարածվում են նաև թվային միջավայրի վրա և նոր թվային հնարավորություններին համապատասխան նոր սահմանափակումներ են ներկայացվում,
- հանրության սեփականությունը պաշտպանված է խախտումներից,
- թվային տեղեկատվության վերաբերյալ նոր իրավունքները դիմակայվում են,
- պաշտպանության տեխնիկական միջոցները չեն խանգարում գրադարաններին օգտվել իրենց օրինական ազատ օգտագործումից, կամ իրենց համընդհանուր մշակութային արժեքները պահպանելուց,
- Լիցենզային պայմանագրում նշված պայմանները չեն հակասում օրենքով հաստատված ազատ օգտագործման դրույթներին:

Գրադարանները՝ որպես խորհրդատուներ

Ամեն օր գրադարանավարները տեղեկատվություն են ձեռք բերում և արձագանքում ուսանողների, գիտնականների և հասարակության անդամների կողմից ստացված խնդրանքներին: Գրադարանավարները աշխատում են տեղեկատվության և տեխնոլոգիայի փոխկապակցված միջավայրում և քաջ գիտակցում են կրթված հասարակության պահանջները: Ինչպես հեղինակային իրավունքի, այնպես էլ գրադարանների հետ առնչվող խնդիրների վերաբերյալ գրադարանավարները կարող են գործնական խորհուրդներ տալ քաղաքականությունը մշակողներին, օր. բաց մատչելիությամբ հրատարակության, անհայտ հեղինակի ստեղծագործությունների և շատ այլ խնդիրների վերաբերյալ, որոնք առաջանում են տեղեկատվական միջավայրի հաճախակի փոփոխության հետևանքով:

Գրադարանները՝ որպես համախոհներ

Աշխատանքը և համագործակցությունը ցանցում գրադարանավարի աշխատանքի անբաժանելի մասն է կազմում: Համագործակցությունն այլ համախոհների հետ օգնում է հաջողությամբ հասնել բոլոր նպատակներին:

Նման համախոհներ կարող են լինել գիտակրթական հաստատությունները, հաշմանդամների խմբերը, սպառողները, թվային միջավայրից օգտվողների իրավունքների պաշտպանության միությունները, ազատ համակարգչային ծրագրեր խրախուսողները: Կարող են լինել նաև ընդհանուր

խնդիրներ ունեցող այլ խմբեր:

Միջազգային գրադարանային հանրությունը միշտ պատրաստ է աջակցություն ցույց տալ: Միջազգային գրադարանային ասոցիացիաների դաշնության հեղինակային իրավունքի և հեղինակային իրավունքի հետ առնչվող այլ իրավական խնդիրներով զբաղվող կոմիտեին անդամակցում են քսան երկրներ: «Էլեկտրոնային տեղեկատվություն գրադարանների համար» (eIFL.net) կոնսորցիումի անդամները կարող են խորհուրդ հարցնել հեղինակային իրավունքի մասին ծրագրի կոորդինատորից: Ազգային գրադարանների ասոցիացիան կամ հարևան երկրի գրադարանների ասոցիացիան կարող են փոխանակել իրենց փորձը:

Փաստաթղթեր գրադարանների դիրքորոշման վերաբերյալ

IFLA Committee on Copyright and Other Legal Matters (CLM)

<http://www.ifla.org/III/clm/copyr.htm>

Electronic Information for Libraries (eIFL.net)

<http://www.eifl.net>

Գրականություն

WIPO member states: contact information for national copyright offices

<http://www.wipo.int/members/en/>

Footnotes

- i <http://www.drm.info/>
- ii WCT Arts 11 & 12, WPPT Arts 18 & 19
- iii EU copyright Directive Arts 6 and 7
- iv <http://www.wired.com/news/privacy/0,1848,69601,00.html>
- v <http://geemodo.blogspot.com/2006/11/internet-archive-secures-exemption-to.html>
- vi Article 5.2(c)
- vii Article 5.2(b)
- viii http://www.eff.org/IP/DMCA/unintended_consequences.php
- ix <http://www.apig.org.uk/current-activities/apig-inquiry-into-digital-rights-management.html>
- x Robinson, Gérard Legal Access-The Mediating Role Of The RROs In Copyright Licensing
- xi <http://www.copywatch.org/index.htm>
- xii Collective Management in Reprography WIPO/IFRRO
- xiii www.ifrro.org/upload/documents/Emergent-RROs-1997.pdf
- xiv <http://www.cla.co.uk/about/vision.html>
- xv www.ifrro.org/upload/documents/Emergent-RROs-1997.pdf
- xvi Nwauche S. Enyinna (2006). A Development Oriented Intellectual Property Regime for Africa
- xvii The PLR International Network, coordinated by the UK registrar for PLR, provides assistance to countries on PLR. <http://www.plrinternational.com/>
- xviii Australia, Austria, Canada, Denmark, Estonia, Faroe Islands, Finland, Germany, Greenland, Iceland, Israel, Latvia, Lithuania, Netherlands, New Zealand, Norway, Slovenia, Sweden, United Kingdom
- Xix Belgium, Croatia, Cyprus, Czech Republic, France, Greece, Hungary, Ireland, Italy, Japan, Kazakhstan, Liechtenstein, Luxembourg, Malta, Mauritius, Poland, Portugal, Romania, Slovak Republic, Spain, Switzerland
- Xx <http://www.kum.dk/sw5573.asp>
- Xxi [http://www.plr.uk.com/trends/pressrelease/feb2006\(1\).htm](http://www.plr.uk.com/trends/pressrelease/feb2006(1).htm)
- Xxii IFLA CLM Background Paper on Public Lending Right
- Xxiii <http://www.ifla.org/III/clm/p1/PublicLendingRigh.htm>
- Xxiv Feist Publications, Inc. V. Rural Tel. Service Co.
<http://www.techlawjournal.com/cong106/database/19910327feist.htm>
- xxv DG Internal Market and Services Working Paper. First evaluation of Directive 96/9/EC on the legal protection of databases
- xxvi Directive 96/9/EC on the legal protection of databases
- xxvii <http://news.independent.co.uk/people/obituaries/article1838327.ece>
- xxviii http://www.intellectual-property.gov.uk/resources/other_ip_rights/database_right.htm
- xxix http://ec.europa.eu/internal_market/copyright/copyright-infso/copyright-infso_en.htm
- xxx Evaluation of Directive 96/9/EC on the legal protection of databases p.5
- xxxi http://www.competition-commission.org.uk/rep_pub/reports/2001/457reed.htm#summary
- xxxii The Legal Protection of Databases (Submitted by the European Community and its Member States) WIPO SCCR/8http://www.wipo.int/meetings/en/doc_details.jsp?doc_id=2323
- xxxiii James Boyle: A Natural Experiment, Financial Times, 22.11.2004
- xxxiv Article 11(3) & Recital 56
- xxxv <http://www.wipo.int/treaties/en/ip/wct/>
- xxxvi Toward Supranational Copyright Law? The WTO Panel Decision and the 'Three-Step Test' for Copyright Exceptions http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=253867
- xxxvii <http://www.bmr.org/page/article-3>
- xxxviii www-rcf.usc.edu/~enn/text/Ecuador%20revised%2005.doc
- xxxix Gervais, D.J. Intellectual Property & Development: towards a strategy, draft of Feb. 1,2006
- xl Resource Book on TRIPS and Development p. 715

xli TRIPS Article 7 Objectives and Article 8 Principles

xlii http://www.wto.org/English/tratop_e/dda_e/dohaexplained_e.htm

xliii Gervais, D.J. Intellectual Property & Development: towards a strategy, draft of Feb. 1, 2006

xliv Gervais, D.J. Intellectual Property & Development: towards a strategy, draft of Feb. 1, 2006

xlv Berne Convention (1886) <http://www.wipo.int/treaties/en/ip/berne/>

xlvi http://www.wto.org/english/tratop_e/trips_e/trips_e.htm

